

7627

3628

ՅՈՂԷ ՔԱՋԱՆՈՒՆԻ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ

ԱՆԵԼԻՔ ԶՈՒՆԻ ԱՅԼ ԵՐՍ




ՎԻԵՆՆԱ

1923

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO



100

1914

329.14
P-23

ՅՈՎՀ. ՔԱԶԱՋՆՈՒՆԻ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԱՆԵԼԻՔ ՁՈՒՆԻ ԱՅԼ ԵՒՍ



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1923

84068-42

84068-42

84068-42

84068-42

531-91



Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ի Ն

Մի զեկուցագիր է սա, որ ներկայացրել եմ Հ.Յ. Դաշնակցու-
թեան արտասահմանեան մարմինների Խորհրդաժողովին, սոյն 1923 թ.
Ապրիլ ամսին:

Խորապէս համոզւած լինելով, որ այստեղ արծարծւած խնդիրները
ամենալուրջ մտածումների առարկայ պիտի լինեն ոչ միայն կուսակցա-
կանների, այլ եւ ամեն մի հայ մարդու համար, պարտք համարեցի
տպագրութեան տալ ու հանրային սեփականութիւն դարձնել զեկու-
ցագիրս:

Տպագրում եմ ամփոփոխ ու ամբողջովին, բաց ի վերջի երեք-չորս
էջերից, որ պարունակում են կօնկրետ առաջարկներ ու վերապահելու
են միայն կուսակցական շրջանների համար:

Բուքրէշտ, Յուլիս 1923 թ.:

Յ. Բ.

Հ. Բ. 2001

ԸՆԿԵՐՆԵՐ

Ինձ համար շատ երկար ու շատ ծանր մտածումների առարկայ են եղել այս խնդիրները: Տարակոյս չունեմ, որ նոյնը եւ ձեզ համար: Չը գիտեմ միայն, թէ արդեօք դձիւ էլ յանգել էք նոյն եղրակացութիւններին: Վախենում եմ թէ՛ ոչ: Ըւելին ասեմ. վախենում եմ թէ իմ վերջի եղրակացութիւնը — այն շատ դժար արտասանելի խօսքը, որ ես խղճի մտօք պիտի ասեմ այստեղ — վախենում եմ թէ այդ խօսքը ընդհանուր վրդովմունք, գուցէ եւ վայրոյթ առաջ բերէ խորհրդածողովի մէջ:

Դրան պատրաստ եմ ես:

Խնդրում եմ միայն հաւատաք՝ Ու) որ ինձ համար աւելի ծանր էր գրել ու ստորագրել այդ խօսքը, քան ձեզ համար՝ լսել այն իմ բերանից. Բ) որ թեթեւամտութեան կամ փոքրհոգութեան, անցողակի տրամադրութիւնների կամ հապճեպ եղրակացութիւնների արգիւնք չէ այդ խօսքը, այլ խոր համոզմունքի ու խոր գիտակցութեան, — այնչափ, ի հարկէ, որչափ ընդունակ եմ ես գիտակցելու ու ըմբռնելու զրուածութիւնը, դատելու, գնահատելու եւ ընտրութիւն անելու:

Ապա շատ խնդրում եմ՝ մի քիչ համբերատար լինէք ու աշխատէք մօտենալ հարցերին անկաշկանդ մտքով — մի բան, որ՝ այնքան էլ հեշտ չէ կուսակցական կեանքով ապրող ու կուսակցօրէն մտածող մարդկանց համար:

Կերեցէք խնդիրիս անվայելութիւնը: Ուրիշ պարագաների մէջ այս կարգի խօսքերը կը լինէին աւելորդ ու անտեղի. բայց զեկուցմանս բացառիկ բովանդակութիւնը հարկադրում է ինձ ու իրաւունք տալիս՝ կոչ անելու ձեր կատարեալ լայնամտութեան ու պարտաճանաչութեան գերագոյն գիտակցութեան:

Անցնում եմ նիւթիս:

Եզրակացութիւններս լայնօրէն հիմնաւորելու համար մեծ կարիք եմ զգում թարմացնելու ձեր յիշողութեան մէջ՝ մի քիչ հանգամանքօրէն՝ հայ քաղաքական դատի ապրած փուլերը — Մեծ պատերազմից սկսած մինչեւ Լոլանի Կոնֆերանսը — ու Հ. Յ. Գաշնակցութեան կատարած դերը այդ շրջանում: Բայց վախճում եմ, թէ ի չարը գործադրած լինեմ ձեր ուշադրութիւնը: Ուստի կըճատում եմ խօսքս ու ներկայացնում եմ ձեզ մի շատ սեղմ, ամփոփ ու չոր տեսութիւն միայն: Թերեւս սա էլ ծանրաբեռնի ժողովը, բայց այլ կերպ չեմ կարող մօտենալ ասելիքիս:

Ուրեմն՝ ի՞նչ աստիճաններ է անցել հայ քաղաքական դատը 1914 թւականից սկսած, ի՞նչպէս են զարգացել, դասաւորւել ու միմեանց յաջորդել գէպերը եւ ո՞ր են բերել. մասնաւորապէս՝ ի՞նչ է արել մեր կուսակցութիւնը եւ ի՞նչ ունի անելու սրանից յետոյ:

Երբ կենտրոնանում եմ այս հարցերի վրայ, վերյիշում եմ մօտաւոր անցեալը, զտում եմ էականը ոչ-էականից, անջատում եմ հիմնական գծերը երկրորդական կամ պատահական մանրամասնութիւններից ու զասուրդում եմ անցքերը ժամանակագրական կարգով՝ մտքիս մէջ պատկերանում է հետեւեալը:

1. 1914 թվականի աշնան սկիզբներին, երբ Թիւրքիան գեռ-
չէր մտել պատերազմի մէջ, բայց արդէն պատրաստութիւններ էր անում
մտնելու, Անդրկովկասում սկսեցին կազմակերպել՝ մեծ եռանդով ու
մանաւանդ մեծ աղմուկով՝ հայ կամաւորական խմբեր:

Հ. Յ. Գաշնակցութիւնը, հակառակ իր ընդհանուր ժողովին, որ
հազիւ մի քանի շաբաթ առաջ՝ էրդրումում՝ բացասական որոշում
էր տւել, — գործօն մասնակցութիւն ունեցաւ թէ՛ խմբերի կազմա-
կերպման եւ թէ՛ նրանց ետագայ ռազմական գործողութիւնների մէջ,
Թիւրքիայի դէմ:

Այսպիսի մի ծանրակշիռ ու ամենալուրջ հետեւանքներով յղի
ձեռնարկութեան մէջ, Հ. Յ. Գաշնակցութեան Անդրկովկասի մարմին-
ներն ու անհատ գործիչները հակառակ գնացին կոռսակցութեան գերա-
գոյն մարմնի՝ ընդհանուր ժողովի՝ կամքին:

Ինչո՞ւ:

Ի միջի այլոց (ու մասնաւորապէս) այն պատճառով, որ վարակւել
էին զանգւածային տրամադրութիւններից, տարւել էին տարերային
հոսանքով:

Այս օրինակը պարտադրում է յիշելու եւ յիշեցնելու, որ Գաշ-
նակցութիւնը՝ Անդրկովկասի մէջ՝ անցեալներումն էլ եղել է ոչ այն-
քան հեղինակ ու նախաձեռնող, որքան հետեւող այն շարժումների,
որոնք առաջ են եկել իրանից անկախ: Այսպէս էր 1903 թվականին
(ըմբոստացում ու ցոյցեր եկեղեցական կալաճքների գրաւման առ-
թիւ), այսպէս էր 1905—1906 թվականներին (հայ-թաթարական
արիւնահեղ ընդհարումներ), այսպէս էր նաեւ բանւորական առաջի մեծ
շարժումների ժամանակ (1903—1906 թվականներին), երբ Գաշնակ-
ցութիւնը ղեկավարւում էր՝ Բագում, Թիֆլիսում ու Բաթումում:

օտար սօցիալիստական կուսակցութիւնների քաղաքականութիւնով ու գործելու եղանակներով:

Նոյն բնորոշ գիծը արտայայտւել է՝ ինչպէս կը տեսնենք մի քիչ յետոյ՝ նաեւ մեր ետագայ գործունէութեան մէջ:

Պարապ բան կը լինէր հարց դնել այսօր, թէ պէտք էր արդեօք ասպարէզ գային մեր կամաւորները: Պատմական երեւոյթները ունեն իրանց սեփական ու անխորտակելի տրամաբանութիւնը: 1914 թւականի աշնան հայ կամաւորական խմբերը կազմեցին ու կուեցին թուրքերի դէմ, որովհետեւ չէին կարող չը կազմել ու չը կուել. սա բնական ու անխուսափելի հետեւանք էր մի հոգեբանութեան, որով անել էր հայ ժողովուրդը առ նւազը մի քառորդ դար, մի ամբողջ սերունդ, այդ հոգեբանութիւնը պէտք էր գտնել իր արտայայտութիւնը ու գտաւ:

Եւ Գաշնակցութիւնը չէր, որ պիտի կասեցնէր շարժումը, եթէ նոյն իսկ ցանկանար: Նա կարող էր օգտագործել եղած տրամադրութիւնը, ընծացք ու ելք տալ կուտակած ցանկութիւններին, յոյսերին ու յոգեբերին, կազմակերպել պատրաստի դժը — այդքան կարողութիւն ու հեղինակութիւն ունէր: Բայց հակառակել հոսանքին ու իր սեփական գիծը տանել — անընդունակ էր, անընդունակ էր թէկուզ այն միակ պատճառով, որ Գաշնակցութիւնը ինքը՝ մասսա է, բնազդներով ուժեղ, բայց գիտակցութիւնով թոյլ:

Ի՛նչ աւելի պարապ բան կը լինէր հարց դնել այսօր, թէ ո՞վ անհատապէս պատասխանատու է եղածին (եթէ առհասարակ դուելութիւնի պատասխանատուութեան խնդիր). եթէ չը լինէին Մեսրոպը եպիսկոպոսը, Ալ. Խատիսեանը, դօքտօր Զաւրեանը ու Ս. Յարութիւնեանը, Գլքօն ու Անդրանիկը — նրանց փոխարէն հանդէս կը գային ուրիշ մարդիկ ու կ'անէին նոյն բանը:

Եթէ կամաւորական խմբեր կազմելը սխալ քայլ էր, — այդ սխալի անխուսափելի հետեւանք էր ու բնական շարունակութիւն մի քաղաքական ուղղութեան, որի արմատները պէտք է որոնել շատ աւելի հեռուն ու շատ աւելի խորը: Առ այժմս կարելոր է արձանագրել այն սոսկ փաստը միայն, որ մենք ամենամեծ չափերով մասնակից ենք եղել կամաւորական շարժման եւ որ այդ արել ենք հակառակ կուսակցական կամքը արտայայտող ընդհանուր ժողովի որոշման:

2. 1914 թվականի ձմեռը ու 15ի գարնան առաջի ամիսները ոգեւորութեան ու յոյսերի շրջան էր ամբողջ ռուսահայութեան համար, մէջն առնելով ի հարկէ եւ Հ. Զ. Դաշնակցութիւնը:

Զէինք կասկածում, որ պատերազմը պիտի վերջանայ դաշնակիցների կատարեալ յաղթութիւնով, Թիւրքիան պիտի պարտուի, անդամահատ լինի եւ որ այնտեղի հայութիւնը պիտի ազատագրուի վերջապէս: Փարեւ էինք Ռուսաստանին անվերապահօրէն:

Առանց որ եւ է դրական հիմք ունենալու, տարւած էինք այն հաւատով, որ ցարական կառավարութիւնը՝ ի վարձատրութիւն մեր հաւատարմութեան, մեր ջանքերի ու օգնութեան՝ պիտի շնորհէ աւելի կամ պակաս լայն ինքնավարութիւն թէ՛ Թիւրքիայից ազատագրւած հայկական վիլայեթներին եւ թէ՛ Անդրկովկասեան Հայաստանին:

Իլլիւզիային մի անթափանցիկ մթնոլորտ էինք ստեղծել մեր մտքի շուրջը: Մեր սեփական ցանկութիւնները դրել էինք ուրիշների մէջ, մեզ հաճելի իմաստ էինք տալիս անպատասխանատու մարդկանց անբովանդակ խօսքերին, ինքնաներշնչման հիպնօզի տակ կորցրել էինք իրականութեան գիտակցութիւնը ու տարւել երազանքներով:

Բերանից բերան, ականջից ականջ անցնում էին ինչ որ խորհրդաւոր խօսքեր, որ իբր թէ ասուել են փոխաբայի պալատում. շարունակ մատնանիչ էր արւում ինչ որ գրութիւն (Վօրօնցով - Դաշկօվի նամակը Վաժոպիկոսին), որ իբր թէ զօրեղ փաստաթուղթ էր մեր ձեռքում՝ ապագայում մեր պահանջները ներկայացնելու եւ իրաւունքները պաշտպանելու համար, — վարպետօրէն կազմւած մի շնչին նամակ, որ ոչինչ չէր պարտւում նակում, բաց ի ընդհանուր ու շատ անորոշ նախադասութիւններից, որոնց մէջ կարելի էր գնել՝ ըստ ցանկութեան՝ ամէն տեսակ բովանդակութիւն:

Գերագնահատում էինք հայ ժողովուրդի կարողութեան չափը, քաղաքական ու ռազմական արժէքը, ռուսներին մատուցած մեր օժանդակութեան կարեւորութիւնը: Ու՛ գերագնահատելով մեր շատ համեստ արժանիքները՝ բնականօրէն չափազանցելում էինք նաեւ մեր յոյսերն ու սպասելիքները:

3. 1915 թվականի ամրանն ու աշնանը տեղի ունեցան Թիւրքահայերի բռնի տեղահանութիւնը, մասսայական աքսորներն ու ջարդերը — մահացու հարւած հայ քաղաքական դատի համար:

Պատմական Հայաստանի մի կէսը — այն իսկ կէսը, ուր՝ 80 ական
թւականներից ժառանգած աւանդութիւններով ու Եւրոպական դիւա-
նագիտութեան որդեգրած ընթացքով՝ մեր անկախութեան հիմքը պիտի
դրւէր, — այդ կէսը դատարկւել էր հայ ազգաբնակչութիւնից, հայ-
կական վիլայեթները մնացել էին առանց հայութեան:

Թուրքերը գիտէին թէ ինչ են անում ու զղջալու պատճառ չունեն
այսօր: Թիւրքիայում հայկական խնդիրը արմատապէս լուծելու համար՝
սա ամենից կտրուկ եւ — ինչպէս ցոյց տւեց ապագան — ամենից նպա-
տակայարմար միջոցն էր եղել:

Եւ դարձեալ՝ պարապ բան կը լինէր հարց դնել այսօր, թէ որ
չափով անդրադարձել է մեր կամաւորների մասնակցութիւնը պատերազ-
մի մէջ՝ թիւրքահայերի աղետական վիճակի վրայ: Աչ որ չի կարող
ասել, թէ վայրագ հալածանքները տեղի չէին ունենայ, եթէ սահմանի
այս կողմը մենք ուրիշ ընթացք բռնած լինէինք. ինչպէս՝ դրան հա-
կառակ՝ ոչ որ չի կարող ասել, թէ հալածանքները կ'ունենային նոյն
բնոյթն ու նոյն ծաւալը, եթէ նոյն իսկ ցուցադրած չը լինէինք մեր թշնա-
մութիւնը թուրքերի հանդէպ:

Սա մի խնդիր է, որի մասին կարելի է ունենալ շատ տարբեր կար-
ծիքներ:

Փաստը այն է սակայն — ու սա է էականը — որ թրքական
տիրապետութեան դէմ տասնեակ տարիներ առաջ սկսւած պայքարը
յանգեց թուրքահայ ժողովուրդի տարագրութեան կամ բնաջնջման եւ
թիւրքահայաստանի ամայացման:

Այս էր ահռելի իրականութիւնը:

Թող այնուհետեւ ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը ցնցւէր
դայրոյթից անորակելի ոճիրի առաջ: Թող պարլամենտների մէջ ու
հրապարակային ժողովներում պետական մարդիկ սպառնական խօսքեր
արտասանէին մարդասպան թուրքերի դէմ: Թող “կապոյտ”, “դեղին”,
“նարինջ” ու ամէն ուրիշ գոյնի գրքեր ամբաստանող թղթեր հրա-
տարակէին: Թող եկեղեցիներում ամէն դաւանանքի քահանաներ երկ-
նային բարկութիւն ու աստուծային պատիժ կանչէին չարագործների
գլխին: Թող համաշխարհային մամուլը լցնէր իր էջերը սարսափեցուցիչ
նկարագրութիւններով ու ականատեսների վկայութիւններով...

Թող... գործը կատարւած էր արդէն եւ խօսքերը չէին, որ կեն-

դանութիւն պիտի տային արարական անապատներում ընկած գիւղերին, վերաշինէին աւերւած օջախները ու շէնացնէին ամայացած երկիրը: Թուրքերը գիտցան իրանց անելիքն ու արին:

4. 1915 թւականի երկրորդ կէսը ու ամբողջ 1916 թւականը ընդհանուր սուգի ու յուսահատութեան շրջան էր մեզ համար:

Փախստականները վանից, Ալաշկերտից, Բասենից — բոլոր նրանք, որոնց յաջողւել էր աղատուել ջարդերից — տասնեակ ու հարիւր հազարներով լեցւել էին ռուսահայ գաւառները: Անթիպ, մերկ, հիւանդ, սարսափահար ու բարոյալքւած մարդկանց հեղեղներ էին, որ գալիս էին մէկը միւսի ետեւից ու հեղեղում մեր գիւղերն ու քաղաքները: Այս սովահար զանգւածները եկել էին մի երկիր, որ ինքն էլ քայքայած էր արգէն ու հացաղուրկ: Ուժասպառ, հիւանդ, արիւնքաւ՝ կուտակւել էին փախստականները իրար վրայ: Շիրակն ու Արարատեան դաշտը վերածւել էին մի ահռելի հիւանդանոց-անկելանոցի, ուր հայ մարդիկ — մեր աչքի առջեւ, մեր դռների շեմքին — մեռնում էին հազարներով սովից ու հիւանդութիւններից...

Աւ մենք անըօր էինք փրկելու այդ թանկագին կեանքերը:

Զայրացած ու սարսափած, որոնեցինք յանցաւորներին ու գտանք իսկոյն. ռուս կառավարութեան նենգ քաղաքականութիւնը:

Քաղաքականապէս տհաս ու մտքով անհաւասարակշռւած մարդկանց յատուկ անհետեւականութիւնով, մի ծայրայեղութիւնից ընկանք անմիջապէս հակառակ ծայրայեղութեան մէջ: Որքան կոյր ու անհիմն էր մեր երեկւայ հաւատը ռուս կառավարութեան հանդէպ, նոյնքան կոյր ու անհիմն էր այսօրւայ մեղադրանքը:

Ասում էինք. ռուսները խաբեցին ու դաւաճանեցին մեզ: Գիտամամբ դանդաղ շարժւեցին, անվճռողական եղան, ետ ու առաջ գնացին, գրաւեցին ու նահանջեցին, որպէս զի թուրքերին առիթ, ժամանակ ու հնարաւորութիւն տան տեղացի հայերին կոտորելու: Ռուսները այդ պէս արին որպէս զի ամայացնեն Հայաստանն ու կօղակներ նստեցնեն այնտեղ. իշխան Լօրանով-Բոստովսկու ծանօթ ծրագիրն է, որ իրականացւում է այսօր...

Այսպէս մտածում ու արտայայտւում էր ոչ միայն ժողովուրդը, այլ եւ մեր կուսակցութիւնը — մեր գիտակից ընկերներից Հատ Հատերը:

Զէինք ուզում հասկանալ, որ ուսանողի ընթացքը բացատրելու համար բնաւ անհրաժեշտ չէր ենթագրել, թէ նրանք ծրագիր ու դիտաւորութիւն են ունեցել մեզ կոտորել տալու, այլ բաւական էր միայն ենթագրել, թէ նրանք չեն ունեցել նպատակ՝ փրկել թուրքահայութիւնը ինչ գնով էլ լինի: Իսկ այդպիսի նպատակ նրանք ի հարկէ չեն ունեցել. մենք ենք եղել, որ վերագրել ենք նրանց մեր սեփական ցանկութիւնները եւ երբ իրականացած չենք տեսել այն դաւադրութիւն ենք որոնել:

Բնական էր, որ մեր կամաւորները շտապում էին օր առաջ մտնել վան ու Մուշ. նրանք գնում էին փրկելու այնտեղի հայութիւնը, դա՛ էր իրանց նպատակն ու կոչումը — միակ նպատակն ու կոչումը: Բայց չէ՞ որ Ռուսաստանի զօրքերը հայ կամաւորներ չէին ու տարբեր խնդիրներ ունէին լուծելու: Նրանց դանդաղկոտութիւնն ու անվճռականութիւնը, որ մենք դաւադրութեան էինք վերագրում, կարող էր հեշտութեամբ բացատրել հրամանատարութեան սովորական ապիկարութիւնով (ապիկարութիւն, որի օրինակները այնքան բազմաթիւ էին նաեւ ուրիշ ծառայողների վրայ, ուր ոչ մի պատճառ չկար որ եւ է յետին միտք ենթադրելու) կամ՝ թերեւս՝ ռազմական ընդհանուր պահանջներով, որ մենք չը գիտէինք, չէինք ուզում գիտենալ:

Շատ հետաքրքիր ու բնորոշ երեւոյթ էր սա, արժանի առանձին ուշադրութեան:

Մաքի մի տարօրինակ արեւրացիայի շնորհիւ, մենք — մի քաղաքական կուսակցութիւն — մոռանում էինք կարծես, թէ մեր դատը՝ մի միջանկեալ ու փոքրարժէք հանգամանք է ուսանողի համար, այնքան փոքրարժէք, որ նրանք՝ հարկ եղած դէպքում՝ առանց մի րոպէ տատանելու ու ամենայն հանգստութեամբ կ'անցնէին մեր դիակի վրայով:

Զեմ՝ ասում, թէ չը գիտէինք, չէինք հասկանում: Գիտէինք, ի հարկէ, հասկանում էինք ու ասում, երբ հարկ էր լինում բառերով բնորոշել դրութիւնը: Բայց սրտերիս խորքում չէինք գիտակցում այդ բառային ֆորմուլէ ամբողջ իմաստը, մոռանում էինք մեր գիտցածը ու եղբակցութիւններ անում այնպէս, որ կարծես մեր դասն էր մեծ պատերազմի ծանրութեան կենդրոնը, պատճառն ու նպատակը: Երբ ուսանողը առաջ էին շարժում, սրտերիս չը գիտակցած խորքերում

ասում էինք. գնում են մեզ փրկելու. իսկ երբ ետ էին գալիս, ասում էինք, նահանջում են, որ մեզ կոտորել տան...

Երկու դէպքումն էլ շփոթում էինք հետեւանքը նպատակի ու դիտաւորութեան հետ:

Որոնում էինք ապացոյցներ ուսանների դաւաճանութեան եւ ի հարկէ գտնում, — ճիշտ այնպէս, ինչպէս վեց ամիս առաջ որոնում էինք ու գտնում նոյն ուսանների բարեացակամութեան անհրաքելի ապացոյցներ:

Գանգատել դառնօրէն չար բախտից ու մեղանից դուրս որոնել մեր զգալի տուժիչների պատճառը, — սա եւս մեր ազգային հոգեբանութեան բնորոշ գծերից մէկն է, որից ազատ չէ ի հարկէ եւ Գաշնակցութիւնը:

Կարծես հոգեկան մի առանձին միտքարանք էինք գտնում այն համոզմունքի մէջ, թէ ուսանները սրիկայօրէն են վարւել մեր հանդէպ (ետազայում հերթը պիտի գար ֆրանսիացիներին, ամերիկացիներին, անգլիացիներին, վրացիներին, բոլշևիկներին — ամբողջ աշխարհին). կարծես մի մեծ առաքինութիւն էր ու մի մեծ քաջագործութիւն, որ ինքներս այնքան միամիտ ու անհեռատես ենք եղել, դրել ենք մեզ (կամ թոյլ ենք տւել դնելու) այնպիսի դրութեան մէջ, որ ամէն ցանկացող կարողանայ խաբել, լքել, դաւաճանել, կոտորել կամ կոտորել տալ մեզ:

5. 1917 թւականի փետրւարին տեղի ունեցաւ ուսական յեղափոխութիւնը: Մեր առաջ բացւեցին անակնկալօրէն նոր հեռանկարներ:

Ուսաստանում հաստատում էր գեմօկրատական իրաւակարգ, հերթի էին դրում սօցիալական ծանրակշիռ խնդիրներ (օրինակ՝ հողերի համայնացման խնդիրը): Իբրեւ գեմօկրատներ ու սօցիալիստներ, մենք ցնծութեամբ ողջունեցինք նոր կարգերը. ապա՝ իբրեւ ազգային-քաղաքական կուսակցութիւն՝ առանձնապէս ու յատկապէս ոգեւորւած էինք իշխանութեան ապակենդրոնացման, ծայրագաւառների ու ազգութիւնների ինքնավարութեան խոստումներով:

Միւսեց եռանդուն աշխատանք:

Պետական հին մեքանիզմը պէտք էր փոխել, պէտք էր նոր իշխանութիւններ հաստատել տեղերում: Յեղափոխութեան եռուղեռի մէջ կենդրոնական կառավարութիւնը ի վիճակի չէր անելու այդ, ծանրութիւնը ընկնում էր տեղացիների վրայ: Նշանաբանները տրւած էին

արդէն: Գործի էին կանչած (կամ իրանք իրանց գործի էին կանչել) հասարակական հաստատութիւնները, քաղաքական կուսակցութիւնները, բանտրական ու արհեստակցական միութիւնները, ապա՝ ազգային ներկայացուցչութիւնները:

Բաղմադգեսայ Անդրկովկասի համար մասնաւորապէս բնորոշ էր ու ծանրակշիռ՝ վերջինների մասնակցութիւնը իշխանութեան կազմի մէջ: Կազմակերպի կարեւոր կենդրոններում մի շարք ազգային խորհուրդներ, սրանց թւում նաեւ հայ ազգային խորհուրդներ:

Թիֆլիսում հաստատեցին «Անդրկովկասեան Կոմիսարիատը» եւ «Բանտրական, զինւորական ու գիւղացիական խորհուրդների Անդրկովկասեան Անդրոնը», — միմեանցից անկախ երկու իշխանութիւններ, որ պիտի վարէին երկրի գործերը մինչեւ պետական միայուն օրգանների կազմակերպումը:

«Խորհուրդների Անդրոնը» տարւայ վերջերին կորցրեց հմայքն ու չեղբացաւ. զուգընթացաբար ամրապնդւեց «Կոմիսարիատը», որը դարձաւ մի տեսակ «մինիստրների դահլիճ ամբողջ Անդրկովկասի համար:

6. «Կոմիսարիատը» — ինչպէս ետագայում նաեւ Սեյմն ու Անդրկովկասեան կառավարութիւնը — Կօալիսիօն կազմ ունէին:

Կօալիսիօնը՝ ըստ ձեւի ու անունի միջկուսակցական էր, ըստ էութեան՝ միջազգայնական: Գլխաւոր կուսակցութիւններն էին. սօցիալ-դեմոկրատականի մենշեւիկ հատւածը, «Գլխաւարութիւնը» եւ Է. Յ. Գաշնակցութիւնը: Փաստօրէն սրանք ներկայացնում էին երկրի երեք գլխաւոր ազգութիւնները. վրացի, ազերբեյջանական թաթար, հայ:

«Կոմիսարիատում» — ինչպէս ետագայում նաեւ Սեյմի ու կառավարութեան մէջ — գերիշխող դիրք բռնեցին ու ղեկավարող դեր ունեցան վրացի մենշեւիկները:

Ինչո՞ւ:

Ահա պատճառներից մի քանիսը:

Առաջին: Կոմիսարիատը ստացել էր իր լիազօրութիւնները Պետրօգրադի Ժամանակաւոր կառավարութիւնից, այսինքն՝ Պետական Դումայի շրջաններից: Դումայի մէջ վրացի պատգամաւորները՝ յենւած այնպիսի մի զօրեղ համառուսական կուսակցութեան վրայ, ինչպիսին էր սօցիալ-դեմոկրատականը՝ վաղուց արդէն գրաւել էին կարեւոր դիրքեր, ազդե-

ցութիւն էին ձեռք բերել ու կապեր հաստատել: Բնական էր, որ Անդրկովկասի համար «Վօմիսարիատ» կազմելիս՝ առաջին հերթին ղրւեցին սրանք եւ ոչ հայերը կամ թաթարները, որոնց գոյութիւնը Վուսայի մէջ մնացել էր միանգամայն աննկատելի:

Երկրորդ. պետական գործեր վարելու համար վրացիներն ունէին քիչ-շատ պատրաստուած մարդիկ, որոնք՝ շնորհիւ գործօն մասնակցութեան քաղաքական մեծ կուսակցութեան ու ապա Վուսայի աշխատանքների մէջ՝ որոշ վարժութիւն ու փորձառութիւն էին ձեռք բերած, մօտենում էին մի քիչ պետական գործիչի տիպին: Ոչ մենք, ոչ մուսաւթականները այդպիսի դպրոց անցած չէինք, այդ պատրաստութիւնը չունէինք: «Մուսաւթը» բոլորովին նոր կուսակցութիւն էր, իսկ դաշնակցութիւնը աւելի վարժած էր ստորերկրեայ աշխատանքի: Անշուշտ, որոշ նշանակութիւն ունէր նաեւ կուսակցական լիդերների անհատական կարողութեան չափը. վրացիները հրապարակ էին հանել մի քանի տաղանդաւոր մարդիկ, մի քանի հանրածանօթ անուններ, որոնց կողքին նստեցնելու թէկնածուներ չունէինք մենք եւ հարկադրւած էինք տեղ բռնել երկրորդ ու երրորդ շարքերում:

Մի ուրիշ հանգամանք: Հին ընթիմի ժամանակ պաշտօնէութիւնը Անդրկովկասում վրացիների ձեռին էր գլխաւորապէս: Այդ դրութիւնը մնաց նաեւ ընթիմը փոխելուց յետոյ, որովհետեւ տեքնիքական աշխատանքներ կատարելու համար պատրաստուած մարդիկ ամենից աւելի վրացիներն ունէին: Պաշտօնէութիւնը բնականօրէն դառնում էր զօրեղ նեցուկ՝ վրաց տարրի դիրքը ամրացնելու համար պետական Մեքանիզմի մէջ — Վօմիսարիատից սկսած մինչեւ երկաթուղին ու փոստ-հեռագրատունը:

Իսկ ամենից կարեւորը հետեւեալն էր:

Վրաց ժողովուրդը քաղաքականապէս ամենից աւելի հասունացած ու ամենից լաւ կազմակերպւածն էր Անդրկովկասում. ապա՝ ամենից աւելի ապահովածը (կամ ամենից քիչ վտանգւածը), ուստի եւ ամենից զօրեղը:

Շնորհիւ բարեյաջող աշխարհագրական դիրքի. շնորհիւ համարեալ անխառն միատարրութեան. շնորհիւ նրան, որ պատերազմի ընթացքում ամենից քիչ էր տուժել ու քանդւել, շնորհիւ նրան, որ չունէր անլուծանելի, կեանքին սպառնացող վէճեր հարեւանների հետ, — շնորհիւ

այս բարեբախտ հանգամանքների, վրացի ժողովուրդը շատ աւելի հնարաւորութիւն ունէր իր ձայնը լսելի անելու, քան հայերը կամ ազրբէյջանցիները:

Հարկ եղած դէպքում վրացիները հեշտութեամբ կարող էին մի ընդհանուր լեզու գտնել թէ՛ Թիւրքիայի, թէ՛ Ազրբէյջանի հետ, — յամենայն դէպս շատ աւելի հեշտ, քան հայերը: Ապա՝ վրացիները ամփոփւած էին ամբողջովին վրաստանի մէջ, չունէին դրսում վտանգւած հատւածներ, ինչպէս ունէին հայերը Ազրբէյջանում ու ազրբէյջանցիները՝ Հայաստանում: Վրացիները ապահով նստած էին իրանց երկրում եւ եթէ ունէին սահմանային վեճեր հարեւանների հետ, — սրանց աղբիւրը պարզապէս տիրակալական հակումներ էին, որ կարող էին զսպել, չափաւորել, նոյն իսկ իսպառ վերացւել՝ առանց լրջօրէն վտանգելու վրաստանի ներկան կամ ապագան:

Այլ էին հայ-թուրքական ու հայ-թաթարական փոխյարաբերութիւնները. այստեղ կային ցաւոտ խնդիրներ, որ չէին կարող լուծւել առանց ամենածանր ընդհարումների:

Թիւրքիան, անդառնալիօրէն պարտւած արեւմուտքում ու հարաւում, ձգտում էր ապահովել ու ամրացնել իր ապագան հիւսիս-արեւելքում: Իսկ այստեղ հայերը, սեպի պէս խրւած Էրզրումի ու Բագուի միջեւ, կտրոււմ էին թուրքերի որոնած ճամբան:

Հայերը սահմանային անլուծանելի վեճեր ունէին ազրբէյջանցիների հետ: Խնդիրը այստեղ մի-երկու գաւառ աւելի կամ պակաս իւրացնելու մէջը չէր, այլ այն ազգային անդամահատութիւնների, որ անխուսափելիօրէն տեղի պիտի ունենային — ինչպէս էլ լուծւէր վեճը — մէկի կամ միւսի համար: Հայաստան չէր կարող ապրել առանց թաթարական Շարուր-Նախիջևանի. Ազրբէյջան չէր կարող ապրել (կամ շատ դժարութեամբ կ'ապրէր) առանց հայկական Ղարաբաղի: Ղարաբաղը Ազրբէյջանի համար ու Նախիջևանը Հայաստանի համար նոյնը չէին, ինչ էր վրաստանի համար Զաքաթալը, Ախալքալաքը կամ Լոռին: Եւ այստեղ էր մեծ դժարութիւնը թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Ազրբէյջանի համար:

Քաղաքականապէս աւելի հասունացած ժողովուրդները գուցէ կարողանային գտնել մի խաղաղ ելք. բայց ոչ մենք, ոչ ազրբէյջանցիները չունէինք այդ հասունութիւնը եւ վեճը մնում էր վեճ, փոխադարձ անվստահութեան ու փոխադարձ թշնամութեան աղբիւր:

Վրացիները շատ վարպետօրէն (աւելացնում՝ նաեւ ցինիկարար) օգտուում էին հայ-թուրքական ու հայ-թաթարական հակառակու-
թիւններից՝ իրանց արտօնեալ դիրքը ամրացնելու համար: Յենեւելով
թուրքերի ու թաթարների վրայ կամ սպառնալով, թէ այն ուղղու-
թեամբ կը շիտկեն իրանց ճակատը, անելանելի կացութեան մէջ էին
գնում մեզ ու հարկադրում իրանց ցանկութիւններին յարմարելու:
Ապա՝ երեսները մեր կողմը դարձնելով, մեզ մերձենալով (կամ մեր-
ձենալու մտադրութիւն ցուցադրելով), կաշկանդում էին ու որոշ չա-
փով ահաբեկում նաեւ ազրբէյանցիներին:

Քաղաքական շանտաժ էր սա, որ մեծ առաւելութիւն էր տալիս
վրացիներին ու ապահովեցնում նրանց գերիշխանութիւնը:

Երկարացրի մի քիչ, բայց Անդրկովկասում կատարածը հասկա-
նալու համար չափազանց կարեւոր է այս հանգամանքը:

Իսկ մեր կուսակցութիւնը յատկապէս պէտք է գիտենայ ու
յիշի, որ ամենատագնապալի օրերին նա ապրել է ու գործել վրաց
սօցիալ-դեմօկրատների հեգեմօնիայի տակ, քարշ է եկել նրանց
փէշը բռնած:

7. 1917 թւականի սեպտեմբերի վերջերին տեղի ունեցաւ՝
Թիֆլիսում՝ հայ Ազգային Համագումարը: Կազմեց Ազգային ժողով
ու՝ իրրեւ գործադիր մարմին՝ Ազգային Կենդրոնական խորհուրդ:

Այս Ազգային խորհուրդն էր, որ յետագայում խօսեց Անդրե-
կովկասի հայ ժողովուրդի անունից ու ասպարէզ եկաւ իրրեւ համազ-
գային լիազօր ներկայացուցչութիւն:

Թէ՛ Համագումարի, թէ՛ ժողովի եւ թէ՛ խորհուրդի մէջ գերիշխող
տեղը պատկանում էր Հ. Յ. Գաշնակցութեան:

8. Նոյն տարւայ վերջերին տեղի ունեցան Անդրկովկասում
պատգամաւորական ընտրութիւնները՝ Համառուսական Սահմանադիր
ժողովի համար:

Պայքարող կուսակցութիւնների մէջ ամենից աւելի տեղ չահեց
մենեւեւիկ սօցիալ-դեմօկրատականը (12 տեղ), ապա «Մուսաւաթը»
(10 տեղ) ու Հ. Յ. Գաշնակցութիւնը (9 տեղ). յետոյ գալիս էին —
անշան թւերով ուրիշ կուսակցութիւններ:



Երեք գլխաւոր կուսակցութիւնները ներկայացնում էին Անդր-կովկասի երեք գլխաւոր ազգութիւնները, որոնք՝ ըստ քաղաքական կշռի՝ դասաւորւեցին այսպէս. վրացի, թաթար, հայ:

Իսկ հայութեան ներսում՝ այս ընտրութիւնները եկան մէկ անգամ եւս ապացուցանելու, որ ամենից զօրեղ — աւելի ճիշդը՝ միակ զօրեղ, միակ կազմակերպւած կուսակցութիւնը — Հ. Յ. Դաշնակցութիւնն է:

9. Համառուսական Սահմանադիր ժողովը չգումարեց. Հոկտեմբերին բռնկեց բօլշեւիկեան յեղափոխութիւնը, յաղթանակեց Պետրօգրադում ու Մոսկայում, յայտարարեց խորհրդային իրաւակարգ եւ թոյլ չտւեց որ հաւաքւի դեմակրատական սկզբունքներով ընտրւած Սահմանադիր ժողովը, նկատելով այն բուրժուական հաստատութիւն:

Անդրկովկասը մնաց հաւատարիմ փետրւարեան յեղափոխութեան եւ չուզեց ծանաշել խորհրդային կարգերն ու իշխանութիւնը: Ի՞նչու:

Որովհետեւ մեր ծայրագաւառում գերիշխող կուսակցութիւնները կանգնած էին լայն ռամկավարական տեսակէտների վրայ, ուստի եւ չէին կարող ընդունել զասակարգային ու մանաւանդ կուսակցական դիկտատուրա: Ապա համոզւած էին, որ կօմունիստական կամ նոյն իսկ պարզ սօցիալիստական հասարակակարգի համար երկիրը չի հասունացած տակաւին (էլ չեմ ասում, որ «Մուսաւաթը» բնաւ չունէր սօցիալիստական դաւանանք, Հ. Յ. Դաշնակցութեան սօցիալիստականութիւնը մակերեւոյթային էր, ուղեղային, առանց խոր հիմքերի կուսակցական զանգւածների մէջ: Իսկ վրացի մենշեւիկների շարքում շատ ուժեղ էր ազգայնական, հակառուսական հոսանքը):

Երկրորդ. բօլշեւիկեան Մոսկւան անջատւած էր Անդրկովկասից հակաբօլշեւիկեան Դոնով, Կուբանով ու Հիւսիսային Կովկասով: Սխալ էր քաղաքացիական կռիւ: Հեռաւոր Մոսկւան չէր կարող թելադրել իր կամքը Անդրկովկասին, ոչ էլ օգնութեան գալ նրան, մինչդեռ մեր անմիջական հարեանները — Կուբանի կօլակները ու Ալեքսեւեւ-Գենիկինեան հակաբօլշեւիկեան բանակը — ամէն օր կարող էին դարձնել իրանց զէնքը մեր դէմ:

Երրորդ. Անդրկովկասի քաղաքականութեան ուղղութիւն տուող վրացի մենչեւիկները՝ կուսակցօրէն՝ կատաղի հակառակորդ էին իրանցից անջատւած բօլշեւիկներին: Հաւատարիմ իրանց դաւանանքներին ու կուսակցական ընդհանուր քաղաքականութեան, մենչեւիկները վարում էին մեր երկրում նոյն պայքարը, ինչ իրանց ռուս ընկերները Ռուսաստանում: «Մուսաւաթը», մտահոգւած Բագուին տիրապետելու խնդրով ու տարւած պանթուրքական իդէալներով, ձգտում էր օր առաջ կտրել բոլոր կապերը Ռուսաստանի հետ: Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ Բագումը՝ վախենալով թուրքական տիրապետութիւնից՝ բաւականին սերտ կապակցութիւն ունէր տեղական բօլշեւիկների հետ ու նոյնիսկ գործակցում էր նրանց, թիֆլիսում չէր կարող վարել — վրացիներին ու թուրքերին հակառակ — բօլշեւիկեան քաղաքականութիւն: Չէր կարող, եթէ իսկ ցանկանար: Բայց ցանկութիւն էլ չունէր, որովհետեւ ոչ բօլշեւիկեան իդէօլոգիան, ոչ էլ գործելակերպը չէին հրապուրում իրան:

Մեր կուսակցութիւնը հակաբօլշեւիկեան բանալումն էր — մասամբ իր ներքին համոզումներով, մասամբ էլ արտաքին պայմանների ճնշման տակ:

10. Ի դէպ է յիշեցնել այստեղ այն միջին ու տատանող դիրքը, որ բռնել էին մեր ընկերները Բագուի մէջ:

Արդիւնաբերական Բագուն իր բազմահազար բանւորութիւնով ու բանւորական ուժեղ կազմակերպութիւններով, ամենից աւելի նպաստաւոր պայմաններ էր ներկայացնում բօլշեւիզմի զարգացման համար. սա միակ վայրն էր ամբողջ Անդրկովկասում, ուր բօլշեւիկները՝ յեղափոխութեան առաջի իսկ օրերից՝ հաստատուն ապաստան ու յենակէտ էին գտել:

Չեւականօրէն՝ Բագուն չէր բացասում Անդրկովկասեան Առիսարիաի իշխանութիւնը, նոյն իսկ հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ. բայց փաստօրէն գործերը վարում էին երկու տեղական հաստատութիւններ. «Հասարակական հիմնարկութիւնների խորհուրդը» եւ «Բանւորական պատկրակների խորհուրդը»:

Առաջինի մէջ գերիշխում էր հակաբօլշեւիկեան հոսանքը, երկրորդի մէջ՝ բօլշեւիկեանը:

Մեր կուսակցութիւնը ունէր իր ներկայացուցիչները թէ՛ առաջինի եւ թէ՛ երկրորդի մէջ:

Այս երկու միմեանցից անկախ ու տարբեր բնոյթ ունեցող մարմինները բացայայտ մրցման մէջ էին՝ իշխանութեան տիրապետելու համար: Առաջի շրջանում ոյժը «Հասարակական հիմնարկութիւնների» ձեռին էր (այստեղ չափաւոր սօցիալիստները լռելեայն բլօկ էին կազմել լիբերալ բուրժուազիի հետ՝ բօլշեւիկների դէմ): Բայց բանւորական «խորհուրդը» զօրեղանում էր օր օրի վրայ եւ 1918 թ. յունվարին դրութեան տէրն էր արդէն:

«խորհուրդին» ուղղութիւն տւողը բօլշեւիկեան հատւածն էր:

Մեծ ոյժ էին ներկայացնում այն ժամանակ բօլշեւիկները, նրանց յաջողութիւնը հիմնւած էր գլխաւորապէս այն փոխադարձ անվտանգութեան վրայ, որ տիրում էր հակառակ բանակի ներսում:

Բօլշեւիկներին իրական ոյժ կարող էին հակադրել երկու կուսակցութիւն միայն. թաթարական «Մուսաւաթին» ու հայկական Դաշնակցութիւնը: Բայց հակադրելու եւ յաջողութիւն ունենալու համար, պէտք էր որ սրանք անվերապահօրէն միանային — մի բան, որ անկարելի էր, որովհետեւ չկար փոխադարձ հաւատ ու վստահութիւն: Դաշնակցութիւնը հասկանում էր, որ «Մուսաւաթին» հարկաւոր է իր բարեկամութիւնը այնչափ միայն, որչափ գոյութիւն ունի բօլշեւիկեան սպառնալիքն ու վտանգը. բօլշեւիկներին չեղօքացնելուց յետոյ «Մուսաւաթը» — երկրորդ հերթին — վերացնելու էր ասպարէզից նաեւ Դաշնակցութիւնը: Ասակած չկար, որ նոյնը անելու են եւ բօլշեւիկները, երբ՝ Դաշնակցութեան զինւած խմբերի օգնութեամբ՝ խորտակեն «Մուսաւաթը»: Բայց Բագւայ հայ ազգաբնակչութեան ապահովութեան տեսակէտից բօլշեւիկեան դիկտատուրան շատ աւելի ընդունելի էր (կամ պակաս անընդունելի), քան «Մուսաւաթինը»:

Այս էր պատճառը, որ մերոնք Բագւում աւելի ու աւելի տարւում էին բօլշեւիկեան հոսանքով ու մի տեսակ յենարան էին դառնում բօլշեւիկների համար:

Ինչպէս Թիֆլիսում մենք ակամայից ընկել էինք վրացի մենշեւիկների հեգեմոնիայի տակ, ճիշտ այնպէս էլ Բագւում ընկել էինք ռուս բօլշեւիկների հեգեմոնիայի տակ: Երկու դէպքումն էլ մեզ կաշկանդողը թուրք-թաթարական սպառնալիքն էր:

Եւել վրայ յենւած, բօլեւիկները խորտակեցին Բագում «Մուսաւաթի» դժը (1918 թւականի Մարտին): Իսկ մենք՝ յենւած բօլեւիկների ու առհասարակ ուստարրի վրայ եւ սրանց հետ միասին՝ կարողացանք պաշտպանել Բագուն թուրք-թաթարական յարձակումներին:

Ապա՝ մեր նախաձեռնութեամբ արգէն ու հակառակ բօլեւիկների կամքին՝ բերինք Պարսկաստանից անգլիական զօրքեր (դա վերջի ժամին էր, երբ բօլեւիկները պատրաստուում էին փախչել Ռուսաստան ու արգէն նստել էին նաւերը):

Եթէ անգլիացիք լըծօրէն ամրանային Բագում, հաւանական է, որ յետագայ անցքերը մի քիչ տարրեր ընթացք առնէին: Բայց անգլիական փոքրածիւ զօրքերը շուտով լքեցին քաղաքը, նստեցին նաւերն ու վերագարձան Պարսկաստան:

Ենք մնացինք մենակ եւ ուրիշ բան չէինք կարող անել, քան հետեւել անգլիացիների օրինակին — փախչել Պարսկաստան:

Ազրբէյճանի կառավարութիւնը, որ մինչ այդ նստած էր Գանձակում, թուրքական բանակի ու զինւած խուժանի հետ միասին մտաւ Բագու: Տեղի ունեցաւ հայ ազգաբնակչութեան անխնայ ջարդը (ինչպէս Մարտ ամսին, բօլեւիկ-մուսաւաթական կուռ ժամանակ, տեղի էր ունեցել — պակաս չափերով — թուրք ազգաբնակչութեան ջարդը):

Այս գէպքերը կատարուում էին Հայաստանից դուրս, թաթարական մի հեռաւոր վայրում. բայց անմիջապէս անդրադառնում էին մեր քաղաքական կացութեան վրայ, բարդացնում ու դժարացնում այն:

Թաթարները շարունակ գրգռում էին մեր գէւ թուրքերին, շտապեցնում էին նրանց առաջնադացումը՝ Բագուն օր առաջ ազատելու համար եւ վարպետօրէն շահագործում էին Մարտ ամսի կոտորածները, վերագրելով այն բացառապէս հայերին: Արացիները բնականօրէն չէին հաւանում մեր գործակցութեանը բօլեւիկների հետ, ծուռ աչքով էին նայում մեզ, կասկածելով թէ յարմար առիթի ենք սպասում, որպէսզի բաց անենք Անգրիկովկասի դռները ուստ բօլեւիկների առջեւ: Ապա՝ բերել Բագու անգլիական զօրքեր այն ժամանակ, երբ թիֆլիսում նստած էին գերմանացիները, որոնց հետ իրանք վրացիները սիրային փիրտի մէջ էին — սա նկատուում էր դաւաճանութիւն վրացի-գերման թուրք-թաթարական քաղաքականութեան:

Բազում բռնած մեր դիրքը անվստահելի դաշնակից էր դարձրել մեզ մեր կառավարող հարեւանների աչքում եւ ենթակայ՝ սրանից բղխող բոլոր դժարութիւնների:

Իսկ Բազայ մեր ընկերները շարունակում էին տանել իրանց սեփական քաղաքական գիծը նաեւ այն հաշուով թէ՛ ամրանալով Բազում ու իրանց վրայ քաշելով թուրք-թաթարական ոյժերը՝ ազատած կը լինեն Հայաստանի մնացորդը թուրքական արշաւանքից:

Բազայ էպիզոդական խնդիրը մէկ անգամից սպառելու համար, պատմութիւնը շատ առաջ տարայ — մինչեւ 1918 թ. աշունը. վերադառնում եմ ժամանակագրական կարգին:

11. 1917 թ. Նոյեմբերի վերջերին սկսեց ոռոս բանակի կազմալուծումն ու փախուստը կովկասեան ճակատից:

Ճակատը քանդուած էր ու դատարկուած սարսափեցուցիչ արագութեամբ:

Յունուարի վերջերին բանակ չկար այլեւս: Հայկական փոքրածիւր օրամասերն էին, որ՝ միացած նախկին բանակի վերջի բեկորների հետ՝ պիտի պահէին այսուհետեւ լքողումի գիծը:

12. Անդրկովկասի դրութիւնը դառնում էր շատ վտանգաւոր:

Բռնելիկեան յեղափոխութիւնն ու օր օրի վրայ ծաւալող քաղաքացիական պատերազմը բոլորովին կտրել էին մեր ծայրագաւառը Ռուսաստանից:

“Կոմիսարիատը”, որ գեո շարունակում էր կառավարել երկիրը կերենսկու “Ժամանակաւոր կառավարութեան” անունից, այդ կառավարութեան տապալումից յետոյ կորցրել էր իր ոտի տակի հողը: Պէտք էր կազմել մի նոր իշխանութիւն, աւելի հեղինակաւոր ազգաբնակչութեան աչքում ու աւելի իրաւասու՝ պետական գործերը անկախօրէն վարելու համար:

Այդ իշխանութիւնը հանդէս եկաւ յանձինս Անդրկովկասեան Սեյմի ու նրանից լիազօրեաժ կառավարութեան:

Սեյմը կազմեց Համառուսական Սահմանադիր Ժողովի համար ընտրեաժ անդրկովկասեան պատերազմներից, եռապատկեաժ թւով (ըստ կուսակցութիւնների ու սրանց ստացաժ քէների): Այսպիսով՝ մենչեւիկ-

ները (Վրաստան) ունեցան Սեյմում 36 տեղ, «Մուսալաթը» (Ազրբեյջան) 30 տեղ, Հ. Յ. Դաշնակցութիւնը (Հայաստան) 27 տեղ:

Սեյմը գումարեց թիֆլիսում, որ Անգրկովկասի բնական ու անհերքելի մայրաքաղաքն էր: Առաջինիստը, որ տեղի ունեցաւ Փետրուարի 10ին (1918 թ.), ընդունեց «Կոմիսարիատի» հաշւետութիւնն ու հրաժարականը: Այսպէս նկատի առնելով, որ մեր ծայրագաւառը փաստօրէն անջատուած է Ռուսաստանից ու յայտնի չէ, թէ երբ պիտի վերհաստատուեն կտրուած կապերը —

յայտարարեց Անգրկովկասը Ռամկավար Դաշնակցական Հանրապետութիւն, իրան ճանաչեց իբրեւ երկրի միակ օրէնսդիր մարմին ու յանձնարարեց Լ. Գեգեչկօրիին (վրացի մենշեւիկ) կազմել ժամանակաւոր կառավարութիւն (մինիստրների դաշլիւ), պատասխանատու Սեյմի առջեւ:

Սա անջատում էր Ռուսաստանից, այլ մի փաստային դրութիւն, որ՝ ենթադրւում էր՝ պիտի ունենար ժամանակաւոր բնոյթ միայն: Միջազգային տեսակէտից, Անգրկովկասը շարունակում էր մնալ Ռուսաստանի անբաժան մաս:

13. Թուրքական զօրքերը, խրախուսւած ռուս բանակի քայքայումով, արագօրէն վերակազմւում էին, կարգի բերւում ու աստիճանաբար վերագրաւում կորցրած վայրերը: Միաժամանակ թուրք հրամանատարութիւնը (Վեհիպ փաշան) նախաձեռնութիւն ունեցաւ ղինագադար ու խաղաղութեան բանակցութիւններ առաջարկելու:

Սեյմը որոշեց վերջ դնել պատերազմին ու խաղաղութեան դաշն կապել թուրքերի հետ:

Առաջին բանակցութիւնները տեղի ունեցան Տրապիզոնում, 1918 թ. Մարտ ամսին:

Դաշնակցական Փրակցիային յաջողեց մտցնել Սեյմի պահանջների մէջ մի առանձին կէտ (մէկը չորս հիմնական կէտերից). ճանաչել տալ թուրքահայերի ինքնորոշման իրաւունքը՝ Օսմանեան պետութեան շրջանակի մէջ:

Այս պահանջին (որ խմբագրւած էր շատ անորոշակի ու լայն ասպարէզ էր տալիս ամէն կարգի կօմպրոմիսներին) թուրքերը անմիջապէս տւին մի շատ կարճ ու չոր պատասխան. սա թուրքիայի ներքին ինքիւր է, որի մէջ ոչ ոք իրաւունք չը պիտի ունենայ միջամտելու:

եթէ մէկ անգամ էլ կրկնւի, թուրքերը վերջ կը դնեն ամէն բանակ-
ցութեան:

Աւանդրկովկասցիք այլ եւս չը կրկնեցին:

Չը կրկնեցին շատ պարզ պատճառով. Սեյմի որոշումը ինքը արդէն
մի ձեւական զիջում էր հայերի պահանջին, երեւոյթը փրկելու մի միջոց,
առանց լրջօրէն հետապնդելու դիտաւորութեան: Արացիները տրամա-
դրութիւն չունէին (ոչ էլ կարկը) թիւրքահայերի սիրոյն համար մի
աւելորդ գլխացաւանք իրանց պատճառելու. իսկ աղբբէյանցիներին սրտին
շատ աւելի մօտ էին, ի հարկէ, թիւրքիայի պետական շահերը, քան
հայերի վիճակը կամ նոյնիսկ Անդրկովկասեան Հանրապետութեան
ապագան: Եւ պատւիրակութեան հայ անդամները չէին, որ պիտի կա-
րողանային թեւադրել իրանց կամքը թաթարներին ու վրացիներին:

Արդար լինելու համար պէտք է աւելացնել, որ եթէ այն օրւայ
մեր դաշնակիցները (վրացիներն ու թաթարները) նոյն իսկ լրջօրէն, ան-
կեղծօրէն ցանկանային պաշտպանել հայկական պահանջը — յաջողու-
թիւն դարձնալ չը պիտի ունենային. ոյժերի փոխյարաբերութիւնը արդէն
այնպիսի էր, որ թուրքերը ոչ մի պատճառ չունէին զիջող լինելու: Այդ
հասկանում էինք եւ մենք, հայ պատւիրակներս:

Բանակցութիւնների ու երկարատեւ վիճաբանութիւնների առար-
կան սահմանային խնդիրն էր:

Թուրքերը կանգնած էին այն տեսակէտի վրայ, որ Անդրկովկասի
ու թիւրքիայի միջեւ սահմանները գծւած են արդէն Բրեստ-Լիտովս-
կում՝ ռուս բօլշեւիկների հետ կնքւած դաշնագրով. որ նրանք եկել են
Տրապիզոն ոչ թէ մէկ անգամ լուծւած խնդիրը նոր վերաբննութեան
առնելու համար, այլ պարզապէս բարի-դրացիական կապեր հաստա-
տելու համար իրանց նոր հարեւան՝ Անդրկովկասեան Հանրապետու-
թեան հետ: Իսկ անդրկովկասցիք չէին ուզում ծանաչել Բրեստ-Լիտովս-
կեան դաշնագրի օրինաւորութիւնը եւ կանգնած էին այն տեսակէտի
վրայ, որ թիւրքիային հողային զիջումներ անելու իրաւունքը պատկանում
է մի միայն տեղական (անդրկովկասեան) ժողովուրդներին, նրանց Սեյ-
մին ու կառավարութեան: Արիշ խօսքով՝ անդրկովկասեան պատւիրա-
կութիւնը չէր ուղղււմ ծանաչել Սովետական կառավարութեան իրաւա-
սութիւնը՝ նախ այն պատճառով, որ այդ կառավարութիւնը Ռուսաս-
տանի համար էլ օրինական չէ, երկրորդ՝ համաձայն ժողովուրդների

ինքնորոշման սկզբունքի, որ հռչակեց մեծ պատերազմի ընթացքում, Անդրկովկասի տերը անդրկովկասեան ժողովուրդներն են եւ ոչ ուստական կառավարութիւնը, եթէ նոյն իսկ օրինաւոր կառավարութիւն լինէր այն:

Այս տեսակէտը շատ դժար էր պաշտպանել ոչ միայն այն պատճառով, որ սա մի նոր ու վիճելի տեսակէտ էր միջազգային իրաւունքի մէջ, այլ գլխաւորապէս այն պատճառով, որ թուրքական բանակը զօրեղանում էր օր օրի վրայ, իսկ անդրկովկասեանը՝ քայքայւում: Կորուծիւն չէ, միջազգային վեճերի մէջ իրաւունքը պատկանում է նրան, որի բանակը աւելի զօրեղ է:

Շատ դժար էր նաեւ այն պատճառով, որ անդրկովկասեան պատերազմութեան ներսումն էլ չկար համաձայնութիւն եւ ցանկութիւնների նոյնութիւն:

Վրացիները շահագրգռւած էին առանձնապէս Քաթովմի ու Աջարիայի խնդրով եւ այս շրջանը (ամբողջովին կամ գէթ մասամբ) փրկելու համար պատրաստ էին զիջելու թուրքերին Վարսն ու Արդահանը: Գրան հակառակ, հայերին պէտք էր Վարսը եւ այստեղ մի բան շահելու համար մենք պատրաստ էինք շատ մեծ զիջումներ անելու Աջարիայում: Իսկ ազրբէյճանցիների ցանկութիւնն էր, որ Աջարիան կազմի մի առանձին Հարաւ-Արեւմտեան մուսուլմանական հանրապետութիւն, իբրեւ չորրորդ (կամ հինգերորդ, եթէ հաշւի առնենք նաեւ Գաղստանը) անդամ Անդրկովկասեան Դաշնակցութեան. հակառակ դէպքում կը գերադասէին, որ Աջարիան կցւի Թիւրքիային ու յամենայն դէպս համաձայն չէին վրաստանին տալու. ինչ վերաբերում է Վարսին ու Արդահանին, ազրբէյճանցիները կանգնած էին անվերապահօրէն թուրքական տեսակէտի վրայ. սրանք թուրքական հողեր են ու պէտք է յանձնելն Թիւրքիային:

Թուրքերը շատ լաւ տեղեակ էին այս ներքին անհամաձայնութիւնների մասին ու պինդ կանգնած էին իրանց պահանջների վրայ:

Կար եւ մի ուրիշ պահանջ, որ երկար վիճաբանութիւնների առարկայ եղաւ. թուրքերը պնդում էին, որ Անդրկովկասը պիտի յայտարարի իր անջատումը Ռուսաստանից, որպէս զի կարելի լինի դաշն կնքել նրա հետ:

Անդրկովկասցիները առարկում էին, թէ Անդրկովկասը փաստօրէն անջատւած է արդէն ու փաստօրէն անկախ է... բայց թուրքերը իրաւա-

ցիօրէն պատասխանում էին, թէ միջազգային դաշինք ստորագրելու համար բաւական չէ փաստային կացութիւնը, հարկաւոր է նաեւ իրաւական դրութիւն, որ ձեռք է բերւում միայն որոշ ձեւականութիւններ կատարելուց յետոյ:

Անպտուղ միջաբանութիւնները շարունակեցին մի ամբողջ ամիս: Թուրքերի համար անձեռնառու չէր այս ձգձգումը (հակառակ պարագային նրանք ամէն հնարաւորութիւն ունէին շատ կարճ կտրելու). ժամանակն անցնում էր, մեր ռազմական դժն ու դիմագրական կարողութիւնը շարունակ պակասում էր, թուրքերինը՝ աւելանում:

Իրողութիւնն այն էր, որ մինչդեռ Տրապիզոնում պատւիրակութիւնները հիստերի էին հաւաքւում ու անվերջ թղթեր գրում իրար, թուրքական բանակը անարգել շարունակում էր իր առաջնադասումը. Մարտի վերջերին գրաւած էր արդէն Էրզըումը, իսկ Ապրիլի առաջին օրերին՝ Բաթումը:

Բայց եւ այնպէս, Սեյմը դեռ չէր ուզում ծանաչել իր պարտութիւնը, չէր վճռում անձնատուր լինել: Երբ պարզեց վերջնականապէս, որ թուրքերը մտադրութիւն չունեն ոչ մի զիջում անելու Բրեստ-Լիտովսկեան դաշնագրի պայմաններից, Սեյմը ետ կանչեց իր պատւիրակութիւնը, Տրապիզոնի բանակցութիւնները խզեցին (երեւոյթները փրկելու համար, պատւիրակութիւնները այդ խզումը ժամանակաւոր ընդհատում անւանեցին):

14. Ներքին անհամաձայնութիւնները ու միմեանց բացասող հակումները, որ առաջի օրւանից արդէն գոյութիւն ունէին Սեյմի ու Դաշնակցական կառավարութեան ներսում, այժմ հրապարակ էին եկել շատ շեշտած կերպով:

Թուրքերի յաջողութիւններն ու աճող զօրութիւնը թեւ էին տւել ազրբէյանցիներին. սրանց պատւիրակները Տրապիզոնում հնարաւորութիւն ունէին (եւ ինչ կասկած, որ օգտագործեցին այդ հնարաւորութիւնը) երկարօրէն խորհրդացելու թուրքերի հետ եւ մի ընդհանուր գործելակերպ մշակելու: Սեյմում ազրբէյանցիները այլ եւս չէին քաշւում ցուցադրելու, որ ամբողջովին թուրքիայի կողմն են: Պաշտպանելով ու զարգացնելով թուրքերի տեսակէտը, պահանջում էին, որ անմիջապէս յայտարարւի Անգրկովկասի անջատումը Ռուսաստանից:

Ապա պահանջում էին ղեկող լինել թուրքերի վերաբերմամբ, համաձայնութեան գալ նրանց հետ ու դադարեցնել պատերազմը, յայտարարելով, որ —

“մուսուլմանական դեմոկրատիայի կրօնական ղգացումը թոյլ չի տալիս նրան գործօն մասնակցութիւն ունենալու Թիւրքիայի դէմ մղուող պատերազմի մէջ”.

Այս խօսքը, որ աւել է Սեյմում մուսաւաթական բանախօսի բերանով, պէտք էր թարգմանել պարզապէս այն իմաստով, որ պատերազմը շարունակելու դէպքում անդրկովկասեան թաթարները ոչ միայն չեն լինելու մեզ հետ (փաստօրէն նրանք երբեք էլ չեն եղել մեզ հետ, երբեք չեն կուել թուրքական ճակատում), այլ կը լինեն մեր դէմ:

Վրացիները (գլխաւորապէս Սեյմի մենշեւիկեան հատւածը) տատանում էին մի քիչ:

Երկու հոսանք կար սրանց մէջ, երկու տարբեր “օրիանտացիա”. ռուսական ու գերմանո-թուրքական: Վրացիները չէին ուզում կտրուել վերջնականապէս Ռուսաստանից եւ Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը համարում էին միանգամայն անընդունելի, կարծում էին որ պատերազմը պակաս չարիք է, քան այդպիսի պայմաններով կնքւած հաշտութիւնը: Երկրորդ հոսանքը հակառակ էր Ռուսաստանին, ռուսական վտանգը Վրաստանի անկախութեան համար համարում էր աւելի մեծ, քան թուրքականը եւ պատրաստ էր ամենամեծ զինուժներէ՝ Թիւրքիայի հետ հասկացողութեան գալու համար (պարզը ասած, յոյս ունէր թէ՛ Հայաստանի հաշին՝ կը յաջողի փրկել Վրաստանի համար եթէ ոչ ամբողջ Աջարիան, դէթ Բաթում քաղաքն ու նաւահանգիստը):

Հայերը (Սեյմում՝ դաշնակցական ֆրակցիան) ոչ ուղում էին անջատել Ռուսաստանից, ոչ էլ որ եւ է բարի բան ունէին սպասելու թուրքերից: Հայերը ամենից աւելի շահագրգռւած էին՝ ղէնքով կանգնեցնելու թուրքերի արշաւանքը, որովհետեւ գիտէին, որ ամենից աւելի տուժողը (թերեւս միակ տուժողը) իրանք են լինելու եւ որովհետեւ դեռ յոյս ունէին ռազմական յաջողութեան վրայ:

Ապրիլ ամսին, Ալեքսանդրօպօլի մէջ գումարեց՝ յատկապէս այս խնդրի համար՝ հայ Ազգային ժողովը, որը — հակառակ տողերս գրողի զեկուցման — վճռեց մերժել Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը ու շարունակել պատերազմը:

Բայց իրականացնել այդ որոշումը չէր տրւած մեզ, որովհետեւ մենք չէինք գրութեան տէրը, ոչ իսկ մեր սեփական բախտի տէրը:

Վրացիների տատանումները երկար չը տեւեցին. գերմանո-թուրքական թեւը յաղթանակեց ու այդ յաղթանակի առաջին արտայայտութիւնը եղաւ այն, որ Ապրիլի 22-ին Սեյմը հանիսաւորապէս յայտարարեց Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից:

Այս առթիւ վրացի ու թաթար լիդերները խանդավառ ճառեր արտասանեցին Սեյմում. դաշնակցական ֆրակցիան միացաւ անջատման առաջարկին առանց ճառի, մի հատիկ կարճ ու զուսպ նախադասութիւնով:

Նշտ սրտով չէր, որ մենք արինք այդ. բայց չանել չէինք կարող իթէ հակառակ արտայայտէինք, Անդրկովկասեան դաշնակցական Հանրապետութիւնը իսկոյն պիտի քանդուէր, վրացիներն ու աղբրէյճանցիներն իսկոյն պիտի հաշտուէին թուրքերի հետ ու թողնէին մեզ մենակ երես առ երես Վէհիպ փաշայի բանակի դէմ — մենակ, որովհետեւ Ռուսաստանը (ոչ բօլշեւիկեանը, ոչ հակաբօլշեւիկեանը) այն ժամին չէր կարող հասնել օգնութեան, եթէ նոյն իսկ կամենար: Ոչ միայն մենակ, այլ նաեւ թիկունքից մեծապէս վտանգւած, որովհետեւ պարզ էր, որ թուրքերի հետ միասին մեզ պիտի զարնէին նաեւ աղբրէյճանցիները (ո՞վ դիտէ, գուցէ եւ վրացիները՝ Ախալքալաքը, Լոռին ու Փամբակը ամբողջովին գրաւելու համար):

Մենք ամենքից աւելի կարիք ունէինք Անդրկովկասեան դաշնակցութեան, չէինք ուզում որ նա քանդուի, իսկ եթէ քանդուելու է — որքան կարելի է ուշ քանդուի: Ահա թէ ինչու հարկադրւած էինք հետեւելու մեր դաշնակից դրացիների քայլերին:

15. Ապրիլի 25-ին ընկաւ Ղարսը: Ընկաւ համարեա առանց կուլի, որովհետեւ Թիֆլիսից ստացւել էր հրաման՝ յանձնել բերդը թուրքերին: Այս դաւադրական հրամանը տրւած էր առանց մեր գիտութեան ու առաջ բերեց այնպիսի զայրոյթ հեղինակների դէմ, որ դաշնակցական Հանրապետութեան քանդումը կարող էր տեղի ունենալ այդ օրն եւ իթ:

Բայց փաստը կատարւած էր արդէն. ռազմագիտական ամենակարեւոր կէտը, մեր ճակատը պաշտպանելու միակ ամուր յենարանը — Ղարսի բերդը — թուրքերի ձեռին էր: Տատանւելու ու դանդաղելու

տեղ չէր մնացել այլ եւս: Այժմ որոշեց անմիջապէս վերսկսել Տրապիզոնում ընդհատուած բանակցութիւնները, համաձայնելով ընդունել իբրեւ ելակէտ Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը:

Բանակցութիւնները վերսկսեցին Բաթումում (ուր թուրքերը հաստատուել էին արդէն), Մայիսի առաջին օրերին:

Բայց թուրքերը փոխել էին արդէն լեզուները. Բրեստ-Լիտովսկի դաշնը այլեւս չէր բաւականացնում նրանց: Ասում էին. Տրապիզոնից յետոյ մենք նոր արիւն ենք թափել, պէտք է հատուցում ստանանք: Ու պահանջում էին հողային նոր զիջումներ, գլխաւորապէս Հայաստանի հաշին:

Վերսկսեցին երկար ու անպտուղ խօսակցութիւնները:

Բրեստ-Լիտովսկու պայմանագիրը, որի մասին մի ամիս առաջ, Տրապիզոնում, լսել անգամ չէինք ուզում, այժմ դառել էր մեր միակ ու ամենամեծ իղձը: Բայց թուրքերը մնում էին անողոք, պինդ բռնել էին մեր կոկորդից, բայց չէին թողնում:

Մայիսի 15-ին թուրքական բանակը անցաւ Արփաշայր (Բրեստ-Լիտովսկում որոշած սահմանագիծը), մի քանի ժամայ մէջ տիրացաւ Ալեքսանդրապոլին ու շարժւեց դէպի Վարաբլիսա:

Գրութիւնը դառնում էր ծայր աստիճան տագնապալի, վտանգի տակ էր ընկնում Թիֆլիսը, Վրաստանի ու Անդրկովկասի մայրաքաղաքը: Իսկ բանակցութիւնները Բաթումում ոչ մի ելքի չէին յանգում, մնում էին մեռած կէտի վրայ...

16. Սէյմի մէջ միշտ աճող ներքին անհամաձայնութիւնները այլ եւս չէր կարելի հաշտեցնել ոչ մի կոմպրոմիսով. պայթումը անխուսափելի էր ու անյապաղ:

Վրացիները տեսնում էին, որ մենք մի աւելորդ բեռ ենք իրանց համար, որ առանց մեզ նրանք աւելի հեշտ կը կարգաւորեն իրանց սեփական գործերը: Իսկ ազրբէյճանցիների միակ հոգսն էր այժմ՝ միանալ՝ օր առաջ թուրքերի հետ, անցնել նրանց հովանաւորութեան տակ ու՝ թուրք բանակի վրայ յենած՝ մտնել Բագու: Թուրքական բանակի յաղթանակից յետոյ Անդրկովկասեան Գաշնակցութիւնը այլ եւս պէտք չէր ազրբէյճանցիներին. վրացիները աւելորդ էին, իսկ հայերը՝ թշնամի:

Բաժանման ժամը հնչել էր:

Ու ահա Մայիսի 26-ին Սեյմը՝ նկատի առնելով որ պատերազմի ու խաղաղութեան խնդրում արմատական տարաձայնութիւններ կան Անդրկովկասեան Դաշնակցական Հանրապետութիւնը կազմող Ժողովուրդների միջեւ՝ յայտարարեց Դաշնակցութիւնը լուծուած ու վար դրեց իր լիազօրութիւնները:

Նոյն օրը ու նոյն չէնքի մէջ վրաց Ազգային Խորհուրդը՝ մեծ հանդիսաւորութեամբ՝ յայտարարեց Արաստանի անկախութիւնը:

Հեռեւեալ օրը նոյնն արաւ եւ Ազրբէյջանը:

Հերթը Հայաստանին էր:

Պէտք էր արդեօք անկախութիւն յայտարարէինք, ի վիճակի՞ էինք արդեօք սեփական պետութիւն կազմելու ու ապա պահելու այն...

Պարապ հարցեր են սրանք: 1918 թ. Մայիս ամսի վերջի օրերին այդպիսի հարցեր չէր կարելի դնել: Ընտրութիւններ անելու տեղ չէր մնացել: Պատմութիւնը բերել կանգնեցրել էր մեզ մի որոշ գծի առջեւ. պէտք է յանգգնութիւն ունենայինք անցնել վրայից, եթէ չէինք ուզում խորտակել: Պէտք է տէր դառնայինք մեր Հայրենիքին, ապա թէ ոչ կը կորցնէինք այն — դուցէ անդառնալիօրէն: Եթէ տատանւէինք, եթէ ուշացնէինք մեր յայտարարութիւնը, Հայաստան կը մնար *res nullius* (ոչորի պատկանող իր) ու իբրեւ այդպիսի բաժին կը դառնար հարեւաններին — թուրքերին, վրացիներին, ազրբէյջանցիներին:

Մայիսի 28-ին, ուշ գիշերով, Ազգային կենդրոնական Խորհուրդը վճռեց յայտարարել Հայաստան անկախ Հանրապետութիւն եւ իրան գերագոյն իշխանութիւն Հանրապետութեան:

Այդպիսի լիազօրութիւն Խորհուրդը չէր ստացած Ազգային Համագումարից, բայց կանգ չառաւ ձեւական արդելքի առջեւ ու յետագայում ոչ ոք մտքով չանցկացրեց մեղադրել նրան. այնքան պարզ էր ամենքի համար, որ ուրիշ ելք չկար:

17. Մայիսի 22—26 տեղի ունեցան Սարգարապատի կռիւները, 25—28-ին՝ Ղարաբիլիսի կռիւները:

Թերեւս վերջի ճիգն էր, որ թափում էր հայ Ժողովուրդը իր գոյութիւնը փրկելու համար: Եւ անկասկած է, որ այս յամառ ճակատամարտերը, այն հերոսական ընդդիմադրութիւնը (մանաւանդ Ղարաբիլիսին), որ անսպասելիօրէն յայտ բերեց — ոչ թէ զօրքը (բանակ չկար

այլեւս), այլ ինքը ժողովրդական զանգւածը՝ սա բարձրացրեց մի քիչ մեր արժէքը թուրքերի աչքում ու հնարաւորութիւն տւեց խաղաղութեան դաշն կնքելու:

Հայ պատերազմները — այս անգամ արդէն Հայաստանի Հանրապետութեան անունից ու Ազգային ժողովի լիազօրութիւնով — վերադարձան Բաթում ու Յունիսի 4-ին ստորագրեցին դաշնագրութիւնը:

Մի նոր դարաշրջան էր սա հայ ժողովուրդի պատմութեան մէջ — վաղուց կորցրած ինքնուրոյն պետական կեանքի վերածնունդ:

18. Օգոստոսի 1-ին, Երեւանում, բացւեց Հայաստանի Խորհրդարանը ու կազմեց անդրանիկ կառավարութիւնը:

Խորհրդարանը նոյն ազգային խորհուրդն էր, անդամների եռապատկեւած թւով. աւելացել էին սրանց վրայ վեց թուրք, մի ուս ու մի եղիգի պատգամաւորներ:

Գերիշխող տեղը պատկանում էր Հ. Յ. Գաշնակցութեան. բայց որովհետեւ մեր Փրակցիան 47 ձայնից ունէր 18 միայն ու չկարողացաւ կապել մի ուրիշ Փրակցիայի հետ, Խորհրդարանը չունեցաւ կայուն կենդանի ու որոշակի գծւած քաղաքական դէմք:

Այսպէս չկար նաեւ կառավարութեան մէջ. առաջին տասը ամսւայ ընթացքում չորս անգամ փոխւեց դահլիճի կազմը (մնալով հանդերձ նոյն վարչապետի նախագահութեան տակ):

Առաջին դահլիճները կօալիսիօն էին (դաշնակցականներ ու ժողովրդականներ, զինուորական միսիստրը չեզոք). բայց կօալիսիօնը հաստատուն հիմք չունէր տակը, որովհետեւ չունէր ապահովւած մեծամասնութիւն Խորհրդարանի մէջ (ժողովրդականները յաճախ բաժանուում էին դաշնակցականներից) ու — որ ամենից էական էր — չկար ծրագրային որոշակի համաձայնութիւն կօալիսիօն կազմող կուսակցութիւնների միջեւ: Մեծապէս խանգարում էր նաեւ այն դիրքը, որ բռնել էր մեր կուսակցութիւնը կառավարութեան հանդէպ:

19. Թերեւս մի քիչ առաջ անցնելով, հարկ եմ համարում այստեղ եւ յետոյ մատնանիշ անել խոշոր սխալներից մէկը:

Հայաստան ռամկավար հանրապետութիւն էր: Գաշնակցութիւնը ոչ միայն հակառակ չէր զրան, այլ եւ ինքն էր պահանջում այդ պե-

տական ձեւը: Հանրապետութիւնն ունէր ռամկավար-պարլամենտական պետութիւններին յատուկ օրգաններ. ժողովրդական ներկայացուցիչներին կազմած մի պալատական օրէնսդիր մարմին եւ պատասխանատու կառավարութիւն: Խորհրդարանը կազմած էր գոյութիւն ունեցող չորս քաղաքական կուսակցութիւնների ու ապա ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչներից: Խորհրդարանին յաջորդող պարլամենտը ընտրւած էր ռամկավարական ամենալայն սկզբունքներով (հինգ-անդաման ընտրողական օրէնք). կառավարութիւնը ստանում էր իր լիազօրութիւնը օրէնսդիր մարմինից (հանրապետութեան նախագահ չուներ չափստան), հաշւետու էր ու պատասխանատու նրա առջեւ:

Այս էր ձեւը:

Բայց ուրիշ էր էութիւնը:

Գործնականօրէն՝ մեր կուսակցութիւնը ձգտում էր իրան ենթարկել իր հսկողութեան տակ առնել թէ՛ օրէնսդիր մարմինը, թէ՛ կառավարութիւնը: Մենք քաջութիւն չունէինք (ոչ էլ կարողութիւն) բացէ ի բաց կուսակցական դիկտատուրա յայտարարելու. բայց եւ չէինք ուզում մնալ պարլամենտական կարգերի սահմանի մէջ ու փորձ էինք անում իրականացնել Հայաստանում Խ[Թ]ԻՏատականների գործեակերպը՝ կուսակցական դիկտատուրա ռամկավարական ձեւերի տակ քողարկւած իշխանութեան անհանդուրժելի երկուութիւն էր առաջ եկել հրապարակում՝ Խորհրդարանն ու իր կառավարութիւնը, սուերի մէջ կուսակցութիւնն ու իր օրգանները:

Հասկանալի է, որ այս երկու կարգի իշխանութիւնները՝ պաշտօնականն ու անպաշտօնը՝ կարող էին միայն խանգարել ու կաշկանդել մէկը միւսին. ձեւական պահանջները թոյլ չէին տալիս, որ կուսակցութիւնը ազատ ու արագօրէն շարժւի, իր կամքը լրիւ արտայայտի. իսկ կուսակցութեան միջամտութիւնը թոյլ չէր տալիս, որ կառավարութիւնը իր գիտցածն անի, իր գիծը տանի:

Հասկանալի է նաեւ, որ այս դրութիւնը շատ էր գժարացնում մի լուրջ ու անկեղծ կօալիսիօն կազմելու գործը. եւ իրօք. կօալիսիօնի մէջ մանող օտար տարրերը հարկադրւում էին վարել մի քաղաքականութիւն, որ իրանցը չէր, մշակւում էր ու նախագծւում կառավարութիւնից դուրս, կուսակցական մարմինների մէջ, ուր իրանք չէին կարող ունենալ մուտք ու մասնակցութիւն:

Այս ցաւոտ խնդրի մասին ես կազմել եմ անցեալ ամառ՝ պատասխանատու մարմնի յանձնարարութեամբ ու ընդհանուր ժողովին ներկայացնելու համար՝ մի ընդարձակ ղեկուցադիր: Զեկուցագիրս կարգացել է Պոլսում գումարած Շրջանային ժողովի մէջ: Այստեղ բաւականանում են այս մի քանի տողով միայն:

20. Նոյեմբերին ընդհանուր զինադադար յայտարարուեց. գերմանիան ու իր զինակիցները պարտուած էին, ջարդուած. յաղթանակը գաշնակիցներինն էր:

Գերմանական զօրքերը հապճեպ հեռացան Վրաստանից. սկսեցին քաշել զէպի իրանց նախկին սահմանները նաեւ թուրքերը: Ամսի վերջին Բաթում ափ իջան առաջին անգլիական զօրքերը — մեր գաշնակիցների զօրքերը:

Յոյսերի նոր դուռ էր բացուում մեր առջեւ: Թւում էր թէ մեր դրութիւնը Անդրկովկասում պիտի փոխուի արմատօրէն, — փոխուի զէպի լաւը. չէ որ յաղթողները ու գերմանացիներին թիֆլիսում փոխարինողները մեր զինակիցներն էին, չէ որ մենք էլ կուէլ էինք իրանց շարքերում ընդհանուր թշնամիներից մէկի՝ թուրքիայի զէմ: Բնական էր յուսալ, թէ մենք պիտի վայելէնք անգլիացիների առանձին բարեացակամութիւնը ու որոշակի տարբերւենք՝ վրացիներից, որ այնքան ֆլիրտ էին արել գերմանների հետ ու մանաւանդ ազրբէյլանցիներից, որոնք պարզապէս անցել էին թուրքերի կողմը:

Գարձեալ սխալած էինք. անգլիացիները չարին այդ տարբերութիւնը: Կարծես չը գիտէին կամ մոռացել էին, թէ մենք իրանց գաշնակիցներն ենք. իսկ վրացիների ու ազրբէյլանցիների հանդէպ ցոյց տւին այնպիսի մեծահոգութիւն, որ միանգամայն անսպասելի, մասամբ իսկ անհասկանալի էր մեզ համար:

Ի հարկէ, գանգատեցինք դառնօրէն անգլիացիներից, ասինք. ապերախտ են այս մարդիկ: Գաւ ամենահեշտ միջոցն էր՝ մեզ անհասկանալի երեւոյթները բացատրելու համար: Ապերախտ են, ասինք, ու սրտերս թեւ թեւացրինք, այլ եւս չը որոնեցինք այդ ապերախտութեան աղբիւրները:

21. Դեկտեմբերի սկիզբներին ծագեց կարճատեւ հայ-վրացական պատերազմը:

Երբ թուրքական բանակը՝ Ալեքսանդրոպոլի վրայից անցնելով՝ հասաւ մինչեւ Փամբակ ու գրաւեց Ղարաքլիսան, վրացիները օգտուցին հանգամանքից ու զօրք մտցրին հայկական Լօռին: Պատուակը այն էր, թէ ուզում են կանգնեցնել թուրքերի առաջնաղացումը դէպի Թիֆլիս: Բայց թուրքերի հեռանալուց յետոյ էլ վրացիները չուզեցին դատարկել Լօռին. ընդհակառակը, եռանդօրէն աշխատում էին ամրացնել ու յաւերժացնել իրանց տիրապետութիւնը, իսկ տեղացիների դժգոհութեան արտայայտութիւնները խեղդում էին դաժանօրէն:

Լօռին — կուածաղիկ էր Հայաստանի ու Վրաստանի միջեւ, ամենից ցաւոտը հայ-վրացական սահմանային վէճերի մէջ:

Մեղ վրայ ծնշում գործ գնելու նպատակով, Վրաստանը փաստօրէն կտրել էր մեր հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ, փակել էր մեր նեղ սահմաններում. նոյն իսկ այն հացը, որ ուղարկում էր դրսից մեր սովմամհ գաղթականութիւնը կերակրելու համար — այդ հացն էր հանգիստում Վրաստանում բազմազան արգելքների ու ուշանում էր, լրիւ չէր հասնում տեղը:

Վրաստանը գրաւել էր Լօռին, փակել երկաթուղին ու պաշարել մեղ. այս էր պատերազմի հիմնական պատճառը:

Իսկ անմիջական առիթը՝ Լօռայ մի քանի հայ գիւղերի ապստամբութիւնն էր եւ վրաց կառավարութեան գործադրած անհամապատասխան խիստ միջոցները կարծես կառավարութիւնը առիթ էր որոնում (ու նոյն իսկ ինքը ստեղծում) որպէս զի կոտորի ու ահաբեկի հայ ազգաբնակչութիւնը:

Անհաւանական չէ, որ որոշ դեր կատարել է նաեւ մեր բանակի մէջ գտնուող ռուս սպաների պրոյժկացիան: Վրաստանում կառավարութիւնը կիրառել էր մի քաղաքականութիւն, որի նպատակն էր՝ թուլացնել օր առաջ ռուսական տարրը (որ բաւականին զօրեղ էր Թիֆլիսում), չեղդացնել նրա ազդեցութիւնը ու ազգայնացնել պետական մեքանիզմը. այս նպատակով նա ոչ միայն պաշտօնազուրկ էր անում ռուս պաշտօնեաներին ու զինուորականներին, այլ եւ զանգաճներով արտաքսում էր երկրից դուրս: Մեր բանակում կային բաւական մեծ թւով ռուս սպաներ, որոնք կապեր ունէին Թիֆլիսում (գուցէ եւ զօր. Գենիկինի բանակի հետ): Անհաւանական չէ, ասում եմ, որ սրանք գրգռում էին մեր զինուորական շրջանները Վրաստանի դէմ, ստեղծում էին թշնամա-

կան մթնոլորտ, որ շատ նպաստաւոր էր ռազմական գործողութիւններ սկսելու համար:

Այստեղազմը տեւեց երեք շաբաթ միայն. Գեկտեմբ 31-ին՝ անգլիացիների միջամտութիւնով՝ խաղաղութիւնը վերականգնած էր արդէն: Լօռին յայտարարեց ժամանակաորապէս չեղորդօտի, վըաց իշխանութիւնը փոխարինեց հայ-վրացական իշխանութիւնով, անգլիական կօմիսարի հսկողութեան տակ:

Այսպիսով՝ պատերազմի ելքը անբարեյաջող չէր մեղ համար, մեր նպատակին հասել էինք կէս շափով (մանաւանդ որ երկաթուղային հաղորդակցութիւնն էլ, գլխաւորապէս շնորհիւ անգլիացիների ներկայութեան, վերաբացեց մասամբ): Բայց եւ այնպէս՝ ծանր մտահոգութիւնների դուռ էր բաց անում պատերազմի փաստը ինքն ըստ ինքեան:

Հաղիւ 4—5 ամուսյ պետական կեանք ունէինք ու արդէն բռնած էինք պատերազմի, մինչդեռ երկիրը հազար ու մի ցաւ ունէր բուժելու: Եւ պատերազմեցինք այն հարեւանի դէմ, որի հետ սերտօրէն դաշնակցելու ամենից մեծ կարիքն ունէինք — չէ՞ որ Վրաստանն էր մեր միակ ճանապարհը քաղաքակիրթ աշխարհի հետ հաղորդակցելու համար:

Եւնք հասկանում էինք այդ ու անկեղծօրէն ուզում էինք հաշտ ապրել վրացիների հետ: Բայց փաստը այն է, որ չկարողացանք: Եւ՝ անկախ Վրաստանի բռնած դիրքից, որ անվիճելիօրէն դատապարտելի էր՝ քիչ դեր չի խաղացել նաեւ մեր սեպական ապիկարութիւնը, մեր քաղաքական տհասութիւնը եւ պետական կեանքը վարելու անպատրաստութիւնը:

22. Ի դէպ է արձանագրել այստեղ նաեւ այն անընդհատ կռիւները, որ ունեցել ենք հիւսիս-արեւելեան սահմանների վրայ ու երկրի ներսը:

Այստեղապէս՝ Աղբրէյլանի հետ պատերազմի մէջ չենք եղել մենք, բայց փաստօրէն կռուել ենք Ղարաբաղում ու յաճախակի ընդհարումներ ենք ունեցել Ղազախում: Եպա՝ երկրի ներսը՝ մի շարք արիւնահեղ կռիւներ ենք ունեցել տեղական թուրք ազգաբնակչութեան հետ Աղբաւսյում, Զօդում, Զանգի-Բաղարում, Ա.եղի-Բաղարում, Շարուր-Նախի-Ջեւանում, Զանգեզուրում: . .

Եւ դարձեալ. անհերքելի է, որ Աղբրէյլանի դիրքը մեր հանդէպ

եղել է բացայայտօրէն թշնամական. անհերքելի է նաեւ, որ Հայաստանի մահմետական ազգաբնակութիւնը, իրախուսած Թիւրքիայի ու Ազրբէյջանի կողմից, հակապետական ընթացք է բռնած եղել: Բայց կարեւորն այն է, որ մենք չենք կարողացել գտնել նպատակայարմար միջոցներ մեր դրութիւնը ապահովելու համար, զրսից ու ներսից. չենք կարողացել գտնել մի քիչ տանելի *modus vivendi* Ազրբէյջանի հետ, չենք կարողացել վարչական միջոցներով կարգի մէջ պահել մահմետական գաւառակները, հարկադրւած ենք եղել զէնքի դիմելու, զօրքեր շարժելու, աւերելու ու կոտորելու եւ — որ կրկնակի վարկաբեկիչ էր կառավարութեան համար — խոշոր անյաջողութիւնների հանդիպելու. այնպիսի կարեւոր վայրերում, ինչպիսի էին Վեդի-Բաղարը, Շարուրն ու Նախիջեւանը, մենք չկարողացանք հաստատել մեր իշխանութիւնը նոյն իսկ զէնքի յոժով, պարտւեցանք ու նահանջեցինք:

23. 1919 թ. մայիսի 28ին, մեր անկախութեան առաջին տարեգարծի օրը, Խորհրդարանը յայտարարեց անկախ Հայաստանը «միացեալ» — այսինքն՝ գոյութիւն ունեցող Հանրապետութեան շրջանակի մէջ առաւ (իրբեւ միջազգային իրաւասութեան առարկայ) այն բոլոր հայկական հողերը, որոնք — ենթադրաբար — պիտի ազատւէին թուրքական գերիշխութիւնից:

Այս յայտարարութիւնը թիւրքահայութեան մի մասը նկատեց իրբեւ ուղուրպացիա իր իրաւունքների, շատ վտանգաւոր թուրքահայ դատի համար. մեծ յուզում առաջ բերեց, աղմուկ ու բողբոջ, նորից ու ուժգնօրէն բորբոքեց ռուսահայ-թուրքահայ անմիտ խնդիրը. կուսակցական մի նոր ռանձգութիւն նկատուեց եւ աւելի եւս զինեց Հ. Յ. Գաշւնակցութեան դէմ լիբերալ-բուրժուական տարրերը թէ՛ Հանրապետութեան ներսում եւ թէ՛ մանաւանդ դրսում, գաղութներում:

Բողբոքողների կասկածներն ու վախերը միանգամայն անհիմն էին. ուղուրպացիայի դիտաւորութիւն չկար (ու էէր էլ լինել ըստ էութեան), չկար կուսակցական դաւադրութիւն, իսկ յետագան ցոյց տուեց որ չկար նաեւ որ եւ է վտանգ թուրքահայ դատի համար. այդ դատի ընթացքին ու ելքին վրայ մաղաչաւի անգամ չանդրադարձաւ մայիսեան յայտարարութիւնը, նրա լինելը կամ չլինելը ոչ որ չը նկատեց, ոչ որ հաշիւ չառաւ:

Նոյն յետագան ցոյց տւեց, սակայն, որ անհիմն է եղել նաեւ յայտարարութեան հեղինակների յոյսը, թէ այդ միջոցով աւելի ամբօրացած կը լինեն Հայաստանի քաղաքական դրութիւնը ու հեշտացրած՝ դիւանագիտական աշխատանքը Եւրոպայում: Գրութիւնը Եւրոպայի աչքում մնաց նոյնը. մեր Խորհրդարանի սոսկ յայտարարութիւնը, մի բառային ակտ առանց համապատասխան գործողութիւնների, չէր կարող վերացնել կամ նսեմացնել փաստերի ոյժը:

Այն անմիջական հետեւանքը, որ կարելի էր սպասել յայտարարութիւնը անելուց յետոյ — Պարիզի Ազգային պատերազմութեան վերացումը — այն եւս տեղի չունեցաւ. Մայիսի 28-ից յետոյ էլ մնացին Եւրոպայում՝ կողք կողքի՝ երկու տարբեր դիւանագիտական ներկայացուցչութիւններ (Հանրապետութեան պատերազմութիւնը եւ Ազգային պատերազմութիւնը), որոնք կոչում ունէին պաշտպանելու միեւնոյն դատը, միեւնոյն տեղերում, միեւնոյն մարդկանց առջեւ: Տարբերութիւնը այն եղաւ միայն, որ էլ աւելի դժարացաւ համաձայնութեան բերել իրաւասութեան համար պայքարող այդ երկու մարմինները, ընդհանուր ձևատ պահել Եւրոպայի հանդէպ: Իսկ երկրի ներսը աւելի եւս դժարացաւ կօալիսիօնը լիբերալ տարրերի հետ ու մեր կուսակցութիւնը մնաց աւելի եւս մեկուսացած:

Միանգամայն հասկանալի է այն հոգեբանական պահանջը, որ մղեց մեզ Հայաստանը «միացեալ» յայտարարելու. հասկանալի են եւ այն քաղաքական նկատումները, որոնք արգարացնում էին — այն օրերի ըմբռնումներով — յայտարարութեան գործը: Բայց փաստը այն է, որ յայտարարութիւնը ոչ մի զրական հետեւանք չունեցաւ, իսկ բացասական ունեցաւ (ներքին անհամաձայնութիւնների ու վէճերի բորբոքում):

24. 1919 թ. օգոստոսի 1-ին բացւեց Հայաստանի պարլամենտը, որ եկաւ փոխարինելու Նախկին Խորհրդարանը:

Պարլամենտական ընտրութիւնները կատարել էին ամենալայն դեմօկրատական սիստեմով (ընդհանուր, հաւասար, ուղղակի ու գաղտնի ձայնաւութիւն, համեմատական ներկայացուցչութիւն). բայց տարօրինակ էր ու վհատեցուցիչ այդ իբր թէ ժողովուրդավարական հաստատութեան կազմը 80 անդամից 72 — այսինքն՝ ճիշտ 90 առ 100 — դաշնակցականներ էին... միւս քաղաքական կուսակցութիւններից

ներկայ էր միայն սօցիալիստ-յեղափոխականը, որը գրաւել էր ընդամենը
սորս տեղը:

Մենք, դաշնակցականներս, երեւել էինք՝ տարած յաղթանակով:
Չէինք հասկանում, որ այդպիսի կազմ ունեցող պարլամենտը՝ պարլա-
մենտ չէ, այլ միայն պարլամենտի ծաղրանկար: Չէինք հասկանում, որ
դա մի սոսկալի ապացոյց է, թէ ո՞ր աստիճանի անպատրաստ է մեր ժո-
ղովուրդը պետական կեանքի համար, ո՞ր աստիճանի տգէտ է ու անփոյթ՝
իր քաղաքական իրաւունքների հանդէպ: Չէինք հասկանում, որ մեր
դաւանած դեմոկրատական իրաւակարգը չի կարելի հաստատել այդ-
պիսի ընտրութիւնների վրայ: Չէինք հասկանում, որ մեր յաղթանակը՝
յաղթանակ չէր, այլ կատարեալ պարտութիւն. որ 72 մարդ նստեցը-
նելով պարլամենտում, մենք կորցնում էինք մեր ոտի տակի հողը, դե-
մոկրատիկ մի հիմքը: Չէինք հասկանում, որ վերցնելով մեր ձեռք ան-
բաժանելիօրէն ամբողջ իշխանութիւնը, մեզ վրայ էինք վերցնում նաեւ
ամբողջ պատասխանատուութիւնը եւ որ այդ բեռի տակից պատուով
դուրս գալու համար՝ չունէինք հարկաւոր ոյժն ու պատրաստութիւնը:
Չէինք հասկանում, որ մեր սեփական զատիարակութեան համար մեծ
կարիք ունէինք, որ մի զօրեղ օպօզիցիա կանգնած լինէր մեր կողքին,
միշտ զգաստ պահէր մեզ, ի կարգ հրաւիրէր եւ թոյլ չտար, որ դուրս
գալինք օրէնքի ու իրաւասութեան սահմաններից: Չէինք հասկանում,
վերջապէս, որ փոխադրելով մեր կուսակցական նիստերը պարլամենտա-
կան սրահն ու կառավարութեան շէնքը՝ մեռնում էինք կուսակցակա-
նօրէն...

Պարլամենտ չկար Հայաստանում, մի դատարկ ձեւ էր առանց
պարունակութեան:

Պետական հարցերը քննութեան էին առնւում ու լուծւում դռն-
փակ, դաշնակցական ֆրակցիայի սենեակում, ու ապա յայտարարւում
պարլամենտի ամբիոնից: Իրօք չկար եւ պարլամենտական ֆրակցիա,
որովհետեւ սա դրւած էր Դաշնակցութեան բիւրօի խիստ հսկողութեան
տակ ու պարտաւոր էր կատարելու նրա հրամանները: Չկար եւ կառա-
վարութիւն. սա եւս ենթարկւած էր բիւրօին, բիւրօի մի տեսակ գոր-
ծադիր մարմինն էր պետութեան մէջ: Քօլլեկիկեան սիստեմ էր սա: Քայց
այն, ինչ որ բօլքեւիկները անում են հետեւողականօրէն ու բացայայտ,
մենք աշխատում էինք քողարկել դեմոկրատական ձեւերի տակ:

25. 1920 թ. Մայիսի առաջի օրերին տեղի ունեցան բաշխական ցույցեր ու ապստամբութեան փորձեր:

Հարժումը խեղդեց առանց մեծ դժւարութիւնների, որովհետեւ յենարան չուներ. երկրի համար բաշխւիլով միանգամայն խորթ բան էր, իսկ դրսի միջամտութիւն չկար այդ ժամանակ:

Բայց եւ այնպէս, շատ բնորոշ է այն հանգամանքը, որ մի քանի տասնեակ բաշխակ երիտասարդներ կարողացան կազմակերպել աղմուկալի ցույցեր (նոյն իսկ Երեւանում, կառավարութեան քթի տակ), պրօպագանդ անել զօրքի մէջ, գրաւել Ալեքսանդրօպօլում երկաթուղու կայարանը, տիրանալ զրահակիր զնացքին...

Սա ցույց է տալիս, թէ որքան թոյլ, որքան անտեղեակ ու որքան անխոյժ է եղել կառավարութիւնը:

26. Այս շարժումների հետեւանքով կամ սրանց հետ կապւած՝ տեղի ունեցաւ մի տեսակ coup d'Etat. պարլամենտական կառավարութեան փոխարինեց՝ դիկտատօրական լիազօրութիւններով՝ Հ. Յ. Դաշնակցութեան բիւրօն (այսպէս անւանւած «Բիւրօ-կառավարութիւնը»):

Օրէնքի պահանջած ձեւականութիւնները կատարեցին ու ամբողջ գործողութիւնը բեմադրեց պարլամենտական կարգերի շրջանակի մէջ, — այսպէս. Մայիսի 5-ին պարլամենտը (բիւրօի հրահանգով, իհարկէ) ընդունեց վարչապետ Ա. Խատիսեանի հրաժարականը (որ բիւրօի պահանջով էր ներկայացւած, ու նոր դաշինք կազմելը յանձնարարեց (բիւրօի հրահանգով) Դոքտ. Հ. Օհանջանեանին: Օհանջանեանը անմիջապէս, նոյն նիստին, ներկայացրեց իր մինիստրների պատրաստի ցուցակը. Հ. Յ. Դաշնակցութեան բիւրօն էր սա, ամբողջ կազմով ու առանց օտարների: Պարլամենտը իր հաւանութիւնը տուց, ապա յայտարարեց ժամանակաւոր ընդհատում իր նիստերի ու մինչեւ աշխատանքների վերսկսելը՝ փոխանցեց նորակազմ կառավարութեան իր բոլոր իրաւունքները:

Դիկտատօրական իշխանութիւն էր, որ տալիս էր Դաշնակցութեան բիւրօին Հայաստանի պարլամենտը (այսինքն՝ դաշնակցական ֆրակցիան, այսինքն՝ ինքը բիւրօն):

Սա հակասում էր Դաշնակցութեան IX-րդ ընդհանուր ժողովի կարուկ որոշման ու մի շարք անպատեհութիւններ ունէր: Բայց անհեր-

քելի է մի բան. այսպիսով վերացում էր երկուուկէսը, վերացում էին տգեղ, վարկաբեկիչ քողարկումները ու զրուծիւնը պարզում էր վերջապէս, իր իսկական կերպարանքով յայտ գալիս: Շատ աւելի գերադասելի էր, որ կուսակցական բիւրօն կառավարէր երկիրը բացառապատօրէն, քան քողարկւած պարլամենտի կառավարութեան անունների տակ:

27. Աշնան սկզբին ծագեց հայ-թուրքական պատերազմը, որ վերջնականապէս կոտրեց մեր մէջքը:

Կարող էինք արդեօք խուսափել այդ պատերազմից: Հաւանականօրէն՝ ոչ:

1918 թւականին ջախջախւած Թիւրքիան երկու տարի ձգած էր հանգիստ, առանց պարտութեան հետեւանքները ձեւակերպելու ու նոր զրուծիւն հաստատելու համար միջոցներ ձեռնարկելու: Այդ երկու տարւայ ընթացքում թուրքերը շունչ քաշեցին, կազդուրեցին: Հանդէս եկան երիտասարդ, ձեռներեց ու հայրենասէր զինուորականներ, որոնք Անատոլիի խորքերում սկսեցին արագօրէն վերակազմել բանակը: Թուրքերի մէջ ուժ գնօրէն արթնացել էր ազգային գիտակցութիւնը ու ինքնապաշտպանութեան բնազդը: Սեւրի դաշնագրին պէտք է հակադրէին ռազմական ոյժ, որպէս զի ապահոված լինէին իրանց ապագան գոնէ փոքր Ասիայում: Պարզ է, որ այդ հակադրութիւնը հանդէս պիտի բերէր ոչ այնքան հիւսիս-արեւելքում, որքան հարաւ-արեւմուտքում: Բայց այնտեղ կենդրոնանալու ու Զոնաստանի դէմ ճակատ պահելու համար պէտք էր կանխապէս ապահովէին իրանց թիկունքը հայկական սահմանների վրայ: Գուցէ կարիք ունէին ղէնքի ու ղինամթերքների, որ մենք ամբարել էինք Ղարսի ու Ալեքսանդրօպոլի պահեստներում: Գուցէ եւ այն, որ պահանջ էին զգում փորձելու իրանց ոյժերը նախ թոյլ հակառակորդի վրայ, որպէս զի ինքնավստահութիւն ձեռք բերէին՝ աւելի մեծ ու զփար ձեռնարկի համար...

Ոչ դժ չի կարող հաստատել, թէ այդ տրամադրութիւններն ու մտադրութիւնները թուրքերը իրօք ունէին. բայց հաւանական է որ ունենային, ուստի եւ հաւանական է որ պատերազմը անխուսափելի էր (քանի որ նա պէտք էր թուրքերին):

Այս ենթադրութիւններով հանդերձ՝ մի փաստ մնում է անհեր-

քելի, աղաղակող. մենք չենք արել այն ամենը, ինչ որ պէտք է անէինք — պարտական էինք անելու — պատերազմից խոյս տալու համար: Անկախ նրանից, թէ որքան կը յաջողէինք՝ մենք պէտք է փորձէինք հաշտութեան լեզու գտնելու թուրքերի հետ: Սա է, որ չենք արել:

Ու չենք արել շատ պարզ, բայց նոյնչափ էլ աններելի պատճառով. մենք անտեղեկ ենք եղել թուրքերի իսկական ոյժի մասին ու շատ վստահ ենք եղել մեր սեփական ոյժերի վրայ: Այստեղ էր հիմնական սխալը: Չէինք վախենում պատերազմից, որովհետեւ վստահ էինք թէ կը յաղթենք: Անփորձ ու տգէտ մարդկանց յատուկ անփութութիւնով, մենք տեղեկութիւն չունէինք թէ ինչ ոյժեր են կազմակերպել թուրքերը մեր սահմանագլխին եւ չէինք զգուշանում: Ընդհակառակը, Օլթիի հապճեպ գրաւումը՝ ձեռնոց էր, որ կարծես դիտմամբ նետում էինք թուրքերի երեսին, կարծես ինքներս որոնում էինք ու ցանկանում պատերազմ:

Երբ սահմանի վրայ զինական ընդհարումները սկսւած էին արդէն, թուրքերը առաջարկեցին մեզ տեսնել ու բանակցել: Մենք մի արհամարհական ժեստով մերժեցինք առաջարկը: Եւ դա մեծ յանցանք էր: Ոչ այն մտքով, որ վստահութիւն կար թէ բանակցութիւնները յաջողելու էին անպատճառ, այլ այն մտքով, որ մի խաղաղ ելք գտնելու անկարելի էր (անհաւանական, բայց ոչ անկարելի): Յամենայն դէպս, մենք որոշ շանսեր ունէինք՝ թուրքերին խօսք հասկացնելու:

Պէտք է յիշել ու հաշի առնել, որ 1920 թ. աշնան մենք բոլորովին *quantité négligeable* (արհամարհելի մեծութիւն) չէինք թուրքերի աչքում: Կախորդ երկու տարիների զուլումը անցել էր արդէն կամ անցնելու վրայ էր. ժողովուրդը մի քիչ կշտացել էր արդէն, մի քիչ հանգստացել, կազդուրւել. ունէինք բանակ, որ լաւ զինւած էր անգլիական զէնքերով ու մաքուր հագնւած անգլիական հագուստներով. ունէինք բաւականաչափ ռազմապաշար. մեր ձեռին էր Ղարսի պէս կարեւոր բերդը. վերջապէս — եւ որ ամենից ցուցադրելին էր — հրապարակում կար Սեւրի դաշնագիրը, որ այն ժամանակ վարկաբեկւած մի թղթի կտոր էր, այլ մի զօրեղ զէնք թուրքերի դէմ:

Մեր դրութիւնը այլ եւս այն չէր, ինչ էր Բաթումում, 1918 թ. Մայիսին: Մենք կարող էինք յուսալ, թէ մեր խօսքը հաշի կ'առնէի, մանաւանդ որ իրանք թուրքերը դեռ եւս պարտւածի վիճակի մէջ էին:

Այդ փորձը չարինք:

Ինչ պիտի առաջարկէին մեզ թուրքերը, եթէ ընդունէինք լատակցելու հրահրը:

Հաւանականօրէն պիտի սկսէին Բաթումից ու Բրեստ-Լիտովսկից եւ ապա՝ աստիճանաբար ղեջնելով՝ հասնէին մինչեւ 1914 թւականի սահմանները. գուցէ մի քայլ էլ ետ գնային, հրաժարւէին նաեւ Բայազէդից ու Ալաշկերտից: Անհաւանական է, որ սրանից աւելի ղեջող լինէին — նոյն իսկ 1920 թ. Սեպտեմբերին: Փոխարէնը կը պահանջէին, ի հարկէ, որ Հայաստանի կառավարութիւնը հրաժարւէր Սեւրի դաշնագրով նախատեսուած իրաւունքներէ:

Ինչպէս կ'ընդունէր այդպիսի մի առաջարկ Հայաստանի կառավարութիւնը:

Այլ մերժէր, անկասկած: Չէր ընդունի, չէր յանդգնի ընդունելու եւ կը գերադասէր պատերազմը: Եւ այդպէս կ'անէր ոչ միայն դաշնակցական Բիւրօ-կառավարութիւնը, այլ՝ եւ ամէն մի ուրիշ Հայ կառավարութիւն: Ընդգծում՝ եւմ այս հանդամանքը, որովհետեւ սրանով զգալիօրէն սահմանափակուում է մեր կուսակցութեան յանցանքի չափը:

Կառավարութիւնը չէր յանդգնի ընդունելու, որովհետեւ բոլոր քաղաքական կուսակցութիւններն ու խմբակցութիւնները, ազգային բոլոր դիւանագէտները, կոչած ու անկոչ հայրենիք փրկողները — թէ երկրի ներսը եւ թէ մասնաւոր երկրից դուրս — բոլորը իբրեւ մի մարդ կ'ըմբոստանային, կը քարկոծէին, միաբերան դաւաճան կը յայտարարէին այդպիսի մի կառավարութիւն. Սեւրի դաշնագիրը շլացրել էր բոլորիս աչքերը, կաշկանդել միտքը, մթնացրել իրականութեան գիտակցութիւնը:

Այսօր մենք հասկանում ենք, թէ որքան շահած կը լինէինք, եթէ 1920 թ. աշնանը՝ Սեւրի դաշնագրի գնով՝ անմիջական համաձայնութեան եկած լինէինք թուրքերի հետ: Բայց այն ժամանակ չէինք հասկանում:

Ոոսկ եւթադրութիւններ են սրանք ու կարելիութիւններ, որ յիշատակում եմ միայն այն ժամանակաւ մտայնութիւնը բնորոշելու համար:

Իսկ փաստը՝ պատերազմն էր:

Փաստը այն էր — աններելի փաստ — որ ոչինչ չարինք պա-

տերազմից խուսափելու համար, հակառակը՝ ինքներս անմիջական առիթ տւինք պատերազմի: Աններելին այն էր, որ տեղեակ չէինք թուրքերի ռազմական կարողութեան մասին ու չէինք ճանաչում մեր սեփական բանակը:

28. Պատերազմը վերջացաւ մեր կատարեալ պարտութիւնով:

Մեր բանակը, որ կուշտ էր, լաւ զինւած ու լաւ հագնւած, չը կուեց. զօրքերը շարունակ նահանջում էին կամ դիրքերը լքում, զէնքերը թափում ու ցրում գիւղերը:

Բանակը բարոյալքւած էր ներքին կռիւների շրջանում, անմիտ աւերումների ու անպատիժ թալանների շնորհիւ: Բարոյալքւած էր ու յոգնած: Խմբային ու խմբապետական սիստեմը, որ մասնաւորապէս խրախուսել էր Բիւրօ-Վառապարութեան կողմից, քանդել էր զինուորական կազմի ամբողջութիւնը, միութիւնը: Բանակի դաստիարակութիւնը, ռազմական ոգին, կուռ կազմակերպութիւնն ու կարգապահութիւնը — ուրեմն եւ բնագիմարական ոյժը — թուլացած էին ծայր աստիճանի ու դա անակնկալ էր կառավարութեան համար. կառավարութիւնը եւ ինքը զինուորական միխիստրը՝ չէին ճանաչում բանակը:

Ապա մի ճակատագրական սխալ արաւ կառավարութիւնը. զօրքերի թիւը աւելացնելու նպատակով, նոր ու նոր զինակոշներ էր անում, զէնքի տակ առնում հասակաւոր, յոգնած, ընտանեկան ու անտեսական հոգսերով ծանրաբեռնւած մարդկանց, հապճեպ ձգում ուսերին զինուորական վերարկուն, հրացանը ձեռը դնում ու անմիջապէս ճակատ ուղարկում: Պատրաստի դեղերտէօրներ էին սրանք, որ մի աւելորդ բարոյալքում ու կազմալուծում էին մտցնում զօրական շարքերի մէջ:

29. Նոյեմբերի երկրորդ կիսին, երբ Կարա-Բէքիր փաշայի յաղթական զօրքերը արդէն Ալեքսանդրօպօլ էին հասել, Բիւրօ-Վառավարութիւնը ներկայացրեց Պարլամենտին իր հրաժարականը. այլ եւս չէր կարող մնալ իշխանութեան գլուխը, պարտւած էր ու պարտութեան իսկ հետեւանքով՝ վարկաբեկւած: Ապա պէտք էր թուրքերի հետ խաղաղութեան բանակցութիւններ սկսել եւ գերադասելի էր, որ բանակցողները նոր մարդիկ լինէին:

Մի փոքր տատանումներից յետոյ (սկզբից ծրագրւում էր ուրիշ կազմի դահլիճ) կազմեց Ս. Վրացեանի կառավարութիւնը, գաշնակ-

ցականներին ու սօցիալիստ-յեղափոխականներին: Դաշնակցական մի-
նիստրները պատկանում էին կուսակցական «ձախ» նկատուած թեւին.
ինքը նոր վարչապետը ճանաչւած էր իբրեւ ուսական օրինենտացիայի
մարդ. իսկ սօցիալիստ-յեղափոխականները անձնական կապեր ունէին
Հայ-բօլշեւիկեան շրջաններում:

Մի հեռւոր յոյս կար, թէ բօլշեւիկները հրապարակ գալու դէպ-
քում (մի բան, որի անխուսափելիութիւնը սկսում էինք հասկանալ
արդէն), այսպիսի կազմ ունեցող կառավարութիւնը թերեւս կարողա-
նայ մի ընդհանուր լեզու գտնել նորեկների հետ:

30. Թուրքերը գրաւել էին արդէն Ալեքսանդրօպօլ:

Միաժամանակ Հայ բօլշեւիկները, ուսական կարմիր զօրքերի
գլուխն անցած՝ մտան Աղստաֆայի կողմից խլեւան ու Գեղիժան:

Կար արդեօք որ եւ է համաձայնութիւն բօլշեւիկների ու թուր-
քերի միջեւ:

Մեր շարքերում շատ տարածւած է այդ համոզմունքը: Կարծում
եմ, սակայն, որ սխալ է այդ. յամենայն դէպս՝ դրական ապացոյց չկայ:
Հաւանական է, որ բօլշեւիկեան գործակալները (կամ բօլշեւիկեան
տրամադրութիւն ունեցող անհատներ) աշխատել են քանդել ներսից
մեր բանակը: Բայց դրա համար հարկաւոր չէր որ եւ է համաձայնու-
թիւն թուրքերի հետ. յետոյ՝ մեր պարտութիւնը արագացնելու համար
շատ էլ կարեւոր չէր բօլշեւիկների միջամտութիւնը. բաւական էին
Շօրագետացի բիձաները, որոնց միակ միաքն ու միակ ցանկութիւնն էր՝
շուտով տուն վերադառնալ, հաւաքել, կասել ու ամբարել հացերը.
իսկ եթէ թուրքերը գալու են՝ փախցնել ընտանիքն ու տաւարը մի
ապահով տեղ...

Բօլշեւիկների դաւադրութիւնը չէր մեր պարտութեան պատճառը,
ոչ իսկ թուրքերի ոյժը (որ շատ էլ մեծ չէր այն ժամանակ), այլ մեր
սեփական ապիկարութիւնը:

Անշուշտ, բօլշեւիկները օգտւեցին մեր պարտութիւնից եւ շատ
բնական էր դա: Բայց դրա համար անհրաժեշտ չէր, որ կանխապէս
համաձայնութեան եկած ընէին թուրքերի հետ:

Դժար չէ հասկանալ, որ Ռուսաստանում յաղթանակը տանելուց
ու Աղբէջանում հաստատուելուց յետոյ, բօլշեւիկների հետեւեալ

քայլը պիտի լինէր՝ մտնել նաեւ Վրաստան ու Հայաստան։ Ժամանակի ինդիք էր սա։ Պէտք էր ընտրել մի բարեյաջող ժամ՝ գործողութիւնը առանց գլխացաւանքների կատարելու համար։ Հայաստանի ժամը հնչեց ու բօլշեւիկները արին Դեկտեմբերին այն, ինչ չը յաջողեցան անել Մայիսին։

31. Դեկտ. 1ին (թէ Նոյեմբ. 30ին), Ելեքսանդրօպօլում, մեր պատերակները ստորագրեցին թուրքերի հետ մի համաձայնութիւն, որ շատ էլ չէր տարբերուի բաթումի դաժան դաշնագրից։

Նոյն Դեկտ. 1ին Վրացեանի կառավարութիւնը հրաժարեց իշխանութիւնից ու յանձնեց այն բօլշեւիկներին։

Բօլշեւիկները մտան Հայաստան առանց որ եւ է ընդդիմադրութեան հանդիպելու։ Մեր կուսակցութեան որոշումն էր սա։

Երկու պատճառ ունէինք այդպէս վարելու։ Մէկ որ չէինք կարող ընդդիմադրել, եթէ նոյն իսկ ցանկանայինք — պարտաճ էինք, ուժասպառ. երկրորդ, յոյս ունէինք թէ Խորհրդային իշխանութիւնը՝ յենաճ Ռուսաստանի վրայ՝ թերեւս կարողանայ կարգաւորել մի քիչ պետական կեանքը — մի բան, որ մենք ինքներս, մենակ մնացած, չէինք կարողացել անել ու՝ պարզ էր արդէն՝ չը պիտի կարողանայինք այլեւս։

Մեր ցանկութիւնն էր. թողնել որ բօլշեւիկները անարգել կառավարեն երկիրը. մնալ լօյալ նոր իշխանութեան հանդէպ. գործակցել նրա շինարար աշխատանքներին։

Միաձայն չէր այս որոշումը։

Կային անհաշտներ, որոնք ոչ մի լաւ բան չէին սպասում բօլշեւիկներից, պահանջում էին ընդդիմադրութիւն ու կռիւ, նոյն իսկ ընդունելով պարտութեան անխուսափելիութիւնը։ Փոքր էր սրանց թիւը։ Երբ առաջարկը մերժեց, ամենից հետեւողականները թողին երկիրն ու հեռացան։

Կար եւ ուրիշ մի փոքրամասնութիւն, առաջինին հակառակ. սա ուզում էր կուսակցօրէն մերձենալ բօլշեւիկներին ու քաղաքական բլօկ կազմել նրանց հետ։ Սրանք առանձնացան, հանդէս եկան «ձախ դաշնակցականներին» անւան տակ ու բօլշեւիկեան ռզով յայտարարութիւններ արին։ Բայց յաջողութիւն չունեցան. բօլշեւիկները իրաւացիօրէն կասկածեցին սրանց անկեղծութեան վրայ ու երես չը տւին։

32. Երկու եւ կէս ամիս (առաջին շրջանում, մինչեւ փետրւարեան ապստամբութիւնը) կառավարեցին երկիրը բօլշեւիկները:

Աւատեսների յոյսերը չարդարացան: Այն օգնութիւնը — քաղաքական ու տնտեսական — որ սպասում էինք Ռուսաստանից, չտացւեց: Ապա՝ հաստատուեց մի բեժիմ, որին չի կարելի տալ ուրիշ անուն, քան սանձարձակ ու վայրագ բռնութիւն:

Ամէն մի ղեկատարաւ՝ արդէն իր էութեամբ՝ բռնութիւն է եւ ուրիշ բան չի կարող լինել: Ամէն մի յեղափոխական կառավարութիւն՝ կուսի շրջանում՝ հարկադրւած է ղիմելու կարուկ ու ծայրայեղ միջոցների, — սա եւս մի անխուսափելի անհրաժեշտութիւն է, որ բղիւմ է դրութեան էութիւնից: Բայց բօլշեւիկների բռնութիւնը ու Հայաստանում գործադրւած միջոցների դաժանութիւնը ունէին մի առանձնայատուկ գիծ, որ ամենից աւելի գրգռիչ ու անհանդուրժելի էին, — այն, որ անիմաստ էին բռնութիւնները, աւելորդ ու աննպատակ:

Եթէ բօլշեւիկները առաջին շրջանում ցոյց տային մի քիչ քաղաքական տաքտ (այնչափ, օրինակ, որչափ ունեցան յետագայում), նրանց դրութիւնը միանգամայն ապահովւած կը լինէր Հայաստանում. հակադիր դէպք, հակառակ հոսանքներ, զաւաղրող տարրեր չկային ասպարիզում: Բայց բօլշեւիկները չը հասկացան այդ, որոնեցին հակայեղափոխութիւն այնտեղ, ուր նա չկար ու իրանք իրանց դէմ՝ ղինեցին ժողովուրդը:

Փետրւարեան ապստամբութիւնը — բօլշեւիկների գործն էր ամբողջովին, բնական հետեւանք նրանց բռնութիւնների ու՝ մանաւանդ՝ անվերջ լռնագրաւումների, որ քանդում էին ժողովրդական տնտեսութեան վերջի մնացորդները, զրկում էին սովահար մարդկանց վերջի կտոր հացից:

Դաշնակցութիւնը ոչ միայն չի կազմակերպել, ոչ միայն չի ցանկացել, այլ եւ հակառակ է եղել ապստամբութեան:

Դիտեմ, որ ապստամբութեան նախօրեակին, մի քանի անհատ դաշնակցականներ, մի քանի գիւղերում (մասնաւորապէս՝ Առտայքում) որոշ մասնակցութիւն են ունեցել նախապատրաստութիւնների մէջ: Բայց սա կուսակցութեան գործը չէր, այլ կուսակցական անհատների: Ապստամբութիւնը բռնկւելուց յետոյ էր միայն, որ կուսակցութիւնը հրապարակ եկաւ: Այս անգամ եւս նա տարւեց մասսայական հոսանքով ու գլուխ անցաւ մի շարժման, որի հեղինակը ինքը չէր:

33. Ապստամբութիւնը դուրս քշեց բօլշեւիկներին Հայաստանի կենդրոնից դէպի ծայրագաւառներ, — դէպի Շարուր ու Ղազախ: Անմիջապէս հաստատուեց «Հայրենիքի փրկութեան կոմիտէն», որ իր ձեռն առաւ երկրի իշխանութիւնը ու վարեց կռիւները:

Ամիս ու կէս տեւեց քաղաքացիական պատերազմը:

Խեր շարքերում տարածւած է այն համոզմունքը, թէ ապստամբ ժողովուրդը լաւ կռւեց ու եթէ յաջողութիւն չունեցաւ, պարտուեց — պատճառը բօլշեւիկների գերազանցօրէն մեծ ոյժն էր: Ես հակառակ կարծիքի եմ: Լաւ կռւեցին, իսկապէս հերոսաբար կռւեցին՝ բօլշեւիկները, իսկ մերոնք վատ կռւեցին: Եթէ լաւ կռւէին, առաջին իսկ շարաթւայ ընդացքում կը ջարդէին հակառակորդին թէ Ղամարլուի եւ թէ Ելենօվկայի ճակատներում (հակաբօլշեւիկեան Վրաստանը դեռ կանգուն էր, դրսից օգնութիւն դեռ չէին ստացել բօլշեւիկները ու իրենց սեփական ոյժը շատ անշնչան էր Հայաստանում): Վատ կռւեցին ոչ այն պատճառով, ի հարկ է, որ չէին ուղղում կռւել (եթէ չուզէնային՝ չէին ապստամբի եւ տեղի չէր ունենայ այն ընդհանուր, անօրինակ խանդավառութիւնը, որին ականատես եղանք էրեւանում, ապստամբութեան առաջին օրերին). այլ այն պատճառով, որ վստահութիւն չունէին իրանց ոյժերի վրայ, չէին հաւատում յաջողութեան:

Ապստամբութիւնը — ջղացնցում էր, տարրերային, անգիտակից ու անհաշիւ: Բռնկւեց յանկարծակի, մի վայրկեան յայտ բերեց մեծ ոգեւորութիւն ու ոյժերի լարում. բայց իսկոյն իջաւ, յուսալքեց, գործընթացաւ:

Չեմ ուզում ասել, որ եթէ ապստամբները լաւ կռւէին, կը խորտակէին Խորհրդային իշխանութիւնը, — ոչ, պարտութիւնը կանխորոշւած էր ու անխուսափելի (մանաւանդ Վրաստանի անկումից յետոյ): Խերք կարող էինք կոտորել Հայաստանում եղած բոլոր բօլշեւիկներին (եւ դժար բան չէր դա, եթէ ապստամբութիւնը մի քիչ կաղմակերպւած լինէր). բայց այնտեղ էր Ռուսաստանն իր կարմիր բանակով. եւ հայ գիւղացիութիւնը չէր — ոչ էլ Հ. Յ. Գաշնակցութիւնը — որ պիտի դիմադրէին նրանց: Ուղղում եմ ասել միայն, որ ապստամբութիւնը իր իսկ ներսը կրում էր արդէն պարտութեան սաղմը, որովհետեւ հաւատ չունէր յաջողութեան:

34. Ապրիլի 2ին երբ բօլշեւիկները հասել էին արդէն Քանաքէր ու բռնել մայրաքաղաքի վրայ տիրող բարձրութիւնները՝ դատարկեցին Երեւան ու Բաշ-Վառնիի վրայով անցանք Պար-Ալագեազ:

Ապստամբների, կուսակցականների ու մարտիկների հետ էր նաեւ մի ահագին ամբոխ — հազարներով ու հազարներով ահաբեկած մարդիկ, որոնք հաշիւ չէին տալիս իրանց, թէ ուր են գնում եւ ինչի համար գնում:

Անխուսափելի պարտութիւնը կատարւած փաստ էր արդէն: Այն, ինչ որ տեղի ունեցաւ յետագայ երկու-երեք ամիսների ընթացքում՝ Պար-Ալագեազի ու Զանգեզուրի մէջ՝ պայքար չէր այլեւս, այլ հոգեվարք:

Երեւանի անկումից յետոյ, Ղեռնասայաստանի խորհրդացումը՝ օրերի խնդիր էր միայն եւ մեր ներկայութիւնը թերեւս արագացրեց — ասում եմ որոշ վերապահումներով — իրերի բնական ընթացքը:

Մենք կարծում էինք թէ՛ անցնելով Ղեռնասայաստան՝ կ'ուժեղացնէք տեղացիներին, մի բան կ'աւելացնէք նրանց դիմադրական կարողութեան վրայ: Հաշիւ չէինք առել, որ պարտւած, կազմալուծւած ու նահանջի ճամբան բռնած խումբերը — եւ մանաւանդ սարսափահար ամբոխը կարող են առաջ բերել միայն լքում ու յուսահատութիւն:

Տեղացիները խէթ աչքով նայեցին մեզ, անհիւրընկալ եղանակով գոհ կը լինէին, եթէ ամենեւին եկած չը լինէինք, — մանաւանդ որ ուտում էինք իրանց վերջի պատառ հացը:

Ահամայից շփոթ էինք մտքերը տեղական կեանքի մէջ:

Ծագել էր մի խուլ հակառակութիւն՝ եկւոր ու տեղական իշխանութիւնների միջեւ: Վազմւում էին, լուծւում, նորից կազմւում ու իրար փոխարինում զանազան անուններ կրող մարմիններ, որոնցից ոչ մէկն էլ իրական իշխանութիւն չէր ներկայացնում:

Մարտական թափը հալւում էր ու պակասում օր օրի վրայ: Եկւոր զինւորների մի մասը, անթի ու դժգոհ տեղացիներից, տուն վերադառնալու մասին էր մտածում միայն. տաճկահայ խմբերը (զինւած ու անզին) ձգտում էին օր առաջ Արաքսի ափը հասնել ու Պարսկաստան անցնել: Տեղացիները տեսնում էին զօրքերի քայքայւած վիճակը, տիրող անիշխանութիւնը ու կասկածում էին իրանց կատարեալ անզօրութեանը վրայ՝ շեմքի վրայ կանգնած բօլշեւիկների հանդէպ:

Ամրան վերջերին դատարկեցինք Զանգեզուրը, Ռամկավար Հան-
րապետութեան վերջի կայանը:

Հայաստան խորհրդայնացաւ ամբողջովին:

35. Ո՞րն էր անկախութեան շրջանում կատարած մեր դիւանա-
գիտական աշխատանքը դրսի աշխարհում (Պոլսում, Եւրոպայում ու
Ամերիկայում) եւ ի՞նչ արդիւնք էր տւել այն:

Որովհետեւ այս պատմական ամփոփումը — հակառակ իմ ցան-
կութեան — երկարացաւ չափից աւելի, կը բաւականանամ յիշատա-
կելով երկու ծայրերը միայն — սկիզբն ու վերջը:

1919 թ. գարնան, Պարիզում, Հանրապետութեան պատւիրա-
կութիւնը, Ազգային պատուիրակութեան հետ միասին, ներկայացրեց
դաշնակից մեծ պետութիւններին մի յուշագիր՝ մեր պահանջները խա-
ղաղութեան Համաժողովից:

Ըստ այդ յուշագրի, հայ պետութեան սահմանների մէջ պիտի
առնւէին.

ա) Անգրկովկասեան Հանրապետութիւնը ընդլայնացրած սահ-
մաններով (Երեւանեան նահանգը ամբողջովին, Ղարսի շրջանը առանց
Արդահանի հիւսիսային մասից, Թիֆլիսի նահանգի հարաւային կէսը,
Գանձակ նահանգի հարաւ-արեւմտեան մասը):

բ) Թիւրքահայաստանի եւթը վիլայէթները (Աւն, Բաղէշ, Դիար-
բեքրի, Խարբերդ, Սերաստիա, Կարին ու Տրաքիդոն, դուրս ձգելով միայն
Դիարբեքրիի հարաւային ու Սերաստիայի արեւմտեան շրջանները):

գ) Կիլիկիայի շրջս սանջակները (Մարաշ, Սիս, Ճէպէլ-Բերեքէթ
ու Ատանա՝ Ալեքսանդրոսով):

Ծրագրում էր ու պահանջում մի լայնատարած պետութիւն,
մի մեծ Հայաստան՝ Սեւ ծովից մինչեւ Միջերկրականը, Ղարաբաղի լեռ-
ներից մինչեւ արարական անապատները:

Որտեղից ծնունդ առաւ աշխարհակալական այդ ապշեցուցիչ պա-
հանջը:

Ոչ Հայաստանի կառավարութիւնը, ոչ էլ պետական կեանքին
ուղղութիւն տուող կուսակցութիւնը՝ Հ. Յ. Գաշնակցութիւնը՝ մոքով
անգամ չէին անցկացրել այդպիսի մի ցնորամիտ, տղայական ծրագիր:
Ընդհակառակը, մեր պատուիրակութիւնը՝ իրրեւ հրահանգ՝ տարել էր

Երեւանից շատ համեստ պահանջներ, համապատասխան մեր շատ համեստ կարողութիւնների:

Ինչպէս պատահեց, ուրեմն, որ պատուիրակութիւնը ստորագրեց ու ներկայացրեց «Ծովից-ծով» պահանջը:

Տարօրինակ ու միանգամայն անհաւատալի կը թւի, բայց փաստը այն է, որ հայկական Պարիզը որոշեց այդ եւ մեր Պատուիրակութիւնը պարզապէս տարւեց գաղութներում տիրող հոսանքով, ենթարկւեց դրսի ազդեցութիւններին ու թոյլ տւեց ահաբեկելու իրան — մի բան, որ այնքան ծանօթ է մեզ:

Պատուիրակութեան ասել էին, որ եթէ չը պահանջի այդ հրապուրիչ սահմանները, թուրքահայերը (յանձինս Ազգային պատուիրակութեան) կ'անջատեն իրանց դատը «Արարատեան», հանրապետութեան դատից ու մեզանից անկախ դիմում կ'անեն պետութիւններին: Ապա ասել էին փոքր Հայաստանի մանդատը Ամերիկան յանձն չի առնի, իսկ «Ծովից-ծովներ» կ'առնի: Եւ որովհետեւ մեր դատը Պետութիւնների առաջ պաշտպանելու համար շատ վտանգաւոր կը լինէր երկու տարբեր, իրար հետ պայքարող մարմինների ու երկու տարբեր, իրար հակասող սահմանային պահանջների գոյութիւնը, ապա որովհետեւ ամերիկեան մանդատը մեր մեծագոյն ցանկութիւնն էր ու լաւագոյն յոյսը — ուստի Պատուիրակութիւնը՝ հակառակ ստացած հրահանգների՝ դրեց իր ստորագրութիւնը ու ներկայացրեց յուշագիրը: Իսկ Հայաստանի կառավարութիւնը՝ իր անունից ներկայացւած պահանջի մասին՝ տեղեկութիւն ստացաւ երկու թէ երեք շաբաթ յետոյ միայն:

Արկնում եմ դարձեալ. Մեր պատուիրակութիւնը մեղադրելու համար չէ, որ արձանագրում եմ այս դէպքը եւ ոչ էլ ուզում եմ ասել, թէ եթէ այն ժամանակ չափաւորած լինէինք մեր պահանջները, յետագայում տարբեր արդիւնք պիտի ստանայինք: Ոչ, ուզում եմ միայն յիշեցնել մի անգամ եւս, թէ ինչպէս՝ ամենից հիմնական, ամենից մեծարժէք ու ամենից պատասխանատու խնդիրներում իսկ՝ մենք չենք ունեցել մեր հաստատուն կամքը, չենք վարել գործերը ըստ մեր հասկացողութեան, չենք գնացել մեր սեփական ճամբով, այլ թոյլ ենք տւել, որ ուրիշները տանեն մեզ իրանց ետեւից, ուր կ'ամենան:

Պարիզի յուշագիրը շատ ոգեւորեց խակ մտքերը, մանաւանդ գաղութներում: Այնպիսի մի մտայնութիւն էր ստեղծւել, որ կարծես

գծելով թղթի վրայ պետութեան սահմանները, արդէն տէր ենք դառել այդ սահմաններին կամ՝ առնւազը՝ անխախտելի իրաւունքներ ենք ձեռք բերել: Այնուհետեւ ամէն մի կասկած յաջողելու մասին թարգմանուած էր իրրեւ փոքրհոգութիւն, չափաւոր լինելու ամէն մի տրամադրութիւն՝ իրրեւ դաւաճանութիւն եւ ամէն մի հակառակութիւն զրսից՝ իրրեւ թշնամութիւն հանգեւ պէր դատի ու իրաւունքներին:

Անիմատտ պահանջներին ու չափազանցած պահանջներին բնականօրէն պիտի հետեւէր դառն հիասթափում:

Սեւրի դաշնագիրը, որ չէր յիշատակում ոչ Աիլիկիա, ոչ Խարբերդ ու ոչ Սվալ (բայց նախատեսում էր այնպիսի լայն սահմաններ, որոնք թերեւս վեր էին մեր կարողութիւններից) — արդէն այդ իսկ դաշնագիրը առաջ բերեց հիասթափում ու սովորական գանգաւաններ: Ասում էինք. Պետութիւնները անարդար եղան, չը գնահատեցին ու չը վարձատրեցին մեզ ըստ մեր արժանիքների, կրճատեցին մեր անվիճելի իրաւունքները, զրկեցին...

Մի քիչ անցած՝ նոր ու շատ մեծ հիասթափում. Հիւսիս-Ամերիկեան Միացեալ Նահանգների Սենատը մերժեց կտրականօրէն ստանձնել Հայաստանի մանդատը — այն իսկ մանդատը, որի վրայ այնքան յոյսեր էինք դրել մենք:

Նախագահ Ուիլսոնի ծրագրած Հայաստանի սահմանները նոյնպէս չը բաւարարեցրին մեզ, նոր գանգաւանների տեղ տւին: Ասում էինք. նախագահ Ուիլսոնը կարող էր աւելի լրիւ օգտագործել Սեւրի դաշնագիրը ու աւելի մեծ հողեր յատկացնել մեզ:

Բայց եւ այդ նիւղ համարւած սահմանները — մի տեսակ կապոյտ թուռն եղաւ մեզ համար, անշօշափելի ու անհասանելի:

Թուրքերը չէին ուղում ձանաչել ո՛չ Ուիլսոնի վճիռը, ո՛չ մեր գանգաւանները, ո՛չ իսկ Սեւրի դաշնագիրը: Փոխանակ դատարկելու հայկական հողերը, նրանք եռանդօրէն զինւում էին ու ամրացնում դիրքերը. իսկ դաշնակից պետութիւնները ոչ մի արամադրութիւն չէին ցոյց տալիս՝ զէնքի դժով ի կարգ հրաւիրելու անհնաղանդ անգօրացիներին. դեռ հակառակը՝ սիրային ֆլիրտ էին սկսել միլիտարիստների հետ... դաշնակիցները մոռանում էին, կարծես, որ մենք մնացել ենք անբաւարարւած ու իրանց սեփական գործերն էին կարգադրում:

[Յաճախ ասում եմ “մենք”, “մեր” առանց ճշտելու դերանունը,

որովհետեւ շատ դէպքերում չեմ տարբերում կուսակցութիւնը ժողովրդական զանգւածներից. նոյն հոգեբանութիւնը, նոյն անհեռատեսութիւնը, նոյն անգիտակցութիւնը իրականութեան, քաղաքական նոյն տհասութիւնը]:

1922 թւականին սկսեց թիւրքահայ դատի հոգեվարքը:

Լնդոնի կոնֆերանսում առաջի անգամ, պաշտօնապէս արտասանեց ու արձանագրեց Home բառը: Սեւրի դաշնագիրը մոռացել էր հիմնովին: Այլ եւս խօսքը անկախ հայ պետութեան մասին չէր, ոչ իսկ ինքնավար նահանգների, այլ ինչ որ ազգային Home-ի — մի կասկածելի օջախի ուրիշի տան մէջ:

Բայց — ասում էին — սա վերջին զիջումն է, որ արւում է խաղաղութեան սիրոյն համար՝ յամառող Անգորային: Home-ի պահանջը պարտադիր պիտի լինի Թուրքիայի համար ու ինքը Home-ը՝ անկախ թուրք իշխանութիւնից:

Այսպէս էր տրւած հարցը Մարտ ամսին:

Տարւայ վերջը, Լոզանում, գործը մի քիչ տարբեր ընթացք առաւ. Home չառաջադրւեց իբրեւ պահանջ, այլ ներկայացրեց թուրքերի բարեհաճութեան իբրեւ բարեկամական խորհուրդ ու խնարհ խնդիր: Տեղի ունեցաւ մի օպերետային դիալոգ: Թուրքերը՝ միշտ քաղաքավարի ու սիրալիր՝ շատ ցաւեցին, որ պիտի մերժեն բարեկամական խորհուրդը ու առաւել եւս՝ որ հարկադրւած են չը յարգելու խնդիրը: Դաշնակից մեծ պետութիւնները մի յուսահատական ժեստ արին. մենք սպառնցինք մեր բոլոր միջոցները, ասին, արինք ամէն հնարինն ու անհնարինը, այլ եւս ոչինչ չենք կարող անել խեղճ հայերի համար... ու անցան կուպօնների խնդրին:

Բայց այստեղ հանդէս եկաւ ընկ. Զիչեքինը ու խորհրդային Ռուսաստանի անունից մեծահոգաբար առաջարկեց տեղ տալ թուրքահայութեան մնացորդներին Ղրիմում, Վոլգայի ափերին ու Սիբիրում:

Պետութիւնը վերածւեց Home-ի, Home-ը վերածւեց գաղութների... Սիբիրում: Սարը մուկ ծնեց — ո՛չ, սարը երկնեց անասելի տանջանքների մէջ, ցնցեց հիմքերից, պատառ պատառ եղաւ, արեան հեղեղներ հոսեցրեց արգանդից ու ծնեց ոչինչ, ոչ իսկ մի մուկ:

Այս էր անցեալը:

Եթէ ուզենանք մի ընդհանուր գնահատում անել մեր կատարած շատ ծանր աշխատանքի ու ձեռք բերած արդիւնքների՝ Հանրապետութեան անկախութիւնը հռչակելուց յետոյ, պէտք է ասենք՝ որ պարծենալու շատ բան չունենք. պէտք է ասենք, որ մեզ վիճակած բեռը — պետութիւն կազմելու ու պետական կեանքը ղեկավարելու գործը — մեր ոյժերից շատ վեր է եղել:

Անհրաժեշտ է, որ Հայաստանի դրութիւնը եղել է բացառիկօրէն ծանր ու մեր աշխատանքի պայմանները՝ բացառիկօրէն անբարեյաջող: Բայց անհրաժեշտ է եւ այն — անհրաժեշտ է գտնէ ինձ համար — որ սրա վրայ աւելացել է նաեւ մեր սեփական անկարողութիւնը, պետական գործեր վարելու անձեռնհասութիւնը:

Եթէ ճիշտ է, որ կառավարել՝ ասել է նախատեսել, ապա ուրեմն մենք միանգամայն անպէտք կառավարիչներ ենք եղել, որովհետեւ հէնց այդ նախատեսներու ընդունակութիւնն է, որ չենք ունեցել բնաւ:

Մենք շարունակ սխալած ենք եղել մեր հաշիւների մէջ ու շարունակ անակնկալների հանդիպած, անակնկալների միայն մեզ համար, որովհետեւ չենք գիտեցել նախատեսներ:

Մեր ամենամեծ թուլութիւնը այդ է եղել:

Ապա չենք ունեցել որոշ ու յստակ գիտակցութիւն մեր անելիքի մասին, չենք ունեցել մի ղեկավարող սկզբունք ու տեւողական, հետեւողական սիստեմ, գործել ենք կարծես յանկարծակի ու պատահական ներշնչումների տակ, տատանւել ենք, պատից-պատ ընկել, կէս-կուրօրէն շօշափելով ուսերիս տակի հողը:

Չենք ճանաչել ու յաճախ գերագնահատել ենք մեր կարողու-

Թեան չափը, չենք հասկացել դժարութիւնների մեծութիւնը, արհամարհել ենք հակառակ ոյժերը եւ թեթեւամտութեան աստիճանի անիոյթ ենք եղել մեզ սպառնացող վտանգների հանդէպ:

Կարուէկ ենք եղել այնտեղ, ուր պէտք էր ծայրայիշ զգուշութիւն. ու անվճռական այնտեղ, ուր պէտք է կարուէկ լինէինք:

Չենք կարողացել տարբերել պետութիւնը կուսակցութիւնից ու կուսակցական մտայնութիւն ենք մտքերը պետական կեանքի մէջ:

Պետական մարդիկ չէինք մենք:

Պակաս անբարեյաջող պայմաններում թերեւս կարողանայինք՝ սխալելով ու քնթահարւելով հանդերձ՝ գտնել վերջապէս ճամբան, ոտներս մի տեղ ամրացնել ու կամաց-կամաց շինել, կարգաւորել պետական շէնքը: Բայց այն սոսկալի պայմանների մէջ՝ մենք չէինք, որ պիտի կարողանայինք — առանց որ եւ է յենարանի, միայն մեր ոյժերին թողւած — կատարել այդ հերկուլեան աշխատանքը:

Թող ոչոք չը վերաւորւի այս խօսքերից. անբարեացակամ մարդու չարախնդութիւն չէ սա, այլ մի պարզ ինքնագնահատում: Չէ՞ որ անկարողների առաջի շարքում՝ ձեր կողքին ու ձեզ հետ միասին՝ եղել եմ եւ ես. ես ձեր գործակիցն եմ եղել, ձեզ հետ ու ձեզ չափ պատասխանատու մեր պարտութեան:

Պատասխանատու, ասի... Քաջութիւն չունեմ՝ աւելացնելու, որ մենք ոչ միշտ ու ոչ հարկաւոր չափով գիտակցել ենք, թէ ինչ մեծ պատասխանատուութիւն ենք վերցրել մեզ վրայ. ապա նաեւ, թէ ոչ միշտ ու ոչ հարկաւոր չափերով բարեխիղճ ենք եղել մեր պարտականութիւնների հանդէպ... Քաջութիւն չունեմ, որովհետեւ վախենում եմ թէ անարդար լինեմ: Բայց — ո՞վ գիտէ — գուցէ ինձանից աւելի անաչառ մի մարդ այդ էլ ասի ու անխրաւացի չը լինի...

* * *

Ի՞նչ է ներկան:

Արաքսի ու Սեւանի միջեւ ունենք այսօր մի փոքրիկ Հանրապետութիւն, անունով անկախ, իսկ իրօք՝ վերհաստատող Ռուսական կայսրութեան ինքնավար ծայրագաւառներից մէկը:

Թիւրքահայաստան չկայ — ոչ իբրեւ պետութիւն, ոչ իբրեւ

Home, ոչ իսկ իբրեւ միջազգային դիւանագիտութեան խնդիր. խնդիրը փակւած է, սպաննւած ու թաղւած լողանում:

Աւելին՝ թիւրքահայաստանում հայ չկայ այլեւս ու չկայ ոչ մի հաւանութիւն, թէ լինելու է այսուհետեւ. թուրքերը պինդ փակել են դռները ու ասպարիզում չկայ, չի երեւում ոչ մի ոյժ, որ հարկադրէր բանալու:

Մօտ մի միլիոն հայ գտնւում է Հայաստանի Հանրապետութեան սահմանների ներսը. միլիոնից աւելի մնում է դուրսը (Վրաստան, Ազրբէյջան, Հիւսիսային Կովկաս, Պարսկաստան, Սիրիա, Պոլիս, Բալքաններ ու ապա՝ աշխարհի ամէն կողմը):

Գրսեցիների մի շնչին մասը միայն կարող է ապաստանարան գտնել Հայաստանի Հանրապետութեան մէջ: Անկախ ժամանակաւոր դժարութիւններից, Հանրապետութեան խիստ նեղ սահմանները թոյլ չեն տալիս զանգւածային ներգաղթներ (յատկապէս՝ հայկական վիլայէթներից ազատւած գիւղացիութեան ներգաղթը): Միւս կողմից, պահաս արգելք չի ներկայացնում նաեւ Անդրկովկասից դուրս գտնւող գաղութային հատւածների սօցիալական դէմքը — մանր քաղքենիութիւն, որ տնտեսապէս կապւած է առեւտրական կենդրոնների հետ ու չի կարող՝ սահմանափակ թւից աւել՝ ապրուստ գտնել Հայաստանի պէս աղքատ ու աւեր գիւղացիական երկրում:

Ընդհանուր առմամբ՝ գրսեցի հայերը պետական տարր չեն այսօրւայ Հայաստանի համար:

Եւ որքան երկար տեւի ներկայ գրութիւնը, այնքան աւելի պիտի խորթանան ու օտարանան, անպէտք գառնան: Իբրեւ ազգային տարր, թերեւս մի առ ժամանակ ներկայացնեն որոշ արժէք (եւ սա մեծապէս կախւած կը լինի նրանից, թէ որքան ընդունակ կը լինենք կազմակերպւելու՝ ազգային կապն ու գիտակցութիւնը կենդանի պահելու համար գաղութների մէջ). բայց իբրեւ պետական տարր մնում են միայն Հայաստանի հայութիւնը եւ այն խոշոր հատւածները — գլխաւորապէս գիւղացիութիւնը — որ գտնւում են Հանրապետութեան դրացի Վրաստանում ու Ազրբէյջանում: Մրանց վրայ պիտի յենւի ու սրանց համար հաստատուի հայ պետութիւնը:

Գաղութային հայութիւնը — լաւագոյն դէպքում — մնալու է իբրեւ օժանդակող ոյժ (այն էլ շատ համեստ չափերով) ու մի տեսակ պահեստ՝ անորոշ ապագայի համար:

Այսօր հայ քաղաքական մտքի անմիջական իդեալատարութեան առարկան պիտի լինի գոյութիւն ունեցող Հանրապետութիւնը, նրա մէջ ու նրա շուրջ ապրող հայ ժողովուրդը:

Ընդգծում եմ ուժգնօրէն այս նախադասութիւնը ու յանձնում ձեր առանձին ուշադրութեան, որովհետեւ սա պիտի լինի մեր ապագայ անելիքի ելակէտը:

* * *

Ի՞նչ դիրք պիտի բռնի մեր կուսակցութիւնը այդ Հանրապետութեան, նրա րեժիմի ու կառավարութեան հանդէպ:

Հանրապետութիւնը անկախ չէ, նա կաղմում է դաշնակցական Անդրկովկասի ու՝ ապա՝ դաշնակցական Ռուսաստանի մի մասը. փաստօրէն՝ մի ինքնավար նահանգ է Հայաստան, Մոսկւայի հսկողութեան ու հրամանատարութեան տակ:

Այս դրութիւնը կարող է արդեօք բաւարարել մեր կուսակցութիւնը, սա՞ է արդեօք մեր քաղաքական իդէալը:

Ի հարկէ, ոչ:

Վերելում յիշատակեցի արդէն, որ 1918 թ. գարնան Հ. Յ. Դաշնակցութիւնը ակամայ ձայնակցեց Ռուսաստանից անջատելու առաջարկին. մենք հակառակ էինք բաժանման, վախենում էինք բաժանւելուց, ուղում էինք կապած մնալ Ռուսաստանին: Բայց դա չի նշանակում, թէ ձգտում չունէինք անկախութեան, թէ վաստակական դրութիւնը՝ մեր իդէալն էր:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իմ խորին համոզումով, միշտ եղել է ու միշտ մնացել — գիտակցօրէն թէ անգիտակցօրէն — հայ քաղաքական ազատագրաման մարտիկը, իսկ այդ ազատագրաման վերջի կայանը — անկախ պետութիւնն է: Մեր կուսակցութեան էութիւնը, գոյութեան իմաստը, պատմական կոչումը, ոյժն ու արժէքը — այդ է եղել ու միայն այդ: Զի եղել ու չկայ ոչ մի իսկական դաշնակցական — ինչ հովերով էլ տարւած լինի նա, ինչ ֆրազէօրգիա էլ ունենայ բերանում — որ ներշնչած չը լինի անկախութեան գաղափարով, աւելի ճիշտը՝ լեցած չը լինի անկախութեան բնազդով: Եւ այդ իմաստով մեր կուսակցութեան սահմանները շատ աւելի ընդարձակ են, կուսակցական-

ների թիւը շատ աւելի մեծ է, քան արձանագրւած է կօմիտէական տետրակների մէջ:

Այս միտքը ես երկարօրէն զարգացրել եմ անցեալ դարնան «Ճակատամարտի» մէջ եւ այստեղ իրաւունք չեմ համարում կրկնելու: Ուղում եմ ասել միայն, որ Հայաստանի ներկայ քաղաքական վիճակը — իդէալ չէ ու չի կարող լինել Հ. Յ. Գաշնակցութեան համար:

Անշուշտ, մենք ամենաջերմ կողմնակից ենք եղել (ու այսօր էլ ենք) Ֆեդերացիայի եւ գիտենք, որ Հայաստանի պէս մի փոքրիկ պետութիւն այլ կերպ չի կարող ապահովել իր գոյութիւնը: Բայց մենք ուղում ենք այնպիսի ֆեդերացիա, որի մէջ դաշնակցող պետութիւնները մտնում են ազատ կամքով ու հաւասար իրաւունքներով: Ռուսաստանի ներկայ ֆեդերացիան այդպէս չի կազմւած:

Հայաստանի Հանրապետութիւնը խորհրդային է: Խորհրդային իրաւակարգը տեսականօրէն ենթադրում է՝ մինչեւ դասակարգերի անդառնալի վերացումը՝ պրօլետարիատի դասակարգային դիկտատուրա. իսկ իրականապէս՝ այսօրւայ Հայաստանի իշխանութիւնը կօմմունիստական կուսակցութեան դիկտատուրա է:

Կարո՞ղ է բաւարարել մեզ այդ բնոյթի մի իշխանութիւն:

Ի հարկէ, ոչ:

Ճիշտ է, որ մենք ինքներս մի անյաջող փորձ ենք արել՝ մեր սեփական դիկտատուրան հաստատելու: Բայց դիկտատուրան (ոչ կուսակցականը, ոչ դասակարգայինը) դաւանանք չէ մեզ համար: Անվարժ պետական կեանքի ու վարչական աշխատանքի, թունաւորւած իշխանութեան թոյնով, մենք չը կարողացանք դիմադրել գայթակղութեան ու սայթաքեցանք: Բայց արդէն զգացել էինք մեր սխալը ու նահանջելու ճանապարհներ էինք որոնում. եւ եթէ ուշացնէինք, պիտի տապալէինք անխուսափելիօրէն: Որովհետեւ ոչ միայն մեր կուսակցական դաւանանքը, այլ եւ ազգային կազմը աննպաստ է, հակառակ է որեւէ դիկտատուրայի: Հայաստանում չկայ ոչ մի դաս կամ շերտ, ոչ մի կուսակցութիւն կամ խմբակցութիւն, որ կարողանայ իր ոյժերով ու իր վրայ յենւած՝ դիկտատուրա հաստատել: Մեր երկրում կայուն դիկտատուրա կարող է իրականացնել միմիայն դրսի, օտար ոյժը, բայց ոչ երբեք՝ տեղականը: Մեր երկիրը կարծես յատկապէս ստեղծւած է դեմօ-

կրատական իրաւակարգի համար եւ պակասում է մի բան միայն՝ քաղաքական դաստիարակութիւն ու պետական կեանքի վարժութիւն: Այդ մեծ պակասը դժարացնում է իսկական ռամկավար կարգեր հաստատելու, բայց չի կարող յենարան դառնալ ներքին դիկտատուրայի համար:

Խորհրդային Գաշնակցութեան, ուրեմն եւ Հայաստանի Հանրապետութեան մէջ սօցիալ-տնտեսական կեանքը վերաշինւում է (կամ փորձ է արւում վերաշինելու) կոմունիստական սկզբունքներով:

Համարում ենք մենք հարկաւոր ու օգտակար այդպիսի մի քաղաքականութիւն Հայաստանի համար:

Ոչ, չենք համարում:

Եւ սա միանգամայն անկախ նրանից, թէ մեր կուսակցութեան դաւանած սօցիալիզմը որքան գիտակցւած ու մարտւած է, որքան համապատասխանում է կուսակցական իրական կադմին ու հաւաքական մտայնութեանը: Ես, որ առանց տատանւելու գրում եմ այդ կտրուկ «ոչ» — իմ աշխարհահայեցողութիւնով ես շատոնցւայ ու անուղղելի կոմունիստ եմ. բայց գիտեմ, որ ոչ միայն կոմունիստական, այլ եւ պարզ սօցիալիստական կարգերը անհանդուրժելի են այսօրւայ Հայաստանի համար:

Հայաստան չի հասունացած սօցիալիզմի համար ու չունի օրեկտիւ տւեալների այն միւնիմումը, որ կարողանար արդարացնել փորձը: Ամեն մի ճիգ այդ ուղղութեամբ կանխօրէն դատապարտւած է անյաջողութեան ու յանցանք է՝ յառկապէս հայ աշխատւորութեան հանդէպ:

Այս խնդրի մասին էլ ընդարձակօրէն գրել եմ անցեալ տարի նոյն «Ճակատամարտի» մէջ: Բաւականանում եմ այս. մի քանի կարճ տողերով միայն, վստահ լինելով որ այս կէտում տարածայնութիւն չկայ մեր մէջ:

* * *

Այսպիսով՝ Խորհրդային Հայաստանի ոչ քաղաքական վիճակը, ոչ վարչաձեւը, ոչ էլ ներքին սօցիալ-տնտեսական քաղաքականութիւնը չեն կարող բաւարարել մեզ. մենք ուրիշ բան ենք ուզում, քան այսօրւայ Հանրապետութիւնը:

Ուրեմն ի՞նչ դիրք պիտի բռնենք այդ Հանրապետութեան, նրա քեթիմի ու կառավարութեան հանդէպ:

Պարզ ու կարճ պատասխանն է. Պիտի պայքարենք:

Բայց կարճ ու պարզ պատասխանները յաճախ սխալ են լինում, երբ հարցը վերաբերում է բարդ երեւոյթների ու կոնկրետ դրու-
թիւնների:

Քաղաքական կուսակցութիւնները գիտական ձեւամարտներ չեն, որ հետազոտութեան են առնւում ու տեսականօրէն լուծւում վերա-
ցական խնդիրներ. քաղաքական կուսակցութիւնները կոչւում ունեն ոչ
թէ տեսութիւններ զարգացնելու (սա օժանդակող աշխատանք է միայն),
այլ գործելու եւ գործելու տւեալ կօնկրետ պայմանների մէջ:

Երբ հարցը այս հորի վրայ դնենք — ու պէտք է որ դնենք, այլա-
պէս չարաչար սխալւած կը լինենք — պատասխանը արդէն ուրիշ կը լինի:

Պայքարը ենթադրում է մի որոշ նպատակ եւ այդ նպատակին
հասնելու համար՝ մատչելի ու արդիւնաւէտ միջոցներ:

Ո՞րոնք են մեր միջոցները եւ ի՞նչ արդիւնք կարող է տալ նրանց
գործադրութիւնը:

Եթէ խորհրդային կարգերը ճանաչէին քաղաքացիական ազատու-
թիւններ, մենք՝ իրրեւ օպօզիցիա՝ հանդէս կը գայինք մամուլի ու հրա-
պարակային ժողովների մէջ, կը քննադատէինք խորհուրդների սխալ
քաղաքականութիւնը, հասարակական կարծիք կը պատրաստէինք, մեր
շուրջը համակիրներ կը հաւաքէինք, կը կազմակերպէինք դժգոհ ու
ընդդիմադիր տարրերը:

Եթէ խորհրդային կարգերը ճանաչէին նաեւ քաղաքական իրա-
ւունքների հաւասարութիւն, մենք կը մասնակցէինք ընտրողական պայ-
քաներին, կ'աշխատէինք տեղեր գրաւել խորհուրդներում ու մեր ցան-
կացած ուղղութիւնները մտցնել օրէնսդրութեան ու վարչաձեւի մէջ:

Բայց խորհրդային իշխանութիւնը չի ուղում ճանաչել ոչ քաղա-
քացիական ազատութիւններ, ոչ էլ քաղաքական իրաւունքների հաւա-
սարութիւն — կուսակցական (ասենք՝ դասակարգային) դիկտատուրա
է նա: Մենք կարող են շատ ցաւել այս առթիւ, գանգատւել, բողոքել,
զայրանալ... Բայց դրութիւնը չի փոխւի, փաստը կը մնայ փաստ. իրրեւ
օրինական օպօզիցիա՝ մենք տեղ չունենք Հայաստանում:

Ասում եմ՝ Հայաստանում, որովհետեւ չեմ ըմբռնում օպօզի-
ցիայի արժեքը Հայաստանից դուրս:

Ի հարկէ, գաղութներում մենք կարող ենք խօսել ու գրել, որքան
կամենանք ու ինչ կամենանք: Գրա համար հարկաւոր է միայն թուղթ
ու տպարան, այսինքն՝ մի քիչ դրամ եւ ուրիշ ոչինչ: Բայց Խորհրդ-
դային Հայաստանի համար քանի՞ գրօշի արժեք ունի ռուսահայ կամ
եգիպտահայ գաղութների հասարակական կարծիքը (ենթադրելով իսկ,
թէ այդպիսի կարծիք իրօք կը յաջողի ստեղծել):

Գուցէ գաղտնի մտցնել մեր տպագրական խօսքը Հայաստան...

Անցեալներում, ցարական թեփմի տակ, մենք մտցնում էինք երկիր
«Գրօշակը» եւ ուրիշ հրատարակութիւններ. իսկ այսօր — եթէ չեմ
սխալւում — սօցիալիստ-յեղափոխականները շարունակում են մտցնել
Ռուսաստան իրանց արտասահմանեան գրականութիւնը: Չը գիտեմ,
ինչ յոյսեր ունեն սօցիալիստ-յեղափոխականները եւ որքան յաջողեց-
նում են գաղտնի պրօպագանդը: Բայց, հաշի առնելով մեր իրականու-
թիւնն ու մեր կարողութիւնը, հարց եմ տալիս. ինչ նշանակութիւն
պիտի ունենան մեր թերթիկները, որ գաղտագողի պիտի կարդայ մի
քանի հարիւր մարդ՝ հանդէպ այն հսկայ գրականութեան, որով բոլ-
շեւիկները հեղեղում են երկիրը: Ախտնում եմ, որ մեր փորձի միակ
հետեւանքը լինի այդ մի քանի հարիւր մարդու կեանքի կամ ազատու-
թեան վտանգումը եւ ուրիշ ոչինչ:

Իսկ որ ամենից կարեւորն է՝ գաղտնի պրօպագանդի համար հար-
կաւոր են շատ որոշ, կտրուկ, հեշտ ըմբռնելի ու զանգւածներին
ոգեւորելու քնդունակ բանաձեւեր — մի բան, որ մենք չունենք, չենք
կարող ունենալ:

Այս առթիւ՝ մի քիչ յետոյ:

Թերեւս կարելի լինի համաձայնութեան գալ բօլշեւիկների հետ:
Տարօրինակ է թւում, բայց փաստ է որ այդ միտքը — կամ այդ
միամտութիւնը — ունեցել ենք անցեալում ու փորձ ենք արել կոու-
սակցօրէն դաշնակցել բօլշեւիկների հետ: Տարօրինակ է թւում, որով-
հետեւ դա ասել է պարզապէս չը հասկանալ բօլշեւիզմի եռութիւնը:
Բօլշեւիզմը միահեծան է, ինքնակալ. ով իր մէջը չէ (կամ քաղաքակա-
նօրէն բացարձակապէս չեղդ չէ), իր դէմ է արդէն: Ապա մի մոռանաք,

որ բաշխելիքների աշխուժում մենք մանր-քաղաքական կուսակցութիւն
ենք (մի բան որ, իմ կարծիքով, ոչ արատ է, ոչ էլ հեռու ճշմարտու-
թիւնից, եթէ հաշիւ առնելու լինենք ոչ թէ մեր ծրագիրն ու անհատ
ղեկավարների աշխարհաստեղծութիւնը, այլ կուսակցութեան իրական
կազմն ու նրա հաւաքական մտայնութիւնը). եւ եթէ բաշխելիքների
համար անհանդուրժելի են մարքսիստ-մենշեւիկները ու սօցիալիստ-
յեղափոխականները, բնական է որ էլ աւելի անհանդուրժելի լինի
Հ. Յ. Գաշնակցութիւնը:

Յանուն ինչի՞ ու ի՞նչ նպատակներով պիտի դաշնակցեն մեզ հետ
բաշխելիքները:

Մենք սիրում ենք հաւատացնել եւ մեզ, եւ ուրիշներին, թէ
առանց մեր գործակցութեան բաշխելիքները չը պիտի կարողանան կառա-
վարել Հայաստան: Ինչի՞ վրայ ենք հիմնում այս սպառնալիքը եւ ինչո՞ւ
բաշխելիքները պիտի հաւատան, թէ իրօք մենք այդքան պէտք ենք
իրանց: Ահա երկու տարի է, որ մենք աքսորւած ենք Հայաստանից կամ
խեղդւած Հայաստանի մէջ: Ի՞նչ դժարութիւնների են հանդիպել
բաշխելիքները, որ գոյութիւն չէին ունենայ կամ վերացւած կը լինէին,
եթէ մենք իրանց հետ լինէինք: Ինձ յայտնի չեն այդ կարգի դժարու-
թիւններ. արամադիր եմ կարծելու, թէ իսկ էլ չեն եղել:

Կասկած չկայ, որ իբրեւ սոսկ քաղաքացիներ, մենք ներկայաց-
նում ենք որոշ արժէք. բայց ո՞ր քաղաքական կուսակցութիւնը կամ
ո՞ր կառավարութիւնը շեղւել է իր քաղաքական գծից ու դաշնակ-
ցել հակառակորդի հետ՝ մի քանի հարիւր քաղաքացիներ շահելու
համար...

Յամենայն դէպս — իրաւացի թէ անիրաւացի, խելքի շատու-
թիւնից թէ խելքի պակասութիւնից — փաստն այն է, որ բաշխելի-
քները չեն ուղղում ճանաչել մեր կարեւորութիւնը, չեն որոնում ու չեն
ընդունում մեր գործակցութիւնը:

Փորձեր արել ենք արդէն ու մերժում ենք ստացել: Նորից
փորձել՝ ոչ միայն պարապ ու ապարդիւն, այլ եւ անվայել բան կը
լինէր: Պարապ ու ապարդիւն, որովհետեւ եթէ մէկ կամ երկու տարի
առաջ պէտք չենք եղել բաշխելիքներին, այսօր էլ աւելի պէտք չենք.
անվայել, որովհետեւ կայ արժանապատուութեան մի սահման, որից չի
կարող անցնել կուսակցութիւնը եւ մոլորացիկի դեր ստանձնել:

Մնում է իլլեգալ, դադարի, դաւադրական կամ — աւելի լայն չափերով — յեղափոխական աշխատանք:

Զէ՞ որ մենք հալածւած էինք նաեւ Ցարական ու Սուլթանական կառավարութիւններից: Այժմ չե՞նք կարող անել խորհրդային Հայաստանում նոյնը, ինչ անում էինք տարիներ շարունակ Տաճկահայաստանում:

Կարող ենք, ի հարկէ:

Կարող ենք մի բուն դնել պարսկական Ղարադաղում (ինչպէս մի ժամանակ բուն էինք դրել Սալմաստի մէջ) ու այստեղից ղէնք ու մարդանցկացնել Արաքսի միւս ափը: Կարող ենք գաղտնի կապեր հաստատել ու զինւած խմբեր պահել Սիւնիքի կամ Գարալագեաղի լեռներում, ինչպէս պահում էինք Սասունի լեռներում կամ Շատախի ձորերում: Կարող ենք՝ դժարմատելի վայրերում՝ ապստամբեցնել մի քանի գիւղ, դուրս քշել կամ կոտորել այնտեղի կօմմունիստներին: Ապա կարող ենք աղմկալի ցոյցեր անել Երեւանի իսկ մէջ — օրինակ՝ գրաւել մի քանի ժամով որ եւ է պետական հիմնարկութիւն, ինչպէս մի ժամանակ գրաւեցինք Օսմանեան բանկը. կարող ենք պայթեցնել այս կամ այն շէնքը. կարող ենք կազմակերպել ու կատարել անհատական սպանութիւններ, կոտորել մի քանի բօլշեւիկ, ինչպէս կոտորել ենք սուլթանական ու ցարական պաշտօնեաներին. կարող ենք ռումբ պայթեցնել Մեասնիկեանի կամ Լուկաշինի — կամ չգիտեմ ո՞ւմ — ոտների տակ, ինչպէս Երլդիդ-քէօշքում պայթեցրել ենք սուլթան Աբդուլ Համիդի ոտների տակ...

Այդ բոլորը կարող ենք անել, — կարծում եմ թէ կարող ենք անել:

Հարց է ծագում միայն, թէ ի՞նչ յոյսերով կամ ի՞նչ նպատակով անենք:

Երբ ցոյցեր էինք անում Թիւրքիայում, կարծում էինք թէ այդպիսով կը հրաւիրենք մեր վրայ մեծ պետութիւնների բարեացակամ ուշադրութիւնը ու կը հարկադրենք միջամտելու մեր օգտին: Այժմ մենք գիտենք այդ միջամտութեան իսկական արժէքը ու թուում է ինձ, թէ նոր փորձեր անելու կարիք չունենք այլեւս: Եթէ բարեխնամ Եւրոպան չուզեց կամ չկարողացաւ օգնել մեզ Թիւրքիայում, դժար չէ հասկանալ, որ էլ աւելի չոր պիտի ուզենայ կամ չը պիտի կարողանայ օգնել Ռուսաստանում:

Ահաբեկման սիստեմը՝ իրրեւ անհատներին զսպելու միջոց՝ թերեւս ունէր որոշ նշանակութիւն, երբ գործ ունէինք քուրդ գերեզնէյիների կամ ցարական շինովներին հետ: Բայց պիտի ընդունենք, որ բոլշևիկները մի քիչ տարբեր խմորի մարդիկ են: Եթէ փոխադարձ ահաբեկման խնդիր դրեւել լինի, բոլշևիկները մեզանից ետ չեն մնայ, գեռ միերկու քայլ էլ առաջ կ'երթան. այնտեղ, ուր մենք փորձ կ'անենք ահաբեկել անհատներ, նրանք կ'ահաբեկեն ամբողջ զանգւածներ:

Կարո՞ղ ենք խռովութիւններին այնպիսի ծաւալ տալ, որ վերածւեն քաղաքացիական պատերազմի:

Հատ անհաւանական է: Բայց — վերջ ի վերջոյ — սա էլ անկարելի բան չէ: Եթէ լրջօրէն մտադրենք, շատ աշխատենք ու միջոցների առաջ կանգ չառնենք — թերեւս կարողանանք:

Բայց ինչի համար:

Կարո՞ղ ենք յուսալ, թէ զէնքով դուրս կը քշենք Հայաստանից բոլշևիկներին, երբ նրանք կանգուն են Ռուսաստանում եւ երբ մենք մեր թիկունքում ունենք բոլշևիկների դաշնակից միլիտական Թիւրքիան:

Ձեռն կարծում, թէ այսօր գանի մեր մէջ մէկը, որ այդքան միամիտ մտածողութիւն ունենայ: Քաղաքացիական կռիւր — եթէ ծագի էլ — պիտի վերջանայ մեր պարտութիւնով: Բոլշևիկները հայկական բեժիմ չէ եւ Հայաստանում չէ, որ պիտի տապալէի (եթէ միայն տապալւելու է): Հայկական բոլշևիկները — շարունակութիւնն է ու մի փոքրիկ մասը ռուսական բոլշևիկների. քանի Մոսկւայում ծածանւում է կարմիր դրօշակը, նա ծածանւելու է անխուսափելիօրէն նաեւ Երեւանում: 1918 թւականին մենք կարող էինք, իրաւունք ունէինք այլ կերպ մտածելու. այսօր այդ իրաւունքը չունենք:

Բայց չէ՞ որ բոլշևիկներն ունի անհաշտ հակառակորդներ նաեւ Ռուսաստանում ու խորհրդային ուրիշ ծայրագաւառներում՝ հէնց մեր հարեան վրաստանում ու Ազրբէյջանում: Բնական չէր լինի, որ մենք դաշնակցէինք այս դժգոհների հետ ու սրանց հետ միասին, ընդհանուր դժբերով, փորձէինք խորտակել կոմունիստների դիկտատուրան:

Հատ բնական կը լինէր: Բայց հէնց այդ է, որ չպիտի անենք:

Հայ ժողովուրդը շատ է տուժած, շատ է յոգնած ու ուժասպառ. իրաւունք չունենք նոր փորձանքների մէջ ձգելու նրան, նոր պատահարների ենթարկելու, նոր զոհաբերութիւններ պահանջելու: Եղածը

բաւական է, կարծեմ: Հակաբօլշեւիկեան Ռուսաստանը թող առանց մեզ վարի իր պայքարը Խորհուրդների դէմ: Մենք չկանք: Հայ ժողովուրդը կատարեալ իրաւունք ունի մի րոպէ շունչ քաշելու ու իր վերքերը բուժելու մասին մտածելու: Իսկ եթէ մէկը չուզեց ճանաչել մեր այդ իրաւունքը, չը հաւանեց բռնած դիրքին — թող չը հաւանի:

Մի քայլ էլ առաջ գնամ, որպէս զի միտքս լրիւ պարզած լինեմ: Եւ ինձ հարց եմ տալիս. եթէ — ինչ որ հրաշքով — ինձանից ու միայն ինձանից կախած լինէր բօլշեւիկների գոյութիւնը Հայաստանում, եթէ բաւական լինէր իմ մի մատի շարժումը, որպէս զի բօլշեւիկները մի ակնթարթում անհետանային մեր երկրից — կ'անէի՞ արդեօք այդ շարժումը: Ու պատասխանում եմ առանց տատանւելու. ոչ, չէի անի: Ոչ միայն չէի անի, այլ եւ ձեռս կը կտռէի, որպէս զի երազիս մէջն անգամ՝ պատահաբար կամ սխալմամբ՝ չանեմ այդ շատ վտանգաւոր շարժումը:

Բօլշեւիկները՝ քաղաքական ներկայ պայմանների մէջ՝ պէտք են Հայաստանին եւ չկայ մի ուրիշ ոյժ, որ կարողանար փոխարինել նրանց — ահա՛ ճշմարտութիւնը:

Մեր պետական կեանքի առաջի օրերից իսկ մենք լաւ հասկանում էինք, որ Հայաստանի պէս մի փոքրիկ, աղքատ, աւերած ու աշխարհից կտրւած պետութիւն, չի կարող իրօք անկախ ու ինքնակալ լինել, որ հարկաւոր է միւնեցուկ, մի գրսի ոյժ, որի վրայ նա կարողանայ յենւել — գոնէ իր գոյութեան առաջին շրջանում, մինչեւ կազմակերպւեն ու ոյժերը հաւաքելը:

Այդպիսի միւնեցուկ մենք որոնեցինք հեռաւոր Ամերիկայում, ապա Եւրոպայում: Արդիւնքը գիտէք: Եթէ երկու-երեք տարի առաջ դեռ կարող էինք որոշ յոյսեր ունենալ, այսօր այդ կարգի յոյսեր չկան այլ եւս ու յամառելը՝ յանցաւոր միամտութիւն կը լինէր մեր կողմից:

Չը գիտեմ, ինչ անակնկալների առաջ է դնելու մեւ հեռաւոր ու անյայտ ապագան. բայց ներկան ու սյսօրանից տեսանելի ապագան՝ պարզ է միանգամայն: Մեզ համար երկու իրական ոյժ կայ այսօր, որ հաշի պիտի առնեն. Ռուսաստանն ու Թիւրքիան: Իրերի բերմամբ մեր երկիրը այսօր ռուսական օրրիտի մէջ է ու՝ խոշոր չափերով՝ ապահոված Թիւրքիայից: Եթէ վերացւի ռուսական հեգեմոն-

նիան, նրան անխուսափելիորէն պիտի փոխարինի թուրք-թաթարական
հեգեմոնիան:

Ռուսաստանը կամ Թիւրքիան, բոլեւիկները կամ միլիտականները
— ուրիշ ընտրութիւն չունենք անելու:

Եւ երբ կանգնած ենք այդպիսի ալտերնատիւի առջեւ, տատա-
նումներ՝ թուում է ինձ՝ տեղի չը պիտի ունենան. ի հարկէ, Ռուսաս-
տանը եւ ո՛չ Թիւրքիան, ի հարկէ, բոլեւիկները եւ ո՛չ միլիտականները:

Եթէ ընտրութիւնը այդքան սահմանափակ չը լինէր, մենք շատ
առարկութիւններ կ'ունենայինք անելու Ռուսաստանի դէմ առհասարակ
ու բոլեւիկեան սեփիմի դէմ՝ յատկապէս: Բայց մեր երկրի դժբաղդ
աշխարհագրական դիրքը կապում է մեր ձեռներն ու ռոտները:

Հայաստան պէտք ունի բոլեւիկներին, որովհետեւ պէտք ունի
Ռուսաստանին:

Զը գիտեմ, ինչ է լինելու վաղը (կարծում եմ, թէ շատ էլ չը
պիտի տարբերւի սյուրւանից). բայց այսօր Ռուսաստանի տէրը՝ բոլեւիկ-
ներն են: Այսօր Ռուսաստանի բարեացակամութիւնն ու պաշտպանու-
թիւնը ունենալու համար, Հայաստան ինքը խորհրդային պիտի լինի:
Ուրիշ եւք չկ'ոյ — ես գոնէ չեմ տեսնում:

Եւ այս մտքով է ահա, որ ասի վերեւում, թէ մենք լօղունգներ
չունենք՝ Հայաստանում հակաբոլեւիկեան գաղտնի պրօպագանդ անելու
համար:

Նոյն հարցը, մի քիչ տարբեր ձեւով, դնեմ անցեալի վերաբերմամբ:

Բոլեւիկների Հայաստան գալը արդեօք դժբաղդութիւն էր մեր
երկրի համար:

Հարցը կարող է թւել շատ անսպասելի դաշնակցականի բերա-
նում. մենք վաղուց արդէն տւել ենք մեր պատասխանը եւ բոլեւիկ-
ների օգտին չի եղել այն: Բայց մի անգամ էլ մտածենք ու աշխատենք
չը տարւել կուսակցական նեղսրտութիւնով:

Արկնել չեմ ուզում, թէ որ աստիճանի անհամապատասխան է
խորհրդային բեփիմը Հայաստանի իրական պահանջներին. այս խնդիրը
ինձ համար չի վերցնում ոչ մի վէճ:

Ապա գիտեմ ու շատ լաւ յիշում եմ, թէ ինչեր արին բոլեւիկ-
ները Հայաստանում — խօսքս այն երկու ու կէս ամսայ մասին է

(Գեկտ. 1920 թ. — Փետրուար 1921 թ.), երբ ես եղել եմ Հայաստանում: Գիտեմ ու յիշում եմ, թէ որքան մարդիկ են տուժել եւ թէ տուժողների առաջին շարքերում եղել ենք մենք, դաշնակցականներս: Հէնց ես անհատապէս եւ ձեզանից շատերը — ենթարկւած ենք եղել ամենածանր հալածանքների, տուժել ենք չարաչար:

Նկատեմ անցողակի, որ պէտք չէ մոռանանք այս խիստ կարեւոր հանգամանքը ու զգոյշ պիտի լինենք մեր եղբակացութիւնների մէջ. իբրեւ տուժող կողմ, մենք բնականօրէն տրամադրւած ենք միայն վատը տեսնելու եւ այդ վատը չափազանցնելու...

Երբ ես մտաբերում եմ այն դրութիւնը, որի մէջ էինք 1920 թ. Նոյեմբերին, ու ապա հարց եմ տալիս ինձ. աւելի լաւ կը լինէր արդեօք, եթէ բոլշեւիկները այն ժամանակ չը մանէին Հայաստան ու թողնէին երկիրը իր բազդին, մեր իշխանութեան տակ — պատասխանս բացասական է լինում. ոչ, աւելի լաւ չէր լինի, աւելի վատ կը լինէր:

Արդէն այն ժամանակ էլ հասկանում էինք մեր դրութեան անելանելիութիւնը եւ սա՛ էր պատճառը, որ Հայաստանի դռները լայն բաց արինք բոլշեւիկների առջեւ:

Ղերբում ասի, որ մեր յոյսերը չարգարացան. ոչ քաղաքական, ոչ էլ անտեսական օգնութիւն չստացանք Ռուսաստանից (խօսքս դարձեալ առաջին շրջանի մասին է): Օրինակ՝ Թիւրքիայի դէմ՝ բոլշեւիկները չը պաշտպանեցին Հայաստանը ու իրանց ստորագրութիւնով հաստատեցին Ալեքսանդրօպօլի դաշնագիրը, որ մենք ստիպւած էինք կնքել բնաջնջման սպառնալիքի տակ: Այս այսպէս է: Բայց կը յարգէին արդեօք թուրքերը Նոյն դաշնագիրը ու՞ զանազան պատրւակների տակ, որ դժար չէր յորինել՝ նոր ռանձգութիւններ չէին անի արդեօք, եթէ բոլշեւիկները եկած չը լինէին ու մենք մենակ մնացած լինէինք իրանց դէմ:

Ի՞նչ պիտի անէինք մենք այդպիսի ռանձգութիւնների գէպքում — մենք, որ պարտւած ու ուժասպառ էինք, կորցրել էինք ամէն հեղինակութիւն թէ՛ երկրից դուրս եւ թէ՛ երկրի ներսը:

1920 թ. աշնան վերջերը մենք՝ իբրեւ կառավարութիւն ու իբրեւ կուսակցութիւն՝ սպառել էինք մեր բոլոր ոյժերը, բնկել էինք անելի մէջ: Եւ եթէ բոլշեւիկները ուշանային, մենք պիտի կանչէինք իրանց, որովհետեւ ինքներս անդօր էինք արդէն, իսկ երկրում չկար մի այլ ոյժ, որ այն օրերին կարողանար փոխարինել մեզ:

Տեսէք հետեւանքները:

Երկու տարի ու կէս կառավարեցինք մենք երկիրը. մօտ երկու ու կէս տարի է, որ կառավարում են բօլշեւիկները:

Մենք ունեցանք պատերազմներ՝ Արաստանի, Աղբբեյանի ու Թիւրքիայի գէմ: Բօլշեւիկները պատերազմ չունեցան: Մենք ունեցանք անընդհատ ու բազմաթիւ ներքին կռիւներ՝ Աղբբա, Զօդ, Զանգի-Բաղար, Վեդի-Բաղար, Միլիի ձորերը, Շարուր, Նախիջեւան, Զանգեզուր. բօլշեւիկները ներքին կռիւներ չունեցան, բացի փետրուարեան ապստամբութեան հետ կից կռիւները: Մենք շարունակ պահում էինք երկիրը ղէնքի տակ, անընդհատ կռիւների մէջ, զբաղեցրել էինք բոլոր աշխատաւոր ձեռները պատերազմի դաշտերում, մինչդեռ ամենամեծ կարիք ունէինք շինարար աշխատանքների. բօլշեւիկները ազատեցին ժողովուրդը այդ աղէտից, այդ անտանելի ծանր բեռից:

Մեր ժամանակ ժողովուրդը կոտրւում էր կամ հիւժոււմ սովից: Մենք աւերեցինք այնպիսի հացառատ վայրեր, ինչպիսի են Շարուրն ու Վեդին, այնպիսի անասնառատ վայր, ինչպիսի է Աղբբան — աւերեցինք առանց օգուտելու հարստութիւններից: 1920 թւականի բերբը — միակ առատ բերբը, որ պիտի ունենայինք սով-տարիներից յետոյ — տւինք (ուրիշ շատ հարստութիւնների հետ միասին) քեռղիմ՝ Արաբերէրի փաշայի բանակին: Իսկ այսօր լսում եմ, թէ Հայաստան կշտացել է, համարեա կարիք չունի հացի: Եւ հաւատում եմ. չէ՞ որ ժողովուրդը ժամանակ ունեցաւ ցանելու եւ կասելու:

Մենք շատ աշխատեցինք, բայց չկարողացանք վերհաստատել քիչ շատ կանոնաւոր հաղորդակցութիւն դրսի աշխարհի հետ, Անդրկովկասեան երկաթուղիները փաստօրէն փակ մնացին մեզ համար: Բօլշեւիկները բացին ճամբաները. Զուլֆայի վրայով այսօր Երեւանը հաղորդակցութեան մէջ է պարսկական Ատրպատականի հետ, Բագլի վրայով՝ արեւելեան Ռուսաստանի ու Անդրկասպեան երկիրների հետ, Բաթումի վրայով՝ հարաւային Ռուսաստանի ու Եւրոպայի հետ:

Մեր ժամանակ Հայաստան կուրացել էր մթութեան մէջ, արեւը մայր մանելուց կէս ժամ յետոյ դադարում էր ամէն շարժում ու աշխատանք, որովհետեւ լուսաւորելու նիւթեր չունէինք բօլշեւիկները առատ կերօսին բերին Բագլից ու ազատեցին երկիրը խաւարի գերիութիւնից...

Անշուշտ, շատ բան չէ այս ամէնը. բայց չէ՞ որ այդ քիչն էլ մենք չկարողացանք անել:

Բօլշեւիկները պէտք էին ու այսօր էլ պէտք են Հայաստանին:

Բայց եւ այնպէս, բօլշեւիկեան սիստեմը՝ իր ամբողջ էութեամբ՝ անընդունելի է մեզ համար:

Ի՞նչ անել ուրեմն:

Գուցէ պայքարել դրսից:

Սա կարող էր ունենալ որոշ արժէք՝ ներսում կատարուող բացայայտ կամ գաղտնի պայքարին դժ տալու համար. իսկ առանց այդ պայմանի, ո՞ւմ կամ ինչի՞նչ է պէտք մեր դրսի վայնաստներ:

Այսօր Եւրոպական քաղաքները լեցուն են ամէն գոյնի ուռւ էմիգրանտներով, մեզ պէս կեանքից դուրս ձգւած մարդկանցով (մօնարքիսաներից սկսած մինչեւ սօցիալիստ-յեղափոխականները): Արանք բաղմամբ թերթեր են հրատարակում, գրքեր են գրում, միտինգներ կազմում, կոչեր անում, բողոքում, սպառնում ու հայհոյում, հայհոյում բօլշեւիկներին...

Ես չէ գիտեմ մի ուրիշ «գործ», որ այնքան պարագ ու այնքան ողորմելի լինէր, որքան սրանց արածն է:

Այս բառային որոտ-կայծակներով է արդեօք, որ արտասահմանեան էմիգրանտները պիտի խորտակեն Խորհրդաների դժը, պայթեցնեն ժող-կօմները, չէ՝ կաների գլուխը կտրեն...

Սա պայքար չէ, այլ անճարակութեան մի խայտառակ ցուցադրութիւն: Բօլշեւիկի դէմ կուռղը՝ ներսից պիտի զարնի, որպէս զի հարւածը տեղը հասնի. իսկ պատսպարուել սահմանի ետեւը ու ապահով հեռաւորութիւնից բռնուցք ցոյց տալ — սա մի ժեստ է, որ յամենայն դէպս վայել չէ Հ. Յ. Գաշնակցութեան:

Մեր միջ կան մարդիկ, որոնք կարծում են թէ՛ մնալով քաղաքականապէս հակառակ բանակում, Հ. Յ. Գաշնակցութիւնը դրսից պիտի օժանդակի Հայաստանի տեսեսական վերաշինութեան:

Ի՞նչպէս:

Պիտի կազմակերպի — համաջակցի կազմակերպելու — զանազան առեւտրական ու արդիւնաբերական ընկերութիւններ, որ ապրանք

մոցնեն Հայաստան, այնտեղի հում նիւթը վաճառի հոսնն արտասահմանեան շուկաները, արհեստանոցներ ու գործարաններ հիմնեն երկրում, հողեր ոռոգեն, գիւղատնտեսական մշակոյթի կատարելագործած ձեւեր ու մեքենաներ ներմուծեն եւ այլն:

Մի կողմ թողնելով այն խնդիրը, թէ ո՞րքան մենք՝ իբրեւ կուսակցութիւն՝ ձեռնահաս ենք այդ կարգի առեւտրա-արդիւնաբերական կամ խնամատարական-բարեգործական գործունէութեան եւ թէ արդեօք մեր միջամտութիւնը ցանկալի՞ է գործի յաջողութեան տեսակէտից, հարց եմ տալիս. կարո՞ղ է արդեօք մի քաղաքական կուսակցութիւն ծրագրել իր համար այդպիսի աշխատանք: Ա՛րնդունէք, կարծեմ, որ չի կարող, որ դա իր բանը չէ. ծրագիր ու գործունէութիւն չէ դա քաղաքական կուսացութեան համար, այլ պարզ ինքնաժխտում:

Եթէ Հ. Յ. Գաշնակցութիւնը, այդ ծամբի վրայ կանգի, այդ ուղղութեամբ գնայ, — նա արդէն յայտարարած կը լինի, որ կորցրել է իր *raison d'être*-ը:

Առեւտուրը պէտք է թողնել առեւտրականներին, արդիւնաբերութիւնը՝ արդիւնաբերողներին, բարեգործութիւնը՝ բարեգործական հաստատութիւններին: Գաշնակցութիւնը ուրիշ բան պիտի անի, եթէ միայն ունի մի բան անելու:

* * *

Եթէ ունի անելու...

Երկրի ներսը՝ կուսակցօրէն՝ ոչ կարող ենք գործակցել բօլշեւիկների պետական աշխատանքին, ոչ էլ օրինական օպօզիցիա կազմել, որքան էլ ցանկանանք մէկը կամ միւսը:

Ստորերկրեայ, դաւադրական գործունէութիւն չը պիտի ունենանք, խորհրդային իշխանութիւնը պայթեցնելու փորձեր չը պիտի ցանկանանք անել, եթէ նոյն իսկ կարողանանք:

Խօսքով պայքարել դրսից ու գաղութներում հակաբօլշեւիկեան պրօպագանդ անել, երբ ներսից պայթեցնելու մտադրութիւն չունենք եւ երբ դրսի խօսքը չի լսելու երկրում — անիմաստ ու անվայել բան է:

Աշխատակցել դրսից Հայաստանի տնտեսական վերաշինութեան, առեւտրական ու արդիւնաբերական ընկերութիւններ կազմել — դա քաղաքական կուսակցութեան գործը չէ:

Ի՞նչ անել ուրեմն:

Ահա այստեղ է, որ պիտի ասեմ այն շատ ծանր խօսքը, որ՝ գիտեմ՝ վրդովեցնելու է ձեզ, բայց որը պետք է ասել վերջապէս եւ ասել պարզօրէն, առանց քողարկումների ու մեղմացումների:

Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս:

Մեր կուսակցութիւնը արել է արդէն իր ամբողջ անելիքը ու սպառել է իրան: Կեանքի նոր պայմանները առաջադրում են հրամայօրէն նոր պահանջներ. այդ նոր պահանջներին մենք անընդունակ ենք պատասխան տալու, ուրեմն պիտի թողնենք ասպարէզը մեզանից աւելի կարողներին:

Հարկ կայ արդեօք մէկ անգամ եւս յիշեցնելու, թէ որո՞նք են նոր պայմանները: Ահաւասիկ: —

Թիւրքահայաստան չկայ այլեւս: Եւրոպական մեծ պետութիւնները լքել են մեր դատը: Հայ ժողովուրդի մի կէսը կոտորւած է կամ ցրւած աշխարհի չորս կողմը. միւս կէսը տնաւեր է ու արիւնաբամ, կարօտ երկար հանգիստի: Հայաստանի Հանրապետութիւնը՝ իրբեւ մի ինքնավար նահանգ՝ կցւած է Խորհրդային Ռուսաստանին. բաժանել մեր պետութիւնը Ռուսաստանից չենք կարող, եթէ նոյն իսկ ցանկանանք եւ չը պիտի ցանկանանք, եթէ նոյն իսկ կարողանանք: Կուսակցութիւնը պարտւած է ու կորցրած իր հեղինակութիւնը, երկրից դուրս է արւած, չի կարող վերագառնալ տուն, իսկ գաղութներում գործ չունի անելու:

Այս է այսօրւայ կացութիւնը:

Կուսակցութիւնը չի կարող ասել. որովհետեւ կամ, ուրեմն մի գործ պիտի ստեղծեմ ինձ համար — ինչ գործ էլ լինի: Տրամաբանական սխալ է. այդ «որովհետեւի» ու «ուրեմնի» դասաւորութիւնը, նախադասութիւնը պետք է կազմել ճիշտ հակառակ ձեւով. որովհետեւ բան չունեմ անելու, ուրեմն չը պիտի լինեմ: Գործը չէ կուսակցութեան համար, այլ կուսակցութիւնն է գործի համար եւ այնտեղ, ուր չը կայ կուսակցական գործ, չի կարող լինել կուսակցութիւն:

Ասի, որ Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս: Սխալ արտայայտւեցի, ունի մի վերջին անելիք, մի գերագոյն պարտականութիւն՝ հանգէպ Հայ քաղաքական դատի ու հանդէպ իր սեփական անցեալի. պետք է իր իսկ որոշումով՝ գիտակցօրէն ու վճռականօրէն՝ վերջ դնի իր գոյութեանը:

Ինքնասպանութիւն է առաջարկածս, այո՛ւ:

Բայց լինում են դրութիւններ, որոնցից միակ պատւաւոր էլքը՝ ինքնասպանութիւնն է: Մեր կուսակցութիւնը այդ դրութեան մէջ է:

Խակապէս, այդ պիտի անէինք սրանից դեռ չորսհինգ տարի առաջ: Երբ՝ 1918 թ. Յունիսին՝ ստորագրեցինք Բաթումի դաշնագիրը, որով հրապարակ էր իջնում ու միւս պետութիւնների կողքին իր համեստ տեղը գրաւում Հայ անկախ Պետութիւնը եւ երբ՝ նոյն թւականի Օգոստոսին՝ բացինք Հայ Խորհրդարանը, որով նորածին պետութիւնը իրական ձեւ ու մարմին էր ստանում — ահա այն ժամանակ արդէն մենք պիտի կազմալուծէինք ու տեղ տայինք նոր քաղաքական խմբակցութիւնների. մեր պատմական միասիան վերջացած էր արդէն: Եւ ի՞նչ գեղեցիկ վախճան կը լինէր դա՛ մեր քառորդդարեան կեանքին, մեր երկար ու դժար աշխատանքին, արիւնշալի պայքարին ու ահռելի զոհաբերութիւններին վերջակէտ դնելու համար:

Բայց այն օրերին մենք չհասկացանք, թէ կուսակցութեան գործը վերջացած է, թէ պատմութիւնը մտնում է նոր փուլի մէջ եւ թէ այդ նոր փուլի համար հարկաւոր է ոյժերի նոր դասաւորում: Չը հասկացանք, քաջութիւն չունեցանք հասկանալու:

Թերեւս ներելի է, որ 4—5 տարի առաջ, այն եռուղեռի մէջ, մենք չը գիտցանք մեր անելիքը: Բայց այսօր դրութիւնը շատ աւելի պարզ է, կեանքի պահանջը՝ շատ աւելի հրամայական: Չը տեսնել իրականութիւնը այսօր՝ կը նշանակէր կոյր լինել երկու աչքով: Եւ եթէ այսօր էլ վճռականութիւն չունենանք՝ առաջներիս անփառունակ հուգեվարք է ու քայքայում:

Կուսակցութիւնները կենդանի են միայն գործով ու միայն գործի մէջ: Երբ գործ չկայ կամ փոխարինւում է սուբրոգատով՝ մահը անխուսափելի է:

Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ իր կեանքը փրկելու ու յետագայ գոյութիւնը արդարացնելու համար՝ ունի այսօր մի միջոց միայն. պայքար բոլշևեիդմի դէմ, գործօն ու անողոք պայքար երկրի ներսը, պայքար ամէն կարգի զէնքով ու ամէն հնարին միջոցներով, առանց խտրութեան: Ուրիշ գործ չկայ:

Այս միակ գործը կատարելու համար կուսակցութիւնը ամենից առաջ պէտք է խստօրէն մաքրի իր շարքերը, դուրս ձգի բոլոր անվստա-

հելի տարրերը, բոլոր վարակածներին ու տատանողներին, թոյլերին ու յոգնածներին, թերահաւատներին ու յուսահատուածներին, ծոյլերին ու անտարբերներին — այսինքն՝ իր ներկայ կազմի իննը տասներորդը, գուցէ եւ աւելին: Դուրս պիտի ձգի նաեւ բոլոր նրանց, որոնք վճռականութիւն չունեն՝ վերջին կարտի վրայ դնել վերջին ունեցածը: Տակը պիտի մնայ մի զտւած կորիզ՝ հոգով ու ժեղ, մտքով անասան, կուրորէն հաւատացեալ, ամէն զոհաբերութիւնների ընդունակ, ոչնչից չը վախեցող ու ոչնչի առաջ կանգ չառնող մարդկանց մի խմբակ, ամենախիստ գաղանապահութեան տակ: Սա չի լինի, իհարկէ, քաղաքական կուսակցութիւն, այլ պարզապէս դաւադրական մի կազմակերպութիւն — այնպէս, ինչպէս էր Գաշնակցութիւնը իր գոյութեան նախնական շրջանում:

Այս ճանապարհով — ու միայն այս ճանապարհով — թերեւս կարողանար կուսակցութիւնը փրկել իր գոյութիւնը, նոր կեանք առնել ու պարզած պահել դրօշակը:

Բայց ի՞նչ գնով:

Յաջողութեան դէպքում՝ հայ քաղաքական դատը ամենալուրջ վտանգի ենթարկելու եւ հայ ժողովուրդը նորանոր փորձանքների մէջ ձգելու գնով: Եւ սա է, որ պէտք է չը վախեցնի կուսակցութիւնը փրկողներին, այս վտանգն է, որի առաջ չը պիտի կանգնեն յամառողները:

Ուրբան էլ մենք տարւած լինենք կուսակցական մտայնութիւնով, չեմ կարծում — չեմ կարող ու չեմ ուզում կարծել — թէ մեր մէջք կը գտնւի մէկը, որ զիտակցօրէն ցանկանար փրկել կուսակցութիւնը այդպիսի գնով:

Կուսակցութիւնը ինքնանպատակ չէ ու այլասեռւած է հիմնովին, վտանգաւոր է ու վնասակար, եթէ մոռացութեան է տւել այս հիմնական ճշմարտութիւնը: Հայաստանն ու հայ ժողովուրդը՝ հում նիւթ չեն Հ. Յ. Գաշնակցութիւնը ապրեցնելու համար: Անորակելի ոճիր կը լինէր, եթէ մենք մի վայրկեան անգամ թոյլ տայինք մեզ վարել այնպէս, ինչպէս կը վարէր — գիտակցօրէն թէ անգիտակցօրէն — կուսակցական ֆանատիզմով բռնկւած հիւանդը:

Հ. Յ. Գաշնակցութիւնը մի սոսկ գործիք էր վարպետ-պատմութեան ձեռին: Երբ գործիքը կատարել է իր գործը, հաշուել է ու հնացել կամ երբ գործի շարունակութիւնը պահանջում է նոր ձեւի գործիք — հինը դէն է ձգւում ու պէտք է ձգւի: Անցեալի գործիքը

կարող է մնալ յարգանքի ու երախտագիտութեան, սիրոյ ու պաշտամունքի առարկայ: Բայց նրա տեղը՝ ազգային թանգարանումն է եւ ոչ արհեստանոցում, ուր կոփւում է այսօրւայ կեանքը:

Հայ քաղաքական դատը վարելու համար Գաշնակցութիւնը անպէտք է այլեւս, ուրեմն պիտի հեռանայ ասպարեզից:

Շարունակ խօսում եմ հայ քաղաքական դատից, շարունակ վերադառնում եմ նոյն խնդրին — այն պարզ պատճառով, որ չեմ կարողանում բաժանել Գաշնակցութիւնը այդ դատից: Իմ ըմբռնումով, մեր կուսակցութեան ամբողջ էութիւնը այդ դատի մէջ է: Բնական է, ուրեմն, որ ուղղելով խօսքս դաշնակցականների համագումարին, չեմ կարող ունենալ ուրիշ ելակէտ՝ իմ մտածողութեան ընթացք տալու եւ եղբակցութիւններս հիմնադրելու համար:

Հարցնում եմ. մեզ հետ միասին կը մեռնի՞ արդեօք մեր կեանքի գոծը՝ հայ քաղաքական ազատագրաւուրը:

Ծայրայեղ մեծամտութիւն կը լինէր այսպէս մտածել, — ոչ միայն մեծամտութեան, այլ եւ շատ միամիտ հասկացողութիւն պատմական երեւոյթների:

Սրանից մի տարի առաջ ես գրել եմ “Ճակատամարտի” մէջ, թէ Հ. Յ. Գաշնակցութեան մահով մեծապէս վտանգւած կը լինի նաեւ հայ քաղաքական դատը. բայց այնտեղ միաժամանակ բացատրել եմ, որ Գաշնակցութեան իսկական սահմանները շատ աւելի լայն են, քան մեր կուսակցական կաղմակերպութիւնը. որ մեր կուսակցութիւնը՝ մարտնչող հայութեան արտայայտութիւններից մէկն է միայն, ոչ աւելին. որ “Գաշնակցութիւն” անունն իսկ կարող է վերանալ, մոռացւել ի սպառ, բայց այն ըմբոստ ոգին, ազատագրւելու այն տենչը, որ ծնունդ է տւել դաշնակցութեան եւ որ իսկական Գաշնակցութիւնն է, չեն մեռնի: Այլ կուսակցութիւնը — աւելի ճիշտ՝ այսօրւայ կազմակերպութիւնը — կարող է կաղմալուծւել, բայց գաղափարն ու գործը կը մնան կենդանի:

Ոչ միայն կենդանի կը մնան, այլ եւ մի նոր կենսունակութիւն կը ստանան:

Եւ հէնց դրա համար է, — դատը ապահովելու, նրա զարգացման ընթացքը չը խանգարելու համար է, որ առաջարկում եմ կուսակցական ինքնասպանութիւն:

Հասկանանք. Հայ բօլշեւիկները մեր ժառանգներն են, որ շարունակելու են — ու արդէն շարունակում են — մեր գործը: Նրանք անում են ու անելու են այդ՝ գիտակցեն թէ չը գիտակցեն, ցանկանան թէ չը ցանկանան: Ինչպէս եւ մենք, նրանք էլ ժամանակաւոր մի գործիք են Մեծ վարպետի պատմութեան ձեռքին: Մենք մերը արինք, լրացրինք մի որոշ շրջան. շարունակութիւնը նրանց է պատկանում:

Եւրաստապարտ պիտի լինենք բօլշեւիկներին. խորտակելով մեզ, նրանք՝ եթէ չասեմ փրկեցին, գէթ աւելի ապահով վիճակի մէջ դրին մեր կեանքի գործը: Նրանք եկան մեզ փոխարինելու ճիշտ այն օրհասական ժամին, երբ մենք ինքներս այլ եւս չէինք կարող տանել մեր գործի ծանրութիւնը:

Գործը չի մեռած:

Ճիշտ է, որ Հայաստան անկախ պետութիւն չէ այսօր, այլ մի ինքնավար նահանգ Ռուսական Գետերացիայի մէջ: Բայց թերեւս սա լաւագոյնն է այսօրւայ Համար:

Ժորձը ցոյց տւեց, որ՝ այժմ՝ եւ եթ՝ անկախ պետութիւն կազմելը — մանաւանդ քաղաքական այս աննպաստ պայմանների մէջ — Հայ ժողովուրդի ոյժերից վեր բան է: Այէտք է մի միջին դրութիւն, քաղաքական մի նախակրթարան — դաստիարակելու, պետական կեանքին վարժելու Համար. ապա՝ մեծ ցնցումներից, կոտորածներից ու աւերումներից յետոյ պէտք է Հանգստութիւն՝ ոյժեր հաւաքելու ու կազմակերպելու Համար: Իրերի բերմամբ, այդ շրջանը Հայաստան պիտի անցնի բօլշեւիկեան դրօշակի տակ: Թող այդպէս լինի:

Արդ՝ օգնել բօլշեւիկներին Գաշնակցութիւնը չի կարող, մնում է որ չը խանգարի — այդ կը լինի նրա օգնութիւնը: Իսկ չը խանգարելու Համար ունի մի միջոց միայն. հեռանալ ասպարիզից:

Յաճախ լսում եմ, թէ մեր դատը ապահովելու Համար չի կարելի յենւել միայն մի օրիննտացիայի վրայ. զգուշութիւնը պահանջում է, մէկի կողքին ու զուգընթաց՝ իբրեւ պահեստի ոյժ՝ գոյութիւն ունենայ նաեւ մի ուրիշը: Հայ բօլշեւիկները տանում են ռուսական գիծը — թող տանին, այնտեղ մենք բան չունենք անելու: Բայց պէտք է նախատեսել եւ ուրիշ կարելիութիւններ: Օրինակ, ռուս բօլշեւիկները այսօր կազմում են թուրքերի հետ մի ընդհանուր ճակատ. բայց վաղը

այդ արհեստական բոլոր կարող է քանդակել ու մենք կարող ենք հարկադրաւոր լինել մի ընդհանուր լեզու որոնելու՝ թուրքերի ու նրանց հետեւը կանգնած Եւրոպացիների հետ խօսելու համար։ Հարկաւոր է, ուրեմն, կապեր պահել վաղւան թուրքերի հետ. եւ եթէ զաշնակցութիւնը ուրիշ բան չունի անելու, հէնց այս մէկ գործի համար պէտք է պահի իր գոյութիւնն ու այժմեան հակաբոլշեւիկեան դիրքը։

Խօսքս չերկարացնելու համար չեմ ուզում առարկել ոչ այդ կարելիութեան եւ ոչ էլ երկրորդ օրինատացիայի կարելորդութեան դէմ։ Ասում եմ միայն ու պնդում — եւ սա է էականը — որ Հ. Յ. զաշնակցութիւնը չէ, որ պիտի կատարի այդ դերը։ Թուրքերի հետ խօսելու համար զաշնակցութիւնը ամենից աւելի անընդունելի բանալիսն է — աւելի անընդունելի, քան բոլշեւիկների հետ խօսելու համար։

Եթէ մի օր հարկ եղաւ անուշի կապել թուրքերի հետ, հանդէս պիտի դան ուրիշ մարդիկ, ուրիշ հասկացողութիւններով, ուրիշ հոգեբանութիւնով, ու մանաւանդ ուրիշ անցեալով (կամ առանց անցեալի). այստեղ եւս զաշնակցութիւնը կարող է խանգարել միայն, բայց ոչ օգնել։ Նոյն առարկութիւնը արւում է եւ մի ուրիշ ձեւով։

2^է որ — ասում են — բոլշեւիկեան բեժիմն ու տիրապետութիւնը յաւիտենական չեն։ Բոլշեւիկները կարող է տապալել — աւելի կամ պակաս հեռու ապագայում, աւելի կամ պակաս անակնկալօրէն։ Պէտք է ունենալ մի պահեստի ոյժ, մի կազմակերպութիւն, որ անմիջապէս փոխարինի բոլշեւիկներին, իր ձեռն առնի դեկը, չը թողնի երկիրը անիշխանական վիճակի մէջ...

զաշնակցութիւնը պիտի պահի իր կազմը թէկուզ միայն այդ օրւայ համար։

Գարձեալ չեմ ուզում վիճել. այդպիսի զրոյթիւն կարող է ստեղծւել։ Բայց ասում եմ ու պնդում. զաշնակցութիւնը չէ, որ պիտի կազմի նոր իշխանութիւնը։

Երբ ներկայ քաղաքական պայմանները փոխւին հիմնովին կամ խոշոր չափերով, հաւանական է, որ Խորհրդային իշխանութիւնը՝ իբրեւ անհաւաքատ ու անհամապատասխան հայկական իրականութեան՝ հարկադրաւոր լինի տալ իր տեղը ուրիշ ոյժերի, ուրիշ քաղաքական ու հասարակական խմբակցութիւնների. նա եւս կատարած ու աւարտած կը լինի իր դերը։ Բայց զաշնակցութիւնը չէ, որ պիտի փոխարինի բոլշեւիկներին։

Նոր դրութիւնը նոր պահանջներ կ'առաջագրի:

Քաղաքական (ու մանաւանդ յեղափոխական) կուսակցութիւնները չեն կարող կերպարանափոխել անվերջ, ամէն օրւայ պահանջի համեմատ: Նրանք ծագում են որոշ շրջաններում՝ որոշ գործ որոշ միջոցներով կատարելու համար. երբ դրութիւնը փոխում է հիմնովին, պէտք է փոխին եւ քաղաքական խմբումները: Կուսակցութիւնը չէ կարող ազատել իր անցեալից, որքան էլ կամենայ. անցեալը միշտ անդրադառնալու է ներկայի վրայ, կաշկանդելու է այն: Կան յիշողութիւններ, սովորութիւններ, կապեր, համակրութիւններ ու հակակրութիւններ, որոնք — նոյն իսկ ակամայից ու անգիտակցօրէն — յայտ են գալու ու մի տեսակ անաբրօնիզմ՝ մտցնելու առօրեայ աշխատանքների մէջ:

Նոր գինին չի կարելի լեցնել հին տիկերի մէջ. գիտէք որ տիկերն էլ կը պատռեն, գինին էլ կը թափուի:

Անցեալում Հ. Յ. Դաշնակցութիւնը պէտք էր Հայաստանին ու հայ ժողովուրդին. ապագայում նա պէտք չի լինելու այլեւս: Ուրիշ Դաշնակցութիւն պիտի փոխարինի նրան, — թերեւս հայ պետական Դաշնակցութիւն:

Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, ոչ ներկայում, ոչ ապագայում. նա վերջ պիտի դնի իր գոյութեան:

Պիտի անի այդ՝ նոյն իսկ իր սեփական անցեալը, իր անունն ու պատիւը փրկելու համար:

Նայենք մեր շուրջը. միթէ մե՞նք ապրում ենք այսօր, միթէ ունե՞նք կուսակցական կեանք ու աշխատանք: Միթէ չե՞նք տեսնում, որ քայքայման պրօցեսի մէջ ենք արդէն եւ որ քայքայման պատճառները՝ արտաքին ու պատահական չեն, այլ ներքին են, օրգանական...

Երիտասարդութիւնը, նոր սերունդը մեզ հետ չէ այլեւս, ինչպէս էր 20—25 տարի առաջ: Թարմ, ռզնդորութիւնով ու հաւատով լի ոյժեր չեն գալիս շատացնելու մեր շարքերը, փոխարինելու յոգնածներին, ինքնավստահութիւնն ու հաւատը կորցրածներին: Ընդհակառակը՝ փախչում են մեղանից, լքում են կուսակցութիւնը կամ — որ շատ աւելի վատ է — մնում են միայն անւանօրէն, իներտ, անտարբեր, աշխոյժից ու ռզնդորութիւնից զուրկ, աշխատանքի անընդունակ, մահւանցութեամբ սրտերի մէջ ու հեգեղական ժպիտը շրթունքների վրայ:

Մենք չենք ուզում տեսնել իրականութիւնը եւ սովորութիւն ենք արել մի շարքի մացատրութիւն տալու երեւոյթին — ասում ենք. վատերն են, շահախնդիրները, վարձկաններն ու վախկոտները, որ Լքում են մեզ. իսկ լաւերը, անկեղծները, անշահախնդիրները, գաղափարաւէրներն ու գիտակիցները, հոգով ու մտքով առողջները՝ մնում են մեզ հետ, ինչպէս եւ եղել են միշտ... մի թէ բացատրութիւն է սա, մի թէ այս որակումը նոյնը չէ, ինչ եւ բոլշեւիկների յիմար խօսքը, թէ՛ բուրժուազիի վարձկաններն են, աւազակները, թալանիչները ու ամէն կարգի բաղդախնդիրները, որ կազմում են այսօր դաշնակցութիւնը:

Սա բացատրութիւն չէ, միամիտ երեխաների կամ անզուսպ խուժանավարների խօսք է սա:

Մեր կուսակցութիւնը քայքայւում է, որովհետեւ կորցրել է իր raison d'être-ը: Ահա դառն ճշմարտութիւնը: Քաջութիւն պիտի ունենանք խոստովանելու այդ ճշմարտութիւնը եւ հարկաւոր եղբակացութիւնն անելու:

Իսկ միակ կարելի եղբակացութիւնն այն է, որ պէտք է վերջ դնենք մեր կեանքին:

* * *

Գիտեմ, որ ներկայ կօնֆերանսը իրաւասու չէ այդպիսի մի վճիռ հանելու. բայց նա իրաւասու է՝ հարցին ընթացք տալու ու լուծման միջոցներ հոգալու:

Այս նպատակով առաջարկում եմ խորհրդաժողովին 1

Ընկերական բարեւանքով՝

ՅՈՎ. ՔԱԶԱՋՆՈՒՆԻ

Բուքրէշտ, Մարտ 1923 թ.

¹ Հետեւում են գուտ կուսակցական բնոյթի առաջարկներ, որոնց հրապարակ հանելու իրաււէքը ինձ չի պատկանում:

Յ. Ք.

ՅԱԻԵԼՈՒԱԺ

[Զեկուցագրիս առիթով մի քննադատական նամակ եմ՝
ստացել իմ կուսակցական ընկեր ու անճնական ըարեկամ՝
NN-ից, որին եւ պատասխանել եմ՝ երկարօրէն:

Աւելորդ չը համարեցի ներկայացնել ընթերցողին — մի
քանի կրճատումներով — նաեւ այդ իմ նամակ-պատասխանը,
քանի որ սա նոյն հիմնական մտքերի զարգացումն է, լրացումը
ու լուսաբանութիւնը: — Յ. Քաջ.:]

Միրելի NN

Ստացայ Յունիս 2 թւակիրդ:

Մխիթարական է ինձ համար, որ դու — ինչպէս գրում ես — չես հետեւել ուրիշների օրինակին ու իմ ղեկուցմանը չես տւել ad hominem մեկնութիւններ:

Գլխի եմ ընկնում, թէ որոնք են այդ մեկնութիւնները...

Ո՞վ գիտէ, գուցէ եւ իրաւացի են մեկնաբանողները. չէ՞ որ homo sum et humani nihil... մնացածը գիտես (չատ էլ վստահ եմ իմ լատիններէնի վրայ):

Դու ինքդ բաւականացել ես նրանով միայն, որ կասկածել ես իմ մտաւոր առողջութեան մասին:

Գուցէ դու էլ իրաւունք ունես, ինչպէս կ'ասէր այդպիսի դէպքում Նասրէդդին Զօջան. մեր ապրումներից յետոյ ո՞վ յանդգնութիւն կ'ունենայ պարծենալու, թէ պահել է անխախտ իր մտքի կատարեալ հաւասարակշռութիւնը:

Բայց՝ բարոյական սնանկութիւն թէ մտքի տկարութիւն — մի՞թէ արգումենտներ են սրանք իմ թէզերի դէմ:

Գրում ես, թէ իմ «գամբանականը» կաղմւած է «այնպիսի խնամքով ու այնքան տրամաբանական հիմնադրումներով»...

Գիտե՞ս ինչն է պատճառը:

Այն, որ «պարապ վախտի խաղալիք» չի եղել իմ ղեկուցումը, «ВЗГЛЯД И НБЧТО». որ այդ երկար գրութեան մէջ չկայ մի միտք, որ տասն անգամ վերաքննած չը լինեմ ու չկայ մի խօսք, որ տասն անգամ կշռած չը լինեմ գրելուց առաջ:

Համաձայն իր որ՝ ինչպէս ասում էր խորիմաստ Պօլսնիուսը Համ-

լէտի մասին՝ եթէ սա խեղագարութիւն է, յամենայն դէպս այստեղ կայ ինչ որ սխառեմ...

Իրաւունք չունէի սպասելու, որ իմ «տրամաբանական հիմնաւորումների» հակադրւեն նոյնպէս տրամաբանական կամ՝ առհասարակ՝ ո՛ր եւ է կարգի հիմնաւորումներ եւ ո՛չ սոսկ գուշակութիւններ իմ բարոյական ու մտաւոր վիճակի մասին:

Բայց դու գրում ես, որ «Խորհրդաժողովում ոչ ոք չը փորձեց գնահատութեան ենթարկել» իմ տեսակէտները:

Ինչո՞ւ:

Ես մի քիչ աւելի լաւ կարծիք ունեմ իմ ընկերների մասին, քան նրանք՝ իմ մասին եւ չեմ ուզում ենթադրել ոչ թուլութիւններ ad hominem, ոչ իսկ մտային վատառողջութիւն. բայց կարծում եմ որ շատ էլ հեռու չեմ լինի ճշմարտութիւնից, եթէ մտածեմ թէ ժողովի անդամները տարւած են եղել կուսակցական ներսրտութիւնով ու ներմտութիւնով:

Անհամեստութիւն մի համարի, եթէ ասեմ, որ ինքս աղատ եմ այդ կարգի թուլութիւններից:

Ես կուսակցական մարդ չեմ (բառի նեղ իմաստով) ու երբեք էլ չեմ եղել. եւ այդ է պատճառը, որ այնքան տարի մեկուսի եմ մնացել կուսակցութեան մէջ: Պարզապէս մի հայ մարդ եմ եղել ես, հայ հայրենասէր... Ահա մի վարկաբեկած բառ, որ ենթարկւած է եղել այնքան անարգանքի, այնքան ծաղրանքի: Բայց ճշմարտութիւնն այն է, որ այդ է իմ էութիւնը: Ես սիրում եմ հայ-հայրենիքն ու հայ-ժողովուրդը — այդ աղքատ, աւեր, անհամբոյր, դաժան երկիրն ու այդ տգէտ, կեղտոտ, ծածկամիտ, եսամիլ ու շահասէր ժողովուրդը: Սիրում եմ ոչ թէ առաքինութիւնների համար, այլ իր բոլոր արատներով ու ակտերով հանգերձ:

C'est plus fort que moi, կ'ասէր Փրանսիացին:

Սիրում եմ, որովհետեւ ինքս նրա անբաժին մասն եմ զգում ինձ — ոսկրը ոսկրից ու արիւնը արիւնից — կապել եմ իմ անձնական բաղդը նրա հաւաքական բաղդի հետ:

Յիշում ես մի խօսակցութիւն, որ ունեցանք դու ու ես մեր երկար ճամբին:

Դու ասիր, որ քո կապակցութիւնը հայ ժողովրդի հետ զուտ ուղեղային է, որ գիտակցութիւնն է ու պարտաճանաչութիւնը, որ լծել են քեզ՝ նախ կուսակցական, ապա եւ պետական աշխատանքին: Իսկ ես՝ դրան հակառակ՝ ասի, որ իմ կապը օրգանական է:

2ը գիտեմ, թէ դու ռըբան ճիշտ ես վերլուծել քո հոգին. բայց իմ վերաբերմամբ՝ ճիշտ է իմ ասածը:

Հայ մարդն է, որ խօսում է իմ մէջ — ահա ամբողջ բացաւորութիւնը իմ մտքի ուղղութեան. ուրիշ գաղտնիք միք որոնի, կը սխալւէք: Հայ մարդն է, որ դատում է իմ մէջ, կշռում, համեմատում ու ընտրութիւն անում:

Կուսակցութիւնը ինձ համար արժէք է ունեցել այնչափ միայն, որչափ ընդունակ է եղել վարելու մի որոշ դատ — ոչ աւելին: Ինքն ըստ ինքեան՝ իմ պաշտամունքի առարկայ չի եղել կուսակցութիւնը: Ես միշտ այն համոզմունքն եմ ունեցել, որ շաբաթն է հիմնադրւած մարդու համար եւ ոչ մարդը՝ ստեղծւած շաբաթի համար:

Հատ banal խօսք է ասածս ու ոչ ոք հակառակը չի ասի, ի հարկէ: Չի ասի, այո՛. բայց արդեօք չի անի (անգիտակցօրէն ու ակամայից):

Այնքան էլ հեշտ բան չէ՝ աղատ մնալ կուսակցական կաշկանդումներից: Երկարամեայ կուսակցական կեանքը կաղապարում է մարդու հոգին կուսակցական կաղապարով, մարդ կուսակցօրէն է մօտենում, կուսակցօրէն ըմբռնում ու կուսակցօրէն լուծում բոլոր խնդիրները:

Աւելին եւս. կուսակցութիւնը՝ սոսկ միջոց լինելու փոխարէն՝ դառնում է կամաց-կամաց ինքնանպատակ, դատը ստորագրւում է իրան ծառայելու կողմ օրգանին ու կուսակցական դործունէութիւնը դառնում է կուսակցականի համար մի տեսակ լիւնչակ (ներքի այս կոպիտ արտայայտութիւնը, ուրիշ բառ չեմ գտնում):

Յիշում եմ մի խօսակցութիւն, որ տարիներ առաջ ունեցել եմ Լուսահոգի Ռոստոմի հետ: Պարսկական յեղափոխութեան սկիզբներումն էր: Խօսում էինք մեր մասնակցութեան մասին այդ յեղափոխութեան մէջ: Եւ պնդում էի, որ Պարսկաստանում Գաշնակցութիւնը բան չունի անելու եւ որ մեր հրապարակ գալը այնտեղ՝ պարզ աւանտիւրա է...

— Լաւ, վրայ բերեց յանկարծ Ռոստոմը, Ռուսաստանում յեղափոխութիւնը խեղդեած է, Տաճկաստանում համաձայնութեան ենք եկել Խթթի հատականների հետ, Պարսկաստանում էլ՝ ասում ես չը պիտի խառնենք կռիւներին... Հապա մենք ի՞նչ անենք:

Հարցը դրեց կատակի ձեւով, իրան յատուկ անուշ ժպիտը երեսին: Բայց դու հասկանում ես, որ այդ կատակի տակ թաքնւած էր մի խոր հոգեբանական իմաստ եւ որ Ռոստոմը — գերազանցօրէն կուսակցական մարդ — իր հոգու անթափանցելի խորքերում իրօք ունէր այդ անհանգստացուցիչ հարցը:

Անհատապէս ինձ համար այդպիսի երբեք գոյութիւն չի ունեցել ու այսօր էլ չունի: Հոռւմը ինձ համար շատ աւելի թանգ է, քան Կեսարը — աւելի ճիշդը՝ Կեսարը թանգ է այնչափ միայն, որչափ նա պէտք է Հոռւմին:

Երբ ես տեսնում եմ, որ տւեալ պայմանների մէջ Հայաստանն ու հայ ժողովուրդը պէտք ունեն բոլշեւիկներներին, ես ասում եմ առանց տատանումների. տեղ տանք բոլշեւիկներին, այսօր նրանց է պատկանում իրաւունքը, որովհետեւ նրանք միայն կարող են փրկել զրութիւնը:

Խորհրդաժողովը չի ուզեցել նոյն իսկ քննութեան առնել այս առաջարկը:

Ինչո՞ւ:

Որովհետեւ, սիրելի NN, ժողովականները — ամէն մէկը առանձին, լռելեայն ու թերեւս անգիտակցօրէն — հարց են տւել հոգիներ խորքերում. հապա մե՞նք ինչ անենք...

Այդ զահրումար «մենք» է, որ՝ ըստ իս՝ կաշկանդել է խորհրդաժողովի միտքը:

Եւ ովքե՞ր ենք «մենք» — այսինքն նրանք, որոնք իրօք ապրել են անցեալում կուսակցական կեանքով եւ այժմ իրօք բան չեն ունենայ անելու...

Վերջի հաշին, մի քանի տասնեակ, առ առաւելն՝ մի քանի հարիւրակ մարդ:

.
.

Դնչո՞ւ համար եմ գրում այս նամակը:

Եթէ իմ գիտգնօղը ճիշտ է, ապա ուրեմն ոչ մի կոչ, ոչ մի դատողութիւն չեն կարող յաղթել ինքնագոյութիւնը պաշտպանելու անխորտակելի բնագդին: Ես չեմ կարող համոզել քեզ, քանի որ այստեղ համոզումները չեն որ բաղխել են իրար, այլ մի ուրիշ, աւելի զօրեղ բան:

Եւ համոզելու համար չէ, որ գրում եմ, այլ պարզապէս ուզում եմ, որ ճիշտ հասկացած լինես ինձ:

Ի հարկէ, կարելի է հարցնել դարձեալ, թէ ո՞ւմ կամ ինչի՞ համար հարկաւոր է, որ դու ինձ ճիշտ հասկացած լինես եւ ի՞նչ փնաս, եթէ սխալ մեկնութիւններ տւած լինես զեկուցագրիս... Ահա այս դէպքում տեղին կը լինէր յիշել *ad hominem* շարժառիթները, այն խիստ-ընկերական ու խիստ-բարեկամական կապերը, որ կապում են ինձ քեզ հետ, բացատրելու պահանջ են առաջագրում: Իմ այս գրութիւնը նոյնքան «աննպատակ» է, որքան եւ քո Յունիս 2-ի նամակը. նպատակ չկայ, կայ միայն որոշ հոգեկան պահանջ...

Գուցէ եւ մի ուրիշ բան. գրելով քեզ, ես այն զգացումն ունեմ, որ կարծես զիմում եմ՝ քո գլխի վըայով՝ մի բաղմամարդ լսարանի, որ կարիք ունի լուսաբանութիւններ:

Դորից եմ կարգում նամակդ:

Հասկանում եմ, որ մի նամակի մէջ չէիր կարող սպառել այն բոլոր խնդիրները, որ ես շօշափել եմ իմ ընդարձակ զեկուցագրի մէջ: Հասկանում եմ նաեւ, որ գրածդ քիչն էլ չէիր կարող պատճառաբանել հանգամանօրէն:

Բայց չէ՞ որ գլխաւորը, էականը ասել ես արդէն, գործի ես դրել ամենից զօրաւոր արգումենտացիադ իմ հիմնական թէզի դէմ...

Եւ ահա մտածում եմ տարակուսած. մի՞թէ այս մարդը չի՞ տեսնում, թէ որքան խախտւո՞ւ, որքան թղլ ու անհամոզեցուցիչ են իր արգումենտները:

Գուհ համաձայն չես ինձ հետ, թե Հ. Յ. Գաշնակցութիւնը «որոշ քաղաքական վիճակ ստեղծելու համար ծնւած մի կազմակերպութիւն է եւ ոչ հեռաւոր սօցիալական ձգտումների տէր կուսակցութիւն»։ Բայց կանգնելով նոյն իսկ իմ տեսակետի վրայ՝ հարց ես տալիս ինձ. ի՞նչ հիմքեր ունեւմ պնդելու, թե Գաշնակցութիւնը վերջացրել է արդէ՞ իր միսսիան. չէ՞ որ Հայաստան այսօր էլ տնկախ պետութիւն չէ։

Հարցդ ցոյց է տալիս, որ հարկաւոր ուշադրութեամբ չես լսել զեկուցումն կամ ես չեմ կարողացել լրիւ արտայայտւել։ Քո հարցը ես դրել եմ ու պատասխանն էլ տւել (ձիշտ է, որ զեկուցագիրս խորհրդաժողովում ընթերցանելի անելու համար հարկադրւած եմ եղել առ հասարակ կարճ կտրել, սեղմ արտայայտւել)։

Ասեմ նորից։

Գաշնակցութիւնը սպառել է իր անելիքը ոչ այն մտքով, որ հասել է արդէն նպատակին, իրականացրել է իրան ծնունդ տւող իդէալը (իդէալը, ինչպէս եւ մատեմատիկական «սահմանը» փոփոխական մեծութիւնների համար, միշտ մնում է առաջը. նրան կարելի է մօտենալ, բայց երբեք՝ հասնել), այլ այն մտքով, որ Գաշնակցութիւնը անցել է մի որոշ ճամբայ, բերել է իր կեանքի դատը մինչեւ մի որոշ կայան, որից դէնը ինքը այլեւս անզօր է առաջնորդելու։

Թող տուր մի պատկերաւոր լուսաբանութիւն։

Սասունի լեռներից ու Վարազի բարձունքներից մենք իջել ենք Արարատեան դաշտը։ Մենք անցել ենք այնպիսի ճամբաներ, ուր կարող էր մագլցել միայն լեռնեցու «վըռըշիկը»։ անցել ենք հայդուկային փոքրիկ խմբերով, գիշերային խորհրդաւոր մթնութեան մէջ, թաքնւելով ձիւների մէջ ու ժայռերի տակ. նահատակւել ենք այդ դաժան ճամբու վրայ, նահատակւել ենք մեզ հետ եւ հայ ժողովուրդը, բայց միշտ առաջ ենք գնացել, սերմանելով մեր շուրջը ազատութեան կենսաբար ferment-ը։

Արիւնաբամ եւ ուժասպառ, բայց վերջապէս իջել ենք լայն դաշտը ու նոր հորիզոններ ենք տեսել մեր առջեւ։

Արարատեան դաշտը — առաջին մեծ կայանն է մեր երկար ճամբու վրայ։

Բայց այստեղ բաղխւում ենք նոր կարգի ոյժերի հետ եւ պայքարի պայմանները միանգամայն տարբեր են այստեղ։

Հետեւեալի «վըռըշիկը», հայդուկների «խումը», եւ մեր տղաների «տասնոցը» անզոր են այնտեղ, ուր բանում է երկաթուղին, շարժւում են բանակներ ու խօսում է արագաձիգ թնդանօթը: Ուրիշ է ОБСТАНОВКА-ն, ուրիշ է մասշտաբը, ուրիշ պիտի լինեն եւ կուռի մեթոդները:

Մի կարծիք, թէ մենք — իբրեւ կուսակցութիւն — կարող ենք յարմարել նոր պայմաններին ու փոխել հին մեթոդները: Պետութիւն վարելու մեր երկու եւ կէս տարւայ փորձը ցոյց տւեց, թէ որքան կաշկանդւած ենք անցեալով եւ որքան անզոր ենք մեր իսկ դէմ: Երեսուն տարւայ կուսակցական կեանքը դրել է մեր վրայ իր անջնջելի դրոշմը, հաստատել է աւանդներու սովորութիւններ, մտածելու ու գործելու եղանակներ, որոնցից մենք չենք կարող ազատուել:

Իսկ ամենից գլխաւորն այն է, որ այսօր մենք գործ ունենք Խորհրդային Ռուսաստանի հետ: Սա ամենամեծ ու վճռական ոյժն է՝ մեր հանդէպ կամ մեր կողքին:

Անցեալում մենք մի րոպէ միամտութիւն ունեցանք կարծելու, թէ կարող ենք ազատագրուել ռուսական հեգեմոնիայից ու յենարան գտնել Արեւմուտքում: Այսօր այդպիսի յոյսերով տարւելու իրաւունք չունենք այլեւս: Մեր միակ յենարանն այսօր՝ Խորհրդային Ռուսաստանն է: Կուէր նրա դէմ չենք կարող ու՛ եթէ կարողանայինք էլ՝ չը պիտի կուէնք, որովհետեւ նա պէտք է մեզ, — պէտք է ոչ իբրեւ սօցիալական կամ պետական ընժիմ (կոմմունիզմ ու դասակարգային դիկտատուրա) այլ իբրեւ քաղաքական ոյժ:

Հայաստան պիտի դաշնակցի Խորհրդային Ռուսաստանի հետ, ուրիշ ելք չունի այլեւս:

Իսկ դու գիտես, որ մեր կուսակցութիւնը չի կարող դաշնակցել բօլշեւիկեան իշխանութեան հետ — թէկուզ այն մի հատիկ պատճառով, որ բօլշեւիկները չեն ուզում ճանաչել մեզ, իսկ մենք կարողութիւն չունենք ծնշում գործ գնելու նրանց վրայ — ճանաչել տալու մեր արժէքը, որոնք տալու մեր բարեկամութիւնը:

Հայ բօլշեւիկներն են, որ պիտի դաշնակցեն Ռուսաստանի հետ, իսկ Հ. Յ. Դաշնակցութիւնը պէտք է այլեւս Հայաստանին:

Ահա թէ ինչ մտքով մեր կուսակցութիւնը վերջացրել է իր միասիան, անելիք չունի այլեւս ու վերջ պիտի դնի իր գոյութեան:

Ծիծաղելի է թուում՝ քեզ իմ այն խօսքը, թե հայ բօլշևիկները մեր ժառանգներն են (անշուշտ, իրանք բօլշևիկները էլ աւելի կը ծիծաղէին, եթէ լսէին այդ խօսքը):

Իսկ ինձ — չեմ ասում՝ ծիծաղեցնում է, այլ զարմացնում է ձեր երկուսի անհասկացողութիւնը, որովհետեւ մի պարզ ճշմարտութիւն է իմ ասածը:

— Հրաժարիմք ի սատանայէ, բացականչում է դաշնակցականը, լսելով բօլշևիկի անունը:

— Հրաժարիմք ի սատանայէ, բացականչում է բօլշևիկը, լսելով դաշնակցականի անունը:

Չո՛ւր բացականչութիւններ, ընկերներ հրաժարւել չէք կարող, դա ձեր ցանկութեան կամ ընտրութեան ինդիք է:

Գաշնակցութիւնը վարել է հայ քաղաքական դատը ու բերել է քաղաքականապէս աղատագրող հայ ժողովուրդը, հասցրել մինչեւ մի որոշ տեղ. այստեղ իրան փոխարինելու է՝ մինչեւ հետեւեալ կայանը՝ հայ բօլշևիկը:

Այս է պատմութեան ընթացքը:

Հասկացիր ինձ. դաշնակցական կազմակերպութիւնն է, որ դատապարտւած է մահան (աւելի ճիշտը՝ մեռած է արդէն). բայց զործը մնում է կենդանի:

Ասում ես՝ Հայաստան անկախ չէ:

Ի հարկէ, անկախ չէ: Բայց համեմատիր (անկախութեան տեսակէտից) իրերի այսօրւայ դրութիւնը նախպատերազմական դրութեան հետ եւ տես, թէ ինչ մեծ թռիչք է կատարւած:

Յիշիր, թէ պատերազմի նախօրեակին ինչ ոգեւորութիւնով ողջունում էինք Եւրոպական «կօնտրօլօրներ» հաստատելու ծրագիրը թուրքահայ վիլայէթների մէջ եւ թէ ինչպէս երազում էինք զեմսուլայական ինքնավարութիւններ ստանալ Անդրկովկասեան Հայաստանի համար... բայց չէ՞ որ Մեհանիկեանի կամ Լուկաշինի կառավարութիւնը մի քիչ աւելի է, քան եւրոպացիների վերահսկողութիւնը թուրքահայ վիլայէթների վրայ կամ զեմսուլայական հաստատութիւնները Անդրկովկասում:

Տարբեր խնդիր է, թե այդ «աւելին» չի համապատասխանում մեր կորուստների ու զոհաբերութիւնների չափին: Դրա մասին մենք պիտի մտածէինք 1914 թւին, երբ կազմում էինք կամաւորական խմբեր. աւելի առաջ — երբ հիմնադրում էինք Գաշնակցութիւնը. էլ աւելի առաջ — երբ ոգեւորւում էինք Բաֆֆիի վէպերով ու Գամար-Քատիպայի «աղատ երգերով»...

Անկախ չէ Հայաստան, այո՛. բայց մի շատ մեծ քայլ է արել դէպի անկախութիւն եւ հետեւեալ քայլը անելու համար պէտք է ամրացնի արդէն նւաճած դիրքերը:

Այդ ամրացումը կատարւելու է (ու կատարւում է) բօլշեւիկեան դրօշակի տակ — ահա թէ ինչու հայ բօլշեւիկները մեր ժառանգներն են:

Ես չեմ ծանաչում հայ բօլշեւիկներին, չունեմ անձնական ծանօթութիւններ, հետեւից էլ հնարաւորութիւն չունեմ հետեւելու նրանց գործունէութեանը, չը գիտեմ իշխող մտայնութիւնը: Արտիս խորքում մի յամառ հաւատ ունեմ, թէ նրանք էլ ինձ պէս ու իմ չափ հայ մարդիկ են... Կոմմունիզմը՝ ինքն ըստ ինքեան՝ արգելք չէ հայերէն զգալու ու հայերէն մտածելու համար: Չէ որ ես էլ հաւատացեալ կօմմունիստ եմ, դաւանում եմ Արապօսկինի աւետարանը. բայց այդ աւետարանը ոչ միայն չի արգելում ինձ հայ լինել, այլ եւ նոր ու զօրեղ հիմնաւորումներ է տալիս իմ ազգային անհատականութիւնը հաստատելու համար: Գիտեմ, որ իմ դաւանած կոմմունիզմը՝ բօլշեւիկներին պետական կօմմունիզմը չէ եւ որ բօլշեւիկները հաճոյքով կտրում են ինձ նման արատաւոր կօմմունիստների գլուխը: Բայց սա կապ չունի նրանց «հայ» լինելու աստիճանի հետ: Պակաս «ոռւս» մարդիկ են ոռւս բօլշեւիկները: Այս միայն «պակաս» չեն, այլ իսկական ոռւս մարդիկ են, ոռւս ազգային հոգեբանութիւնով լեցուն ու ոռւս ազգային իդէալներով տարւած:

Բայց թող որ ես սխալւած լինեմ հայ բօլշեւիկների մտայնութեան մասին, թող որ նրանց հոգում միանգամայն խորթ լինի հայ ժողովուրդի քաղաքական անկախութիւնը հայրենի հողի վրայ — նրանք այնուամենայնիւ շարունակելու են մեր գործը, կամայ-ակամայ ամրացնելու են մեր գրաւած դիրքերը, նեցուկ են դառնալու յետագայ նւաճումներին համար:

Դա նրանք անելու են (ու արդէն անում են), նոյն իսկ հակա-

ուակ իրանց ցանկութեան (ենթադրելով, թէ իրօք հակառակ ցանկութիւն ունեն)...

Ուզում ես մի խօսք էլ ասեմ, որպէս զի վերջնականապէս համոզեա, որ ես խելառել եմ: Ահա այդ խօսքը. հայ բօլշեւիկները — դաշնակցականներ են, միակ դաշնակցականները այսօր, աւելի դաշնակցական, քան դու եւ ես:

Որովհետեւ այնտեղ, ուր ես ու դու անզօր ենք այլ եւս, նրանք փոխարինել են մեզ ու կատարում են մեր կեանքի գործը:

Անկախ չէ Հայաստան...

Բայց միթէ մենք երբ եւ իցէ կարծե՞լ ենք, թէ կարող ենք կազմել իսկապէս անկախ պետութիւն: Միթէ չը գիտե՞նք նոյն իսկ մեր ոգեւորութեան ու արեւցման գաղաթնակէտին՝ որ անկախ չենք կարող լինել, որ անխուսափելիօրէն «կախած» պիտի լինենք մէկից...

Ի հարկէ, գիտե՞նք եւ այդ գիտակցութեան հետեւանքով էր, որ պետութիւն կազմելու առաջին իսկ օրից այնքան՝ որոնեցինք մի «մանդատէօր»:

Հարցը նրանումն էր միայն, թէ ո՞ր աստիճանի կախած պիտի լինենք եւ ումից:

Հարցը լուծւեց յօգուտ Ռուսաստանի եւ Հայաստանի պետական անկախութիւնը սահմանափակեց Մոսկւայի շատ ակախ վերհսկողութիւնով: Գուցէ մեզ համար գերադասելի էր Ամիրիկան... Բայց պատմութիւնն ունի իր լոգիկան, որ մենք անկարող ենք փոխել. ամենաշատը, որ կարող ենք անել (ու պէտք է անենք) — դա այն է, որ հասկանանք, հաշի առնենք ու օգտագործենք կարելին:

Խորհրդային Հանրապետութիւնը — անկախութեան այն maximum է, որին ընդունակ է Հայաստան այսօրւայ պայմանների մէջ:

Եւ սա քիչ բան չէ:

Յամենայն դէպս, այսօր Հայաստանի ներկան ու ապագան ապահոված է շատ աւելի, քան էր 1920 թ. Նոյեմբերին, երբ մենք նստած էինք Երեւանում եւ ինքներս էինք վարում պետութիւնը:

Յիշէ՛ր այն օրերը:

Յիշէ՛ր, որ օրհասական ժամին, երբ մենք սպառել էինք արդէն մեր վերջի ոյժերը, բօլշեւիկները ասպարէզ իջան, խորտակեցին մեզ, բայց երկրին պաշտպան կանգնեցին:

Սա իրողութիւն է:

Իրողութիւն է եւ այն, որ այսօր չկայ ոչ մի ոյժ, որ կարողանար փոխարինել Հայաստանում բռնաւարկներին: Բռնաւարկները պէտք են Հայաստանին:

—

Որքան հասկանում եմ, դու եւս չես հերքում այս շատ պարզ ճշմարտութիւնը. բայց պահանջներ ունես, որոնք չեն բաւարարւած եւ ահա այստեղ է, որ հակադրում ես բռնաւարկներին Հ. Թ. Դաշնակցութիւնը:

Ո՞ր է “միացեալ” Հայաստանը, հարցնում ես դու. ունեն՞ բռնաւարկները այդ պահանջը իրանց դրօշակի վրայ:

Չունեն:

Իսկ մենք, որ շարունակում ենք կրկնել այդ պահանջը մեր կուսակցական որոշումների մէջ — ի՞նչ հեռանկարներ ունենք առջեւներս: Քաղաքական լուրջ պահանջ է դա, թէ մի անբովանդակ ֆօրմուլ, որ կրկնում ենք միայն մեզ մտիծարելու, մեր սիրտը հովացնելու համար: Ի՞նչ իրական բովանդակութիւն ունի այդ պահանջը այսօր, 1923 թւական Յունիսին, բնաջնջւած թուրքահայութեան ու յաղթական Թիւրքիայի հանդէպ:

Ո՞ր “երկու” Հայաստաններն են, որ պիտի միացեն:

Փորձենք մի քիչ զգաստ լինել — չէ՞ որ պետական մարդու առաջին պարտականութիւնն է դա:

“Երկրորդ” Հայաստանը գոյութիւն չունի այլեւս:

Սոսկալի է այս խօսքը. բայց խօսքը չարտասանելով կարելի՞ է փոխել իրականութիւնը:

Սեւերի դաշնագիրը ստորագրելու շրջանում մենք դեռ ունէինք որոշ յոյսեր. կարճը ենք ասել նոյնը այսօր: Ո՞վ պիտի խլի Թիւրքիայի ձեռից հայկական վիլայէթները, ուր մի հատիկ հայ չի մնացել այլեւս: Ո՞վ պիտի դուրս քշի այնտեղից թուրքական բանակը ու քրդական աշիրաթները: Ո՞վ պիտի հաւաքի աշխարհի չորս կողմը ցրւած թուրքահայութեան բեկորները, բերի տուն, շէնացնի աւերւած երկիրը, ապրելու ու աշխատելու հնարաւորութիւն տայ: Ո՞վ պիտի պաշտ-

պանի երկարաձիգ սահմանները ու արգելի թուրքերին ներս խուժելու երկիր...

Այդ բարդ ու շատ դժար գործողութիւնները կատարելու համար ո՞վ պիտի մատակարարի Հայաստանին քաղաքական օգնութիւն, ռազմական ոյժ ու վազօններով ոսկի:

Բօլշեւիկները «միացեալ» պահանջ չեն դնում...

Այո՛. իսկ Հ. Յ. Գաշնկցութիւնը կարող է լրացնել բօլշեւիկների այդ պահանջը: Ո՞ւմ եւ ի՞նչ ոյժի վրայ յենած պիտի կատարի նա այդ հսկայական աշխատանքը — դրսի ոյժի, հարկաւ, որովհետեւ ներսում թուրքն է նստած:

Կրկնում եմ, 1919—1920 թւականներին մենք դեռ կարող էինք տարւել խաբուսիկ յոյսերով. բայց այսօր, երբ մի ողորմելի Homeն անգամ չը գտաւ պաշտպանութիւն — իրաւունք ունե՞նք կոյր ու խուլ մնալու իրականութեան առջեւ:

Ասում ես, որ պայմանները կարող են փոխւել ու Թիւրքիայի անգամահատման խնդիրը կարող է նորից դրւել ղիւանագիտական սեղանի վրայ...

Մօտիկ ապագայի համար այդպիսի հաւանականութիւն ես չեմ նախատեսում (դու նոյնպէս): Աւելի հեռաւոր ապագայում անկարելի չէ եւ այդ: Բայց ինչո՞ւ չը ենթադրել միաժամանակ, թէ փոփոխւած քաղաքական պայմանների մէջ բօլշեւիկներն էլ կը փոխեն իրանց այսօրւայ ընթացքը ու կը պահանջեն ոչ միայն «միացեալ», այլ նաեւ «ծովեց-ծով» Հայաստան:

Եթէ Օսմանեան կայսրութեան կազմալուծումը պատմական պրօցես է, չէ՞ որ նոյնքան պատմական պրօցես է նաեւ ռուսների առաջխաղացումը դէպի տաք ծովերը:

Այդպիսի ենթադրութիւններով չէ, որ պիտի ղեկավարւի մի քաղաքական կուսակցութիւն, այլ իրական կացութիւնով:

Իսկ իրականութիւնը այն է, որ «միացեալ Հայաստանը» — մի անբովանդակ խօսք է, ուրիշ ոչինչ:

Այսօր կարելի է խօսել ոչ թէ երկու Հայաստանները միացնելու, այլ միայն Հանրապետութեան սահմանները մի քիչ լայնացնելու մասին — թէկուզ մինչեւ 1914 թւականի գիծը: Եւ այս խնդիրը թերեւս կարողանայ լուծել Խորհրդային կառավարութիւնը, յենած

Ռուսաստանի վրայ, բայց ոչ Հ. Յ. Դաշնակցութիւնը, յենւած... չը գիտեմ ում վրայ (արդեօք հայասէր պատուօրների՞ ու փիլիսոփայու-
թեան դօքտորների՞ վրայ):

Լսել եմ ու գիտեմ հետեւեալ առարկութիւնները.

Թուրքերը վախենում են Ռուսաստանից եւ քանի որ Հայաստան
ռուսական օրբիդի մէջ է, երբեք չեն զիջի գրաւած գիւղերը — օրինակ՝
չեն դատարկի Ղարսը, որովհետեւ սա անհրաժեշտ է իրանց սեփական
ապահովութեան համար: Իսկ եթէ Հայաստան կտրւի Ռուսաստանից
(այսինքն, ներկայ Խորհրդային Խշխանութիւնը տեղի տայ մի ուրիշ Խշ-
խանութեան — ասենք՝ մեզ, դաշնակցականներին), թուրքիան ապա-
հոված կը զգայ իրան ու աւելի զիջող կը լինի սահմանային վէճերում,
կը համաձայնի վերադարձնել մեզ ոչ միայն Ղարսն ու Սուրմալին, այլ
գուցէ աւելացնի վրան նաեւ Բասէնն ու Ալաշկերտը...

Վայել է քաղաքական կուսակցութեան այսպիսի МАНИЛОВЩИНА:

Թէ թուրքերը վախ ունեն Ռուսաստանից, նախատեսնում են ընդ-
հարումներ ապագայում (գուցէ եւ ոչ հեռաւոր) ու ամէն կերպ կ'աշ-
խատեն ամուր պահել իրանց սահմանները (օրինակ՝ պահել իրանց ձե-
ռում Ղարսը) — դրա վրայ ես չեմ կասկածում: Ի՛նչ աւելի չեմ կաս-
կածում, որ Ռուսաստանից անջատւած Հայաստանը ոչ մի երկիր չի
ներշնչի թուրքիային:

Բայց — հարցնում եմ — ինչո՞ւ համար թուրքերը հողային զի-
ջումներ պիտի անեն այդ անվտանգ Հայաստանին:

Ե՞րբ եւ որ պետութիւնը այդպիսի մեծահոգութիւն է ցոյց տւել
իր թոյլ հարեւանի հանդէպ, որ մենք իրաւունք ունենայինք թուրքերից
սպասել այդ: Ինչո՞ւ համար, ինչի՞ց ստիպւած կամ ինչի՞ց զրգւած
թուրքը պիտի վերադարձնի մեզ Ղարսը: Աւելի հաւանական է՞, որ
երբ իր դէմը չունենայ այլ եւս ռուսական բանակը, ձգտի միանալու՝
Հայաստանի վրայով՝ ազգակից ու կրօնակից Ազրբէյջանի հետ, այսինքն՝
ձգտի նոր նւաճումների եւ ոչ զիջումների...

Սեր սահմանների ընդլայնացման խնդիրը կարելի է լուծել միմիայն
Ռուսաստանի վրայ յենւած, որովհետեւ միակ Ռուսաստանը կարող է
ստիպել թուրքերին ետ քաշւել եւ սա միակ գործնական միջոցն է

հողեր գրաւելու համար. մնացածը միամտութիւն է կամ ինքնախաբէութիւն: Այսինքն՝ այստեղ եւս եթէ կայ որ եւ է յոյս — դարձեալ բօլշեւիկների վրայ է եւ Հ. Յ. Գաշնակցութիւնը բան չունի անելու:

Բօլշեւիկների, ասում եմ, որովհետեւ խօսքս այսօրւայ մասին է եւ ոչ անյայտ ու անորոշ ապագայի մասին:

Իսկ դու մասնաւորապէս շեշտում ես այդ անյայտ ու անորոշ ապագայի վրայ ու այդտեղ կենդրոնացնում քո արգելմանտացիայի ծանրութիւնը:

Ներկայ դրութիւնը կարող է փոխւել, ասում ես դու: Ռուսները կարող են թողնել մի օր Հայաստան ու տուն վերադառնալ՝ իրանց սեփական գործերը կարգաւորելու՝ ինչպէս արին 18 թւականին: Արող են նորից թողնել մեզ երես առ երես թուրքերի դէմ ու նորից հարկադրել մի ընդհանուր լեզու գտնելու նրանց հետ... եւ ահա այդ օրւայ համար է, ասում ես, որ Գաշնակցութիւնը պէտք է պահի իր գոյութիւնը:

Ե՞րբ է գալու այդ օրը եւ գալու է արդեօք երբ եւ իցէ: Այդ մենք չը գիտենք — ոչ ես, ոչ դու: Գիտենք միայն, որ այսօր — այդ օրը չէ:

Հարցնում եմ քեզ. կարո՞ղ է մի քաղաքական կուսակցութիւն պահել իր գոյութիւնը մի անյայտ ապագայի համար, երբ ներկայում բան չունի անելու... չէ՞ որ այսօրւայ անգործունէութիւնը արդէն սպաննելու է իրան, առանց գործի ի՞նչ գոյութիւն:

Յետոյ՝ ո՞վ քեզ ասաւ, թէ քո նախատեսած դէպքում Հ. Յ. Գաշնակցութիւնն է փրկելու Հայաստան:

Երեւակայիւր, թէ օրը եկել է արդէն. ռուսներ չկան, թուրքերը տէր են դրութեան, անհրաժեշտ է հասկացողութեան գալ նրանց հետ, անուշի կապել: Վստահ ես, որ մենք՝ իրրեւ կուսակցութիւն՝ ձեռնահաս դերակատարներ ենք այդ դերի համար:

Ի՞նչ նկատումներով թուրքերի աչքում մենք հաճելի կամ ընդունելի բանախօսներ պիտի լինենք:

Որովհետեւ խո՞ւմ ենք եղել բօլշեւիկների հետ... բայց չէ՞ որ մենք խոտով ենք եղել այն ժամանակ, երբ իրանք թուրքերը բարեկամ են եղել բօլշեւիկներին, վարել են նրանց հետ ընդհանուր քաղաքականութիւն: Մենք ըմբոստացել ենք բօլշեւիկների դէմ, երբ նրանք դաշն են կապել թուրքերի հետ Բրէստ-Լիտովսկում եւ այդ դաշնը

քանդելու համար պատերազմել ենք մենք: Չէ՞ որ հակառակ ենք եղել բօլշեւիկներին ո՛չ թէ թուրքերին սիրելու պատճառով, այլ որովհետեւ թուրքերին ու բօլշեւիկներին հակառակ բանակումն ենք եղել, Մետանտի հետ: Չէ՞ որ մենք ենք եղել, որ պահանջել ենք թիւրքիայից «ծովից-ծով» Հայաստան — եւ Ալիկկիա, եւ խարբերդ, եւ Սփաղ, եւ Տրապիզոն: Չէ՞ որ մենք ենք եղել, որ ստորագրել ենք Սեւրի դաշնագիրը — մի դաշնագիր, որ գալիս էր կտրելու թուրքերի գլուխը: Չէ՞ որ մենք ենք եղել, որ կոչ ենք արել Եւրոպային ու Ամերիկային՝ բանակներ բերել թիւրքիա ու հաստատել մեր իշխանութիւնը այն երկիրներում, որ թուրքերը անվիճելիօրէն իրանցն են համարում: Աւերջապէս, չէ՞ որ մենք ենք եղել, որ մեր գոյութեան ամբողջ ընթացքում անընդհատ կուռել ենք թուրքերի դէմ...

Ի՞նչ վստահութիւն կարող ենք մենք ներշնչել թուրքերին, ինչո՞ւ նրանք աւելի պիտի սիրեն բանակցել մեզ հետ, քան որ եւ է ուրիշի հետ:

Թերեւս հաշի առնելով մեր ոյժը...

Բայց թուրքերը տեսան արդէն այդ ոյժը իր գազաթնակէտին — այն ժամանակ, երբ մենք մեր երկրի տէրն էինք — եւ՛ կարծում եմ՝ պատկառելու առանձին պատճառներ չունեն:

Եթէ մենք ուրիշ ոչ մի մտահոգութիւն չունենայինք, բացի թուրքերի հետ հասկացողութեան գալու անհրաժեշտութիւնը — այդ մէկը բաւական էր արդէն, որ ասէինք թէ Գաշնակցութիւնը պիտի վերանայ ասպարէզից: Երբ ինքը թիւրքիան հարկադրւեցաւ հրաժարւել Գերմանիայից ու համաձայնութեան եղը որոնել Մետանտի հետ, նա ամենից առաջ կազմալուծեց Խմբիհատը:

Բնականօրէն կը հարցնես. բօլշեւիկները չկան, Գաշնակցութիւնը չկայ. հապա ո՞վ պիտի խօսի թուրքերի հետ...

Դա տարբեր ինդիք է, որին կը վերադառնամ ու թերեւս կարողանամ բաւարար պատասխան տալ: Առ այժմ՝ կարեւոր է միայն հաստատել, որ՝ յամենայն դէպս՝ Գաշնակցութիւնը չէ որ պիտի խօսի թուրքերի հետ:

Անակցութիւն միւս հարեւանների, վրացիների ու ազրբէյջանցիների հետ...

Ասում ես, որ այդ կենսակցութեան խնդիրը լուծելու համար հարկաւոր է դաշնակցութեան գոյութիւնը:

Բայց, սիրելի NN, դու մոռանում ես, որ այդ կենսակցութիւնը կայ արդէն Անդրկովկասեան պետութիւնների մէջ — ոչ միայն խաղաղ կենսակցութիւն, այլ նոյն իսկ շատ սերտ դաշնակցութիւն:

Ա՛սես, որ Մոսկւայի վախն է, որ պահում է ներկայ modusը...

Թող այդպէս լինի: Փաստն այն է, որ հայ, թաթար ու վրացի բուլեւիները յաջողեցրին այն, ինչ չը կարողացանք անել մենք, դաշնակցականներս, մենչեւիկներն ու մուսաւաթականները:

Համաձայնիր, որ դրութիւնը Անդրկովկասում՝ դրացիական համակենսակցութեան տեսակէտից՝ այսօր շատ աւելի լաւ է (կամ շատ պակաս վատ), քան էր մեր ժամանակ: Մարդիկ այլեւս չեն մորթոտում իրար, չեն աւերում գիւղերն ու քաղաքները, չեն մնում օր-գիշեր զէնքի տակ. մարդիկ ազատօրէն գնում — գալիս են, անցնում են սահմանները, առեւտուր են անում, գուցէ եւ քէֆի են նստում իրար հետ...

Ինչո՞ւ այդպիսի վիճակ չկարողացանք ստեղծել մենք: Չէինք ուղում, չէինք հասկանում անհրաժեշտութիւնը: Հասկանում էինք, ուղում էինք ու շատ էլ աշխատեցինք — անկեղծօրէն աշխատեցինք — բայց յաջողութիւն չունեցանք:

Ինչո՞ւ չկարողացանք եւ ի՞նչ երաշխիք, թէ ապագայում աւելի շնորհալի կը լինենք, քան էինք անցեալում:

Այն վէճեր, որ մենք՝ անդրկովկասցիներս՝ փոխադարձ համաձայնութեամբ, առանց դրսի միջամտութեան, չենք կարողացել ու այսօր էլ չենք կարողանում լուծել (յիշիր մեր արտասահմանեան բանակցութիւնները...):

Արաստան ուղում է ապահովեցնել իր գերիշխող դիրքը Անդրկովկասում, ձգտում է ամբողջացնել իր “պատմական” կռուած սահմանները, չի ուղում հրաժարուել ոչ միայն Ախալքալաքից ու Արգահանից, այլ նաեւ Լոռիից — դեռ փամբակի վրայ էլ աչք ունի: Ազրբեյջանը բնականօրէն ուղում է մերձանալ, կապել թիւրքիայի հետ. տնտեսական ու ռազմագիտական նկատումներով չի կարող հրաժարուել հայկական Ղարաբաղից, իսկ ազգային նկատումներով՝ Շարուր. Նախիջևանից: Հայաստան, որ ամենից համեստն է (որովհետեւ ամենից թոյլն է), այնու ամենայնիւ պիտի ապահովի մի minimum minimorum՝ իր

պետական գոյութիւնը կարելի անելու համար. նա չի կարող պարփակել երեք ու կէս գաւառի մէջ (Երեւան, Կոր-Քայաղիզ, Իջմիածին ու Շիրակի կէսը). եթէ հրաժարւի Ախալքալաքից յօգուտ վրացիներին, Լօռին այնու ամենայնիւ պիտի պահանջի իրան. եթէ հրաժարւի լեռնային Ղարաբաղից յօգուտ Ազրբէյջանի, Շարուրն ու Կախիշեւանը այնու ամենայնիւ պիտի պահանջի իրան. եթէ յօգուտ յաղթական Թիւրքիային հրաժարւի Ղարսից, այնու ամենայնիւ չի կարող հրաժարւել Սուրմալուից ու Վաղղւանից... Յետոյ՝ Հայաստան ելք չունի դէպի լոյս աշխարհ. Եւրոպայի հետ նա պիտի հաղորդակցի Վրաստանի վրայով, ուրեմն Վրաստան պիտի տայ նրան եթէ ոչ տերրիտորիալ ելք, գոնէ լրջօրէն ապահոված տրանզիտ:

Բայց ոչ Թիւրքիան, ոչ Վրաստանը, ոչ Ազրբէյջանը չեն համաձայնում բաւարարել հայերին՝ նոյն իսկ այդ minimal չափերով:

Ի՞նչ երաշխիք, որ եթէ վաղը հաւաքւենք մի կանաչ սեղանի շուրջ մենք, դաշնակցականներս, անգորացիներ, վրացի մենշեւիկներ, ու թաւթար մոսաւաթականների հետ — աւելի զիջող ու խոհեմ կը լինենք, քան էինք 1918ին, 19ին, 20ին ու մինչեւ այսօր էլ — նոյն իսկ այստեղ, արտասահմանում, ուր միայն պարապ, զուտ տեսական զրոյցներ կարող ենք անել...

Յաւաքի ու ամօթալի է, բայց փաստն այն է, որ մենք դեռ չենք հասունացած մեր վէճերը ինքներս հարթելու համար, որ դեռ եւս հարկաւոր է մի դրսի ոյժ, մի արտաքին հեղինակութիւն՝ Անդրկովկասում միջազգային խաղաղութիւն ապահովելու համար:

Այսօր այդ արտաքին ոյժը՝ Խորհրդային Մոսկւան է:

Մի բան շահած կը լինենք մենք, հայերս, եթէ Մոսկւային փոխարինէ Անգորան:

Իս հասկանում եմ վրացի մենշեւիկներին, աւելի եւս հասկանում եմ ազրբէյջանցի մոսաւաթականներին, երբ նրանք պահանջում են, որ կարմիր բանակը քաշւի Անդրկովկասից: Կրանք ինձ չափ խելք ունենի հարկէ ու գիտեն, որ այդպիսի դէպքում խօսքը պատկանելու է Թիւրքիային: Գիտեն, բայց չեն վախենում — պատճառ չունեն վախենալու:

Ազգայնական Ազրբէյջանի համար՝ թուրքական հեգեմոնիան Անդրկովկասում ամենից ցանկալի բանն է, ամենից հրապուրիչ հեռանկարը: Վրաստանը՝ թերեւս հրաժարւելով Զաքաթալից յօգուտ Ազրբէյջանի

ու Աջարիայից յօգուտ Թիւրքիայի, բայց միաժամանակ կըրացնելով իր սահմանները Հայաստանի հաշին՝ կարող է մի շատ կոկիկ պետութիւն կազմել եւ՝ շնորհիւ յաջող աշխարհագրական դիրքի, յենւած լեռներին ու ծովին, ազգայնօրէն ամփոփւած իր մէջ՝ կարող է ապրել ու զարգանալ Թիւրքիայի կողքին, առանց սրան վնասելու կամ նեղելու, հետեւապէս եւ առանց լրջօրէն վտանգւած լինելու:

Իսկ Հայաստան: Կարելի է ասել նոյնը եւ Հայաստանի մասին, որ խրւած է Աղբրէյանի ու Թիւրքիայի միջեւ, խանգարում է թէ՛ մէկին, թէ՛ միւսին եւ որ այնքան հեշտութեամբ կարող է վերացուել մէջտեղից...

Գիտե՞ս ինչ է. այն օրը, երբ կարմիր բանակը՝ հեռանայ Անդրկովկասից ու մենք մնանք մենակ (մենակ, որովհետեւ ռուսներին փոխարինող ոյժ ես չեմ տեսնում մեր հորիզոնների վրայ) թուրք-թաթար-վրացական բլօքի հանդէպ — այն օր Հայաստանի գոյութիւնը վտանգւած կը լինի մեծապէս:

Ահա թէ ինչու ես ուզում եմ, որ Հայաստան պինդ բռնի բռնչելիկների փէշից (այնքան ժամանակ, ի հարկէ, որքան բռնչելիկները իշխում են Ռուսաստանում):

Բայց դու ասում ես, որ ներկայ դրութիւնը կարող է փոխել հակառակ մեր ցանկութեան. բռնչելիկների իշխանութիւնը կարող է խորտակուել Ռուսաստանում կամ բռնչելիկները՝ ինչ-ինչ պատճառներով՝ կարող են լքել Անդրկովկասը:

Կարող է պատահել եւ այդ: Ու մենք չենք, ի հարկէ, որ պիտի յաւերժացնենք բռնչելիկների գոյութիւնը, որքան էլ ցանկանանք:

Բայց, կրկնում եմ. այդ դէպքումն էլ Գաշնակցութիւնը անկարող պիտի լինի ներկայացնել Հայաստան ու փրկել դրութիւնը: Հարկաւոր կը լինեն ուրիշ մարդիկ — ուրիշ անունով, ուրիշ հոգեբանութիւնով, ուրիշ անցեալով (կամ առանց անցեալի):

—

Երկարացնում եմ նամակս. բայց այնքան բան ունեմ ասելու...

Գրում ես. «այդպէս չենք մտածել մենք Թիֆլիսում, Երեւանում, Զանգեզուրում ու նոյն իսկ Թաւրիզում»:

Այո՛, այդպէս չենք մտածել: Բայց մի թէ դա պատճառ է, որ այդ-

պէս չը մտածենք նաեւ այսօր՝ Պարիզում ու Բուքրէշտում: Մի եւս նայիր ու տես, թէ ինչ երկար ծամբայ ենք անցել, մինչեւ Թիֆլիսից Երեւան ենք եկել, Երեւանից՝ Զանգեզուր, Զանգեզուրից՝ Թաւրիզ ու Թաւրիզից... չը գիտեմ ուր հասել:

Այդ երկար ծամբան մի բան պիտի սովորացնէր մեզ, թէ ոչ:

Թեթեւամտութիւն կամ փոփոխամտութիւն է արդեօք՝ խրատել, դասեր առնել անցեալից, ծանաչել իրականութիւնը ու ըստ այնմ վարել: Եւ առաքինութիւն է, թէ ուրիշ բան՝ ասել, թէ այսօր իրաւունք չունենք այսպէս մտածելու, որովհետեւ Երեւանում կամ Զանգեզուրում այլ կերպ ենք մտածել...

Այդ ինչ անձեռնմխելի ու սրբազան արժէք է մեր «մտածած»-ը, որ չի կարող վերագնահատուել կամ տեղի տալ նոր մտածումների:

Բայց ո՞րն է այն «նորը», իմ մտածումների մէջ, որ այդ աստիճան վրդովեցրել է ձեզ. իսկապէս որ նա նոր է ու հակառակ հինին:

Թերեւս ինքնախաբէութիւն է սա, մտքի տկարութիւն կամ անգիտակցական կեղծիք. բայց ճշմարտութիւնն այն է, որ ես՝ իմ վերաբերմամբ ու ինձ համար՝ այդ «նորը», այդ «այլը» չեմ տեսնում: Ես ունեմ այն հաստատ գիտակցութիւնը, թէ այսօր մտածում եմ — խօսքս հիմնական մտածումի մասին է — ճիշտ այնպէս, ինչպէս մտածել եմ 1920 թականին, 18ին, 14ին ու իմ ամբողջ կեանքը: Այն հիմնական միտքը, որ ղեկավարել է ինձ երկար տարիների ընթացքում, ղեկավարում է եւ այսօր: Ես չունիմ նոր պաշտամունք, չեմ կառուցել նոր կուռքեր, մնում եմ հաւատարիմ իմ դաւանած հին աստուածներին: Այն, որ «նոր» է թուում քեզ, ինձ համար նոյն «հինն» է, հինի շարունակութիւնն ու զարգացումը:

Ինձ արդարացնելու համար չէ, որ շարադրում եմ այս տողերը: Մեղք բան չէ, եւ ոչ էլ ամօթալի, եթէ մէկը՝ բարեխղճօրէն ու անկեղծօրէն վերաքննելով իր հաւատը՝ տեսնում է, որ սնահաւատութիւն է եղել այն, որ իր պաշտած աստուածները՝ անկենդան կուռքեր են եղել միայն ու գնում է երկրպագելու նոր աստուածներին:

Եթէ ինձ հետ պատահէր այդպիսի մի բան, ես իսկի չէի վախենայ կրօնափոխի անունից ու բացայայտօրէն կ'երթայի աղօթելու իմ նոր եկեղեցում: Բայց եկեղեցին չէ, որ ես փոխում եմ այսօր, այլ միայն քահանան ու ժամկոչը, որ եկեղեցու պարզ սպասաւորներ են եւ ուրիշ ոչինչ:

Ի՞նչ եմ ասում ես:

Ասում եմ. Հ. Յ. Դաշնակցութիւնը այլ եւս անդոր ու անպէտք գործիք է իր կեանքի դատը՝ հայ ժողովրդի քաղաքական ազատագրութեան գործը վարելու համար. նա պէտք է վերանայ ասպարէզից ու տեղ տայ հայ բոլորեւթեանը, որոնք միակ ներկայ պայմանների մէջ՝ կարող են շարունակել նոյն գործը ու արդէն անում են այդ:

Այսպէս մտածելով ու այսպիսի առաջարկ անելով, դաւաճանում եմ ես ինձ, իմ անցեալը:

Ոչ, չեմ դաւաճանում: Դաւաճանում էք դո՛ք, որովհետեւ գործիքը սիրում էք աւելի, քան գործը:

Ասուած հեռու պահէ ինձ այն մտքից, թէ դուք անում էք այդ գիտակցօրէն: Ոչ իրաւունք ունեմ, ոչ էլ պատճառ — մի հեռաւոր կասկած անգամ ունենալու ձեր բարի ցանկութիւնների մասին: Բայց փաստը մնում է փաստ:

Գործիր մոռանալ մի բոպէ, թէ այս խօսքերը՝ խենթացած ծերուկի զառանցանքներ են (չէ՞ որ այդպիսի ենթագրութիւններով հարցերը չեն լուծուում, այլ միայն փակուում են բռնօրէն) ու մի անգամ էլ մտածիր... Թերեւս տեսնես, որ իմ ասածը այնքան էլ հեռու չէ ճշմարտութիւնից:

Երիտասարդ ընկերներ, գիտէ՞ք որ յաճախ թւում է ինձ, թէ ձեր մէջ մենակ ես եմ մնացել երիտասարդ, իսկ դուք բոլորդ վաղաժամ ծերեր էք, ծերութեան sclérose-ը քարացրել է ձեր միտքը...

Հարցնում ես. «անկախ Հայաստանը ցնորք ու խելագարութիւն է արդեօք?»

Ոչ ցնորք, ոչ խելագարութիւն, այլ շատ առողջ, առաջադիմական, կենսունակ ու կենսատու գաղափար, մի հասունացած պահանջ, որ իրականանալու է անխուսափելիօրէն ու արդէն իսկ իրականացած է խոշոր չափերով:

Բառերով չը խաղանք:

«Անկախութիւն» ասածը մի absolu չէ, որ արժէք ունի միայն որոշ ձեւերի մէջ ու ամբողջական չափերով, իսկ դրանից դուրս՝ զերօ է: Եթէ պահանջներ absolu-ն, դա իրաւ որ խելագարութիւն կը լինի:

Հայաստանը Անգլիա չէ, ոչ իսկ Զուիցերիա — չէ ու չի կարող լինել (այսօրւայ մեր մտքի համար մատչելի ապագայում)։ Նրա անկախութիւնը անհրաժեշտօրէն պայմանաւորւած պիտի լինի որոշ սահմանափակումներով։ Մեր գործն է՝ գնալ այդ ճամբով այնքան հեռու, որքան թոյլ են տալիս արտաքին պայմաններն ու մեր սեփական կարողութեան չափը օգտագործել բոլոր հնարաւորութիւնները, ասպարէզ տալ բոլոր ոյժերին եւ՝ յամենայն դէպս՝ խոչնդոտ չը հանդիսանալ, եթէ մէկը դալիս է անելու այն, ինչ որ չենք կարողացել ու չենք կարողանում անել ինքներս։ Բօլշեւիկները զրկեցին մեր հայրենիքը անկախութիւնից, նորից կապեցին Ռուսաստանի հետ...

Իրօք այդպէս է, թէ՛ հակառակը՝ կապելով մեզ Ռուսաստանի հետ, բօլշեւիկները ապահովեցին անկախութեան այն աստիճանն ու այն ծելը, որոնք միակ հնարին են այսօրւայ պայմանների մէջ ու դրանով իսկ փրկեցին ապագան։

.

Գրում ես. բօլշեւիկները «կատարում են ոչ թէ ազգահաւաքման, այլ ազգացրման աշխատանք»։

Ժիշտն ասած, ես չը գիտեմ, թէ ի՞նչ ազգացրման գործ են կատարել բօլշեւիկները, բացի այն, որ մեզ՝ մի քանի հարիւր դաշնակցականներիս՝ դուրս են ձգել հայրենիքից ու դռները փակել առաջներս. համաձայնիր, սակայն, որ սա դեռ «ազգացրում» չէ։

Ժիշտ է, որ բօլշեւիկները չեն «հաւաքում», ազգը։

Իսկ եթէ մենք մնացած լինէինք նրանց տեղը, կը հաւաքէի՞նք։

Հայաստանի սահմանների նեղութիւնը ու տնտեսական վիճակը թոյլ չեն տալիս ներգաղթ — ահա հիմնական արգելքը «ազգահաւաքման» գործի համար։

Բօլշեւիկները չը կարողացան (ասենք՝ չը ցանկացան) ոչ սահմանները լայնացնել, ոչ էլ զգալիօրէն բարելաւել երկրի տնտեսական վիճակը — այդ ժիշտ է։

Իսկ մենք կը կարողանայի՞նք, մեր բոլոր ցանկութիւններով հանդերձ։

Բօլշեւիկները եթէ չընդլայնացրին սահմանները, գոնէ պաշտպան կանգնեցին եղածին: Իսկ ինչ վերաբերում է տնտեսական վիճակին, իմ ունեցած հատ ու կտոր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ դրութիւնը այսօր այնու ամենայնիւ մի քիչ պակաս վատ է, քան եղել է մեր ժամանակ:

Բօլշեւիկների տնտեսական սխտեմը՝ մասնաւոր սեփականութեան իրաւունքի բացասումը՝ անվիճելիօրէն կործանարար է այսօրւայ Հայաստանի համար. եւ սա՝ կուսակցական դիկտատուրայի հետ միասին՝ ներկայ կացութեան սեւ երեսն է: Բայց չէ՞ որ դրա փոխարէն բօլշեւիկները խաղաղեցրին երկիրը, աղատեցին աշխատաւոր ձեռները շինարարութեան համար... բայց սրա մասին գրել եմ արդէն:

Բօլշեւիկեան սխտեմը չի կարող վերաշինել մեր աւեր երկիրը, ապահովել նրա տնտեսական զարգացումը:

Բայց սա պատճառ չէ, որ չընդունենք Խորհրդային իշխանութեան կարեւորութիւնն ու օգտակարութիւնը, քանի որ կան ուրիշ վտանգներ, ուրիշ սպառնալիքներ, որոնք շատ աւելի մեծ են, քան սօցիալիստական կարգեր հաստատելու վաղաժամ ու անյաջող փորձերի վտանգը:

Արդէն երկու անգամ ընդհատել եմ նամակս ու երկու անգամ վերսկսել: Նկատում եմ, որ կրկնութիւնների մէջ եմ ընկնում: Բայց լինչպէս անեմ, եթէ դու ինքդ մոռացութեան մէջ ես ընկնում ու կրկին վերադառնում արդէն ծեծւած հարցերին...

Հարունակում եմ:

“Պէտք է ողջունել այն երեւոյթը — գրում ես դու, ու վերջապէս մեր կեանքումն էլ առաջ է գալիս քաղաքական լուրջ շերտաւորում, ստեղծւում են տարբեր ուղղութիւններ:”

Եթէ յիշում ես, նոյն այդ պահանջը դնում էի ես, երբ Հ. Յ. Գաշնակցութիւնը միահեծան տէրն էր դրութեան, աշխատում էի համոզել կուսակցական յաղթանակներով արբածներին, թէ ո՞րքան վտանգաւոր բան է դա երկրի ու հէնց իրան՝ կուսակցութեան համար:

Այո՛, շերտաւորումներ պէտք են: Բայց երկու պայմանով:

Առաջին. շերտաւորումները պէտք է բղխեն կեանքի պահանջներից,

Համապատասխանեն իրական դրութեան, գան լրացնելու ո եւ է հասու-
նացած ու լուրջ կարիք: Բօլշեւիկեան շերտաւորումը կամ՝ աւելի ճիշտ՝
равнение фронта по большевизму — կենսական կարիք է այսօր
ու պէտք է որ գոյութիւն ունենայ: Այո՛ւր չենք կարող ասել մեր մասին.
Գաշնակցութիւնը (իբրեւ կազմակերպութիւն, լաւ հասկացիր խօսքս)
անցեալի մնացորդ է, մի աւելորդ օրգան, որին կարիք չունի այլեւս օր-
գանիդմը: Այն կարիքը, որ մատնանիշ ես անում դու, իրական կարիք
չէ, այլ սոսկ ենթադրութիւն: Դսկ մի քաղաքական կուսակցութիւն չի
կարող արգարացնել իր գոյութիւնը ներկայում՝ ենթադրեալ ապա-
գայում գործելու համար. երբ գործը գայ, հանդէս կը գան նաեւ գոր-
ծողներ: Յետոյ՝ Գաշնակցութիւնը չի կարող լրացնել քո ենթադրած
կարիքը, չի կարող ներկայացնել Թուրքօֆիլական ուղղութիւն... բայց
սրա մասին գրել եմ արդէն:

Երկրորդ. շերտաւորումը պէտք է լինի երկրի ներսը եւ ո՛չ երկրից
դուրս: Գրսի ոյժերը, լաւագոյն դէպքում, կարող են միայն օժանդա-
կել, բայց ոչ երբեք՝ ղեկավարել երկրի գործերը: Դու ինքդ հակառակ
ես գաղութային կուսակցութիւնների. միայն չես ուզում տեսնել, որ
ուրիշ ապագայ չունի Գաշնակցութիւնը, որ նա արդէն գաղութ-
ային է:

Այստեղ ես հանդիպում եմ մի շատ լուրջ դժուարութեան:

Դու իրաւացիօրէն հարցնում ես ինձ. ի՞նչ «օբիեկտիւ տւեալներ»
ունեմ ես պնդելու, թէ Գաշնակցութիւնը մեռած է երկրում: Ես
կտրւած եմ երկրից, տեղեկութիւն չունեմ, թէ ի՞նչ է կատարում
այնտեղ: Դու ասում ես, որ տեղեկութիւններ ունես, ունես նոյն իսկ...
ամերիկացի Մ-ի վկայութիւնը:

Քո դիրքը շատ աւելի ուժեղ է, քան իմը եւ իրաւունք է տալիս
քեզ ասելու, որ ես ուզում եմ «մեր հիւանդ էմիգրանտական ապրում-
ները փաթածել ժողովուրդի գլխին...»

Ճշմարիտն եմ ասում քեզ, շատ լուրջ ուշադրութեան առնում
եմ այս հանգամանքը եւ կրկին ու կրկին հարց եմ տալիս ինձ. չը լինի՞
թէ իրօք իմ մտածումները «վերացական սիլոգիզմներ», են միայն, իսկ
կեանքը բոլորովին տարբեր թելադրութիւններ է անում:

Որոնում եմ եւ ուզում եմ գտնել իմ սխալը, բայց չեմ գտնում:

Գիտե՞ս ինչ. ես չեմ հաւատում քո ունեցած տեղեկութիւն-

ներին, նրանց լրջութեանն ու օրինակութեանը: Իսկ Մ-ի վկայութիւնը համարում եմ միանգամայն անարժէք, ինչպէս անարժէք են բոլոր знатный иностранецների անպատասխանատու խօսքերը, վայրիվերոյ, պատահական տպաւորութիւնները:

Ինչո՞ւ չեմ հաւատում:

Որովհետեւ այդ տեղեկութիւնները հակասում են իմ գիտցածին ու տեսածին, հակասում են իրերի դրութեան ու տրամաբանութեան: Ես տեսել եմ մեր կուսակցութիւնը Հայաստանում, երբ մենք դեռ այնտեղ էինք. տեսել եմ մեր երկար ճամբին — Պարսկաստանում, Եգիպտոսում, Պոլսում. տեսնում եմ այստեղ, Բալքաններում. ներկայ եմ եղել ու հետեւել զանազան ժողովների, խօսակցութիւնների եւ ունեցել անհատ ընկերների հետ, կարգում եմ մամուլը... եւ եզրակացութիւններս միշտ նոյնն են. կուսակցութիւն չկայ այլեւս: Կան միայն նախկին կազմակերպութեան բնկորներ, որ ինքնուրույն ոյժով շարունակում են կրել զանազան անուններ ու իրար թղթեր գրել: Բայ՞ կեանք չկայ, որովհետեւ չկայ զործ, չկայ հաւատ ու ոգեւորութիւն:

Եւ ես չեմ զարմանում, որ այդպէս է, որովհետեւ տեսնում եմ ու հասկանում պատճառները:

Հակառակէն հաւատալու համար ես փաստ պիտի ունենամ, դրական ու շօշափելի. քո ստացած տեղեկութիւնները համոզեցուցիչ չեն ինձ համար, որովհետեւ գիտեմ, թէ որքան անձեռնհաս են տեղեկատուները՝ իրականութիւնը ճշտօրէն ըմբռնելու եւ ճշտօրէն արձանագրելու համար:

Փաստերը — իսկական, անհերքելի փաստերը — բոլորովին այլ բան չեն ասում:

Հետեւիր, վերլուծիր թէ ինչ փոխարարերութիւններ են ստեղծւած դաշնակցական պատասխանատու ընկերների, մարմինների ու խմբակների միջեւ եւ ապա ասա ինձ, այդ փոխադարձ անպատահութեան, անհաւանութեան, կասկածների ու մեղադրանքների միմեկորտում կարող է ապրել կուսակցութիւնը... Մի ասիր, թէ սա գաղութային երեւոյթ է միայն, — ո՛չ, երկրումն էլ նոյնն էր. այն օրւանից, երբ մենք իշխանութեան գլուխն անցանք, կուսակցական միմեկորտը թռնաւորեց:

Յիշիր, որ երկու տարի աշխատեցանք ու չկարողացանք գումարել՝

քեզ յայտնի պատճառներով՝ ընդհանուր ժողով, որին այնքան կարելի
ուներ կուսակցութիւնը. այս անկարողութիւնն ու նրա պատճառները —
ապացոյց են արդէն, որ կուսակցութիւն չկայ այլեւս:

Իսկ ամենից պերճախօս ապացոյցը գիտե՞ս որն է: Խորհրդաժողով-
ւում ընդունած բանաձեւերը: Մի միայն օտի տակ հողը կորցրած կու-
սակցութիւնը կարող էր հանել այդպիսի անբովանդակ, հակասական,
ոչինչ չասող, ոչինչ չը պարտադրող ու ամէն բան պարունակող որո-
շումներ: Գործ ծրագրող ու գործի ընդունակ կուսակցութիւնը այդ-
պիսի որոշումներ չէր հանի: Որոշումները ցոյց են տալիս, որ կուսակցու-
թիւնը չը գիտէ իր անելիքը, չունի անելիք եւ զուր փորձեր է անում՝
բառայի՞նք ֆորմուլների տակ քողարկել իր անկենդանութիւնը:

Այսօրւայ իրականութեան մէջ մի բան միայն կարող էր փրկել
Գաշնակցութիւնը, կռիւ բօլշեւիզմի դէմ, կռիւ անվերապահ, ամէն
տեղ, ամէն միջոցներով, ամէն կարգի զէնքերով... Բայց որովհետեւ
Գաշնակցութիւնը չի կարող — ու եթէ կարողանար էլ՝ չը պիտի անէ
այդ, նրան մնում է մի բան միայն, մեռնել:

Իսկ ասել. “նկատի առնելով որ .. ու ապա նկատի առնելով...
բայց որովհետեւ... ու քանի որ... ուստի ո՛չ այս, ոչ այն... կամ” եւ
այս, եւ այն”... այսպիսի բանաձեւերով կուսակցութիւնները չեն
ապրում:

Սա նոյնպէս “դամբանական” է, միայն թէ զուրկ շխտկութիւնից
ու տղամարդութիւնից:

Գրում ես. Խորհրդաժողովը իրաւունք չունի լուծելու կուսակցու-
թիւնը... Ի հարկէ, չունի: Բայց չէ՞ որ ես նկատի եմ առել այդ կա-
րեւոր հանգամանքը ու զեկուցագիրս վերջացրել եմ այնպիսի առա-
ջարկներով, որոնք Խորհրդաժողովի իրաւասութեան սահմաններից դուրս
չեն գալիս... Չեմ ուզում կրկնել: Կարդա զեկուցագիրս վերջի էջերը,
եթէ հետաքրքրում ես:

Գրում ես.

“Չեմ հերքում — կարող է գալ մի ժամանակ, երբ աշխարհը
խաղաղի եւ մի առ ժամանակի համար մեր հարցն էլ փակւի, այդ դէպ-

քում գուցե եւ անհրաժեշտ լինի հետեւել քո բռնած ճանապարհին, իսկ այսօր գեռ շուտ է:»

Գիտե՞ս որ այս մի քանի տողով դու արդէն թափեցիր զէնքերդ ու անձնատուր եղար...

Աշխարհը գեռ չի խաղաղել (ու երբեք էլ չի խաղաղի), բայց «մի առ ժամանակի համար մեր հարցը» փակւած է ու մեր օրը եկել է արդէն — ահա՛ իրականութիւնը:

Գրում ես.

«Ես կ'ուզէի, որ զեկուցումդ շուտ մոռացւէր, եթէ կարելի չէր եղել նրա ընթերցման առաջն առնել: Եւ միանգամայն աւելորդ ու փնասակար եմ համարում, որ այդ հարցը դարձւի դիսկուսիայի առարկայ...»

Ինչո՞ւ այդպէս, ո՞ւմ են պէտք այդ զգուշութիւնները, ո՞ւմ համար է այդ մտքի diète...

Ինչո՞ւ «աւելորդ ու փնասակար» կը լինէր, եթէ կուսակցական շարքերը ծանօթանային իմ զեկուցման հետ: Այդ ո՞ր օրւանից Գաշնակցութիւնը դառել է այդքան մտավախ: Ինչի՞ համար փակում էք մի ընկերոջ բերանը եւ միւս ընկերների ականջները...

Եթէ իմ ասածները՝ ad hominem շարժառիթների արդիւնք են, կամ հիւանդ ուղեղի զառանցանք, կամ վերացական սխլօգիլմներ, զուրկ կենսական հիմնաւորումներից — թողէ՛ք որ ընկերները տեսնեն այդ: Իսկ եթէ ընկերները այնքան միամիտ ու կարճատես են, որ թերեւս չը տեսնեն իմ սխալը — դու հօ այդտեղ ես, դո՛ւ հօ կարող ես բանալ աչքերը, ցոյց տալ ճշմարտութիւնը...

Դա ոչ միայն չէր լինի «աւելորդ ու փնասակար», այլ՝ ընդհակառակը՝ կը լինէր շատ կարեւոր ու շատ օգտակար գործ:

Կարո՞ղ ես ասել, որ միայն ես եմ ենթակայ «էմիգրանտական հիւանդ ապրումների», ու բացի ինձանից ուրիշ հիւանդներ չկան կուսակցութեան մէջ: Եւ եթէ ես անբուժելի եմ, կարո՞ղ ես ասել, իրաւունք ունե՞ս ասելու, թէ նոյնքան անբուժելի են եւ միւս հիւանդները կամ՝ կէս-հիւանդները... Ինչ լաւ առիթ ու միջոց էր՝ սթափեցնելու վարակւածներին եւ предохранительную прививку անելու առողջներին (համաճարակի առաջն առնելու համար):

Ինչո՞ւ չօգտագործեցիր առիթն ու միջոցը:

Միանգամայն լուրջ եմ ասում. դու եւ քեզ պէս մտածողները ոչ միայն չը պիտի դնէիր պապանձման կնիք իմ խեղճ՝ զեկուցագրի վրայ, այլ ինքներդ պիտի կոխէիր այն ամէն մի դաշնակցականի աչքը, զօռով ստիպէիր կարգալ, ասէիր. տեսէք թէ ո՞ւր է հասել ձեր աւագ ընկերներից մէկը...

Սա կը ցնցէր կուսակցութիւնը, բողոք ու ղայրոյթ առաջ կը բերէր, կ'արթնացնէր թմրածներին, աշխատանքի կը կանչէր ծոյլերին ու անփոյթներին, եռանդ կը ներշնչէր, կը ստիպէր սեղմել շարքերը, ամրացնել — մի խօսքով՝ զօրեղ հակաթոյն կը լինէր քայքայման թոյնի դէմ, շարժման մէջ կը դնէր բոլոր կենսական potencia-ները (եթէ սրանք դեռ եւս կան կուսակցութեան մէջ):

Դուք այդ չարիք:

Ինչո՞ւ:

Որովհետեւ վախկոտներ էք, սիրելի NN, վախկոտներ:

Դուք աշխատում էք խիստ ցնեղուրայի տակ առնել որոնող մտքերը, կողպէքներ դնել բերանների վրայ, թաքցնել ասած խօսքերը, որովհետեւ վստահութիւն չունէք ձեզ վրայ:

Ղախն ու կասկածը բոյն են դրել ձեր իսկ սրտերի մէջ:

Եթէ դու իրօք համոզւած լինէիր, թէ կուսակցութիւնը կենսունակ է, երբեք վնասակար չը պիտի համարէիր իմ զեկուցումը, չը պիտի դժգոհէիր որ նա կարգացւել է խորհրդաժողովում ու չը պիտի ցանկանայիր որ մոռացւի, որքան կարելի է շուտ:

Հիմա լսիր, թէ ես ինչ եմ ասում:

Ես իմ պարտքը համարեցի գրել այն զեկուցումը — հոգուս պարտքը հանդէպ հայ դատի ու իմ կուսակցութեան: Մեծ միղք արած կը լինէի, եթէ չը գրէի: Պարտք համարեցի ներկայացնել զեկուցագիրս կուսակցութեան գերագոյն մարմնին՝ խորհրդաժողովին (քանի որ ընդհանուր ժողով անկարելի եղաւ գումարել) ու սպասել նրա որոշումներին: Որոշումը տեղի ունեցաւ. փակիր բերանդ, լսիր:

Լուծւեցաւ սրանով խնդիրը:

Ինձ համար՝ ոչ:

Այժմ մի ուրիշ պարտք ունեմ կատարելու, այն է՝ հակառակ Խորհրդաժողովի հրամանին լսելի անել իմ ծայնը:



2013

ՀՀ Ազգային գրադարան

ԲԻՅ



NL0040949

